

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻԶՆՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՎ
Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության
մոնիտորինգի միջազգային ինստիտուտի
Երևանյան մասնաճյուղ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2022

ՀՏԴ 342.8
ԳՄԴ 67.400.8
Ը 610

Աշխատանքը երաշխավորվել է տպագրության ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի կողմից

Ը 610 Ընտրական համակարգի ազդեցությունը ժողովրդաիշխանության իրացման գործում /– Եր.: «Հայրապետ» հրատ., 2022: – 176 էջ:

Սույն գիտական ուսումնասիրությունը նվիրված է ժողովրդաիշխանության, Հայաստանի Հանրապետությունում դրա իրացման մեխանիզմների, ժողովրդաիշխանության կերպավորումների իրավաքաղաքական արդի մարտահրավերների, ինչպես նաև ընտրական համակարգի ընտրության և այդ համատեքստում ներկայացուցչական ժողովրդաիշխանության կայացման ուսումնասիրությանը:

Ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել ժողովրդաիշխանության, ժողովրդավարության և ընտրական իրավունքի հարցերով հետաքրքրվող իրավաբանների, քաղաքագետների, ուսանողների, ասպիրանտների, բուհերի դասախոսների և այլ անձանց համար:

Սույն աշխատությունում արտահայտված կարծիքները կարող են չհամապատասխանել ԱՊՀ ՄԽՎ քարտուղարության պաշտոնական դիրքորոշումներին:

ՀՏԴ 342.8
ԳՄԴ 67.400

ISBN 978-9939-887-29-6

© ԱՊՀ ՄԽՎ խորհրդի քարտուղարություն, 2022

Աշխատանքային խմբի ղեկավար՝

ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիթորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղի տնօրեն՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Դավիթի Ավետիսյան

Հեղինակներ՝

Գլուխ 1

Երևանի պետական համալսարանի
սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ
իրավ. գիտ. թեկնածու, Վարդան Նորիկի Այվազյան

Գլուխ 2

Երևանի պետական համալսարանի
սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավ. գիտ. թեկ. Անահիտ Արտյոմի Մանասյան,

Գլուխ 3

Երևանի պետական համալսարանի պետության և
իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ,
իրավ. գիտ. թեկ. Տարոն Վարդանի Սիմոնյան

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԳԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱԻՇԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ	7
§ 1. Ժողովրդաիշխանության ծագումնաբանությունը և սիստեմատեխնիկան.....	7
§ 2. Ժողովրդաիշխանության ժամանակակից ընկալումները դրսևորումները	24
§ 3. Ժողովրդաիշխանության իրացման ժամանակակից կառուցակարգերը	43
ԳԼՈՒԽ 2. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԻՇԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԻՐԱԿԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	58
§ 1. Ընտրական համակարգի նշանակությունը ընտրության արդյունքների լեգիտիմությունը երաշխավորելու հարցում	58
§ 2. Ընտրական համակարգերի առանձնահատկությունները ժամանակակից աշխարհում.....	60
§ 3. Ընտրական համակարգի ընտրությունը պայմանավորող գործոնները.....	69
§ 4. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրության նպատակով կիրառվող ընտրական համակարգն ու դրա ազդեցությունը խորհրդարանի կայունության ու ներկայացուցչականության երաշխավորման տեսանկյունից	70
§ 5. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության նպատակով կիրառվող ընտրական համակարգի դերը ընտրությունների օրինականությունն ու արդյունքների լեգիտիմությունը հավասարակշռելու տեսանկյունից.....	98
ԳԼՈՒԽ 3. ԻՐԱԿԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԻՇԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	110
§ 1. Քաղաքական համակարգի գործնական խնդիրները արդի ժողովրդաիշխանության և ընտրական համակարգի իրացման գործընթացներում	110

§ 2. Հանրային կամքի ձևավորումն ու հանրային շահի որոշակիացումը սոցիալ-քաղաքական շարժընթացի անորոշության պայմաններում	137
§ 3. Ժողովրդաիշխանության կերպափոխումների իրավաքաղաքական արդի մարտահրավերները կամ եզրակացության փոխարեն	158
ԵԶՐԱԿԱՆԳՈՒՄՆԵՐ	160
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	169

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդափշխանությանն առնչվող հարցերը բացառիկ կարևորություն ունեն ժամանակակից աշխարհում: Պատճառն այն է, որ ժողովրդափշխանության դոկտրինն անցել է զարգացման երկար պատմություն և քաղաքակրթության զարգացման այս փուլում ունի վերափնաստավորման անհրաժեշտություն: Ժողովրդափշխանության պատշաճ իրացման տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի ընտրական համակարգի ընտրությունը: Ընտրական համակարգերը ևս զարգացման լուրջ պատմություն են անցել, և այս փուլում գործ ունենք ընտրական համակարգերի ոչ միայն դասական, այլ նաև բազմաթիվ այլ առանձնահատկությունների և հատկանիշների հետ: Դրանց պատշաճ ուսումնասիրությունն ու վերլուծությունը չափազանց կարևոր են ընտրական համակարգի ճիշտ ընտրության, ուստի նաև՝ ժողովրդափշխանության իրացման անհրաժեշտ մակարդակ ձևավորելու տեսանկյունից: Այդ առումով չափազանց կարևոր է նաև կուսակցական համակարգի վերլուծությունը, վերջինիս ազդեցության գնահատումը ընտրական համակարգերի զարգացման վրա և հակառակը:

Խնդիրն էլ ավելի է բարդանում արագ փոփոխվող սոցիալ--քաղաքական միջավայրերում, որտեղ դասական մոտեցումներն արդյունավետ լուծումների չեն հանգեցնում՝ առաջացնելով հանրային կամքի ձևավորման և հանրային շահի սպասարկման անհամապատասխանություններ ժողովրդափշխանության նախկինում գործող կառուցակարգերի հետ:

Հաշվի առնելով այս ամենը՝ առանձնակի կարևորություն է առաջանում որոշակիացնել այն հիմնական գործոնները, որոնք էական ազդեցություն են գործում ժողովրդափշխանության կերպափոխման վրա:

Նշված և թեմային առնչվող այլ խնդիրների ուսումնասիրությանն է՝ ուղղված սույն հետազոտությունը, որը կարող է լուրջ ներդրում լինել քննարկվող ոլորտի հետագա զարգացման տեսանկյունից՝ ինչպես դոկտրինալ, այնպես էլ գործնական առումով:

ՉԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱԻՇԵԽԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Ժողովրդաիշխանության ծագումնաբանությունը և սիստեմատեխնիկան

Ժողովրդաիշխանությունն իրենից ներկայացնում է բազմաշերտ ու բարդ երևույթ, որն այսօր իրավամբ համարվում է ժամանակակից ժողովրդավարական պետությունների գործառույթյան անկյունաքարը: Ընդհանուր առմամբ այն ներկայացվում է որպես *ժողովրդին պատկանող իշխանություն* և իրավաբանական գրականության մեջ հիմնականում նույնականացվում է «*ժողովրդավարություն*» եզրույթի հետ¹: Իսկ սահմանադրական իրավունքի տեսանկյունից ժողովրդաիշխանությունը նույնականացվում է ժողովրդական *ինքնիշխանության* հետ²:

Ինչպես երևում է վերը նշվածից, ժողովրդաիշխանությունն իրավագիտության ոլորտում ունի բավականին տարաբնույթ ընկալում, որն էլ դժվարություններ է առաջացնում այդ երևույթի միանշանակ բովանդակության բացահայտման համար: Այդ առումով հարկ ենք համարում անդրադառնալ «*ժողովուրդ*» և «*իշխանություն*» եզրույթների բովանդակությանը:

Այսպես, «ժողովուրդ» եզրույթը հիմնականում ընկալվում է երկու առումով, առաջին՝ որպես որոշակի պետության բնակչություն, երկրորդ՝ մարդկանց պատմական հանրույթ³:

«ժողովուրդ» եզրույթը գիտական գրականության մեջ կիրառվում է երկու հիմնական նշանակությամբ՝ քաղաքական և էթնիկանշակությամբ: Առաջին նշանակության շրջանակներում ժողովուրդ եզրույթը դիտարկվում է որպես ազգ եզրույթի հոմանիշ⁴:

¹ St`u dic.academic.ru/dic.nsf/lower/16343 [Народовластие] / Юридический словарь., Практический справочник: М.: Русский язык. З. Е. Александрова. Толковый словарь Ушакова. Д.Н. Ушаков. 1935 1940 և այլն:

² St`u <https://dic.academic.ru/dic.nsf/lower/16343>:

³ St`u <https://ru.wikipedia.org/wiki/%D0%9D%D0%B0%D1%80%D0%BE%D0%B4>:

⁴ St`u *Малахов В. С.* Народ // Новая философская энциклопедия / Ин-т философии РАН; Нац. обществ.-науч. фонд; Предс. научно-ред. совета В. С. Стёпин, заместители предс.: А. А. Гусейнов, Г. Ю. Семигин, уч. секр. А. П. Огурцов. 2-е изд., испр. и допол. М.: Мысль, 2010:

Պատահական չէ, որ ժամանակակից իրավաքաղաքական դոկտրինալ փաստաթղթերում «Ժողովրդական ինքնիշխանություն» և «Ժողովուրդների ինքնորոշման իրավունք» արտահայտությունները հոմանիշ են ազգային ինքնիշխանություն և ազգերի ինքնորոշման իրավունք արտահայտություններին: Այս պարագայում արդեն ժողովուրդ եզրույթի տակ հասկացվում է որոշակի քաղաքացիների համակցությունը:

Երկրորդ նշանակությամբ ժողովուրդ եզրույթն օգտագործվում է էթնոլոգիայի և դրան հարակից դասընթացներում և նշանակում է ***հասարակություն, որի հիմքում ընկած են ծագման, լեզվի, մշակույթի, պատմական փորձի և այլ ընդհանրությունները***⁵:

Մյուս կողմից, համընդհանուր ընկալմամբ իշխանություն նշանակում է սոցիալական հարաբերությունների շրջանակներում մարդու՝ կամքը այլ մարդկանց թելադրելու ցանկացած հնարավորություն՝ հակառակ վերջիններիս դիմադրությանը և անկախ այն բանից, թե ինչի վրա է հիմնված այդ հնարավորությունը⁶: Այսպես Վեբերը իշխանության աղբյուրներ էր դիտարկում բռնությունը (ֆիզիկական ուժ, զենք, կազմակերպված խումբ, սպառնալիք, ուժի կիրառում), հեղինակությունը (ընտանեկան և սոցիալական կապեր, խարիզմա, հատուկ, փորձագիտական գիտելիքներ, հավատ), Իրավունքը (դրություն և լիազորություններ, ռեսուրսների նկատմամբ վերահսկողություն, սովորույթ, ավանդույթ)⁷: Նշվածներից ամենապարզունակ աղբյուրը սպառնալիքի կամ բիրտ ուժի կիրառումն է, բռնությունը (օրինակ հոր դեսպոտական իշխանությունը ընտանիքի անդամների նկատմամբ կամ քրեական հանցագործի իշխանությունը զոհերի նկատմամբ): Քիչ չեն դեպքերը, երբ պետությունը նույնպես իր իշխանության աղբյուրը դարձնում է բռնությունն ու սպառնալիքը, հատկապես այն պարագայում, երբ հասարակության ամենալայն շերտերը սկսում են ընդվզել իշխանությունների դեմ: Այս պարագայում մեթոդաբանա-

⁵ Տե՛ս *Бромлей Ю.В.* Очерки теории этноса. Изд. Наука, М., 1983:

⁶ Տե՛ս *Макс Вебер, Хозяйство и общество, том 1, էջ 109, М., М.:* Изд. дом Высшей школы экономики, 2016.

⁷ Տե՛ս նույն տեղը:

կան առումով անթույլատրելի է նույնացնել պետական հարկադրանքը բռնության հետ: Առաջինը դա իրավաչափ գործողություն է, որն ուղղված է հասարակական կարգի ու իրավակարգի պահպանությանը, իսկ բռնությունն արդեն ենթադրում է լիազորությունների սահմանազանցում և չարաշահում: Ցավոք, այսօր այս աղավաղված գաղափարը ամենայն հոգատարությամբ խրախուսվում և մեծ տարածում է ստանում քաղաքակիրթ համարվող Եվրոպայում: Որպես ասվածի օրինակ բերենք Եվրամիության անվտանգության քաղաքականության և արտաքին գործերի գերագույն ներկայացուցիչ Քետրին Էշտոնի հայտարարությունը. «Ուկրաինայում պետք է պահպանվի բռնություն կիրառելու պետության մենաշնորհը»⁸:

Ժամանակակից հարափոփոխ աշխարհում այլ մարդկանց իրեն ենթարկելու մարդու հնարավորությունը առավելապես պայմանավորված է վերջինիս մտավոր հնարավորություններով: Փորձը ցույց է տալիս, որ մտավոր իշխանությունն անհամեմատ ավելի արդյունավետ է իրականացվում, կրում է համակարգային բնույթ, երկարատև է, քան կոպիտ բռնությունը: Մինչդեռ բարոյական իշխանությունը հենվում է արդարության, ազնվության, այլոց և այլ բարոյական արժեքները հարգելու պարտականության վրա: Այն առավել արդյունավետ է դառնում, երբ դրա կողմը այդ առումով ունակ է օրինակ ծառայել այլոց: Սոցիալական իշխանության աղբյուրը հանդիսանում է իրավունքը, առաջին հերթին սեփականության իրավունքը: Ունենալով ամենատարբեր աղբյուրներ, իշխանությունը չի կարող չլինել աստիճանակարգված, հակառակ պարագայում մարդկանց միջև հարաբերություններում կարգավորվածությունը կվերափոխվի քաոսի: Այս առումով կարելի է առանձնացնել իշխանության հետևյալ աստիճանակարգը.

- Բարձրագույն իշխանություն (ժողովուրդ):
- Պետական կամ հանրային իշխանություն (օրենսդիր, գործադիր, դատական և այլն) աշխարհիկ երկրներում, հոգևոր իշխանությունը թեոկրատական պետություններում (օրինակ, Վա-

⁸ Տե՛ս https://vk.com/wall-69433306_262:

տիկան):

- Սոցիալական իշխանություն (ընտանիք, կորպորատիվ կազմակերպություններ և այլն):

Օրինաչափորեն հարց է ծագում՝ արդյո՞ք վերը նշված հատկանիշների (*ծագման, լեզվի, մշակույթի, պատմական փորձի և այլ ընդհանրությունները*) հավաքական ամբողջությամբ ժողովուրդը, որպես իշխանության աստիճանակարգի բուրգի գագաթին կանգնած երևույթ, կարող է ամբողջ ծավալով և միասնական կերպով իրականացնել իրեն ի վերուստ պատկանող իշխանությունը՝ այսինքն թելադրել իր կամքը բոլոր մարդկանց: Խնդիրն այն է, որ ժողովուրդ կատեգորիան իր փաստացի դրսևորմամբ ըստ էության *մարդկանց հանրույթ է՝* տարաբնույթ արժեհամակարգով, էթիկայով, մշակույթով, իրավագիտակցության մակարդակով, աշխարհընկալմամբ, մտածելակերպով, սոցիալական, տնտեսական շահերով, իրավական կարգավիճակով և այլ հատկանիշներով: Ժողովրդի կողմից իրեն պատկանող իշխանության իրականացման խնդիրն առավել բարդանում է այն հասարակություններում, որտեղ մարդկանց սուբյեկտիվ էթիկան գերիշխում է օբյեկտիվին: Մարդասիրական էթիկայի դպրոցի ներկայացուցիչները համաձայնվում են այն բանի հետ, որ արժեքային դատողությունները չունեն օբյեկտիվ նշանակություն և իրենցից ներկայացնում են ոչ այլ ինչ, քան անհատի կամային նախասիրություններ կամ ցանկություններ⁹: Այդ տեսակետից, օրինակ, «ազատությունը ստրկությունից լավ է» արտահայտությունն ուղակի բնութագրում է ճաշակների տարբերությունը, սակայն չունի օբյեկտիվ նշանակություն: Արժեքային այս իմաստով սահմանվում է որպես «ինչ-որ ցանկալի բարիք», և ցանկությունն է որոշում արժեքը, այլ ոչ թե արժեքն է որոշում ցանկությունը: Նման ռադիկալ սուբյեկտիվիզմն իր բնույթով չի կարող համադրվել այն գաղափարի հետ, որ էթիկական նորմերը պետք է լինեն համապարփակ և կիրառելի բոլոր մարդկանց նկատմամբ:

Օբյեկտիվության սկզբունքի համատարած զիջումը ժամա-

⁹ Տե՛ս Эрих Фромм, Человек для самого себя, М., 2009 էջ 14:

նակակից հասարակություններում դարձավ էթիկական հեղոնիզմը: Համաձայն այդ սկզբունքի մարդու համար հաճույքը բարիք է, իսկ տառապանքը՝ չարիք: Այս ծայրահեղ բևեռացված սկզբունքից տրամաբանորեն հետևում է, որ այն բոլոր ցանկությունները, որոնք հանգեցնում են հաճույքին, արժեքներ են, իսկ մնացածը՝ ոչ: Սակայն, չնայած պոզիտիվիզմի հիմնադիրներից մեկի՝ անգլիացի սոցիոլոգ, փիլիսոփա Հերբերտ Սպենսերի փաստարկման հաճույքը կենսաբանական էվոլյուցիայի գործընթացում իրականացնում է օբյեկտիվ գործառույթ, այդուհանդերձ հաճույքը չի կարող լինել արժեքի չափանիշ:¹⁰ Իրականում կան մարդիկ, որոնք հաճույք են ստանում ենթարկվելուց, այլ ոչ թե ազատությունից, ատելությունից, այլ ոչ թե սիրուց, շահագործվելուց, այլ ոչ թե արդյունավետ, ստեղծագործ աշխատանքից: Արդյունքում ստացվում է մի իրողություն, որ այն ամենը ինչը հաճելի է մարդուն՝ արդար է, իսկ ինչը տհաճ է՝ անարդար: Սուբյեկտիվիզմի այս հոգեբանական ախտը բնորոշ է հատկապես այն երկրների հասարակություններին, որոնք առաջին քայլերն են կատարում պետականության կերտման բարդ գործընթացում, չունեն կայացած իրավական համակարգ, քաղաքացիական հասարակության գործուն ինստիտուտներ, ձևավորված ինֆրակառույցներ, հասարակության մեջ մեծ տարածում ունի սոցիալական բևեռացվածությունը:

Հոգեբանական նման իրավիճակում հայտնվեց նաև Հայաստանի ժողովուրդը, հատկապես 2018 թ. այսպես կոչված «թավշյա իշխանափոխության» արդյունքում:

Պետականության չկայացման արդյունքում Հայաստանում ճշմարիտ մշակույթը փոխարինվեց այսպես կոչված HYPE-ով¹¹, որն իր աստվածային տարածության մեջ թույլատրեց իմաստազուրկ գոյի ամենաթողությունը՝ փոխարինելով «homo armenicus»-ի մոդելը սպառող քաղաքացու մոդելով՝ իր արարման տարա-

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Ազդեցիվ և ներխուժող գովազդ, որի նպատակը սպառողների նախասիրությունների ձևավորումն է: Նրա անունը ծագել է բառից, որը նշանակում է ուռձացում, խաբեություն կամ ուշադրություն գրավելու հնարք: Նույն եզրույթը կարող է կիրառվել նաև անձի կամ ապրանքանիշի վերաբերյալ, որի ձանաչվածությունը արհեստականորեն ուռձացվում է:

ծությունը վերափոխելով անպատասխանատու ամենաթողության մեղավոր աղբավայրի, արդյունքում պարտվելով ազատագրական արյունալի պատերազմում, որի արդյունքում ազգը հայտնվեց խոր անդունդի եզրին:

Վերը նշվածի հիման վրա կարելի է պնդել, որ այս հանգամանքը հայության համար հիմնական ցավալի գործոնն է, կյանքի և ազգի ինքնորոշման իրավունքի գոյաբանական սպառնալիքի հարցը: Ավելին, հայ և հրեա ժողովուրդների գենետիկական հիշողության առումով՝ կյանքի իրավունքի և իր պատմական հայրենիքում ապրելու իրավունքի կորստի սպառնալիքը ամենևին չի նվազում մեր օրերում: Եվ ցավոք գրեթե բոլոր մակարդակի վերլուծականներում շեշտը դրվում է լույս *ապրելու իրավունքի վրա*, թեկուզ և առանց մշակութային կոդի, որի *բացակայության պարագայում կյանքի իմաստն անէանում է*:

Այսօր ենթագիտակցական մակարդակով ոչ մի հայ մարդ չի կարող ընդունել այն պարադիգմը, որում իրեն արգելված է հայ լինելն ու սեփական երկրում ապրելը (հատկապես արցախցիների մասով): Սակայն առավել սարսափելի է մայր հայրենիքի կորուստը, որի պարագայում լիարժեք կրթված հայ մարդու մշակութային կոդի փոխարինումը չի դիտարկվում որպես դավաճանություն և ազգային ինքնության կորստի սպառնալիք, ինչն էլ իր հերթին հանգեցնում է պետականության իմաստի և առարկայի կորստին, քանի որ «*homoarmenicus*»-ը սահուն կերպով վերածվում է *փողոցային երթերի մասնակցի պարզունակ ձևաչափի*, իսկ *կառավարությունը լիազորություն է ստանում առանց որևէ պատասխանատվության կամայականորեն իրականացնել իր գործառույթները*, քանի որ դրանք իմաստավորված չեն:

Հենց այդ մասին մտորումներն էլ անհատի մոտ առաջացնում են ցավալի զգացողությունների մի ողջ համալիր՝ նվաստացման, հուսահատության, անարդարության, անօգնականության, լքվածության, սպառված լինելու զգացման, որի արդյունքում մարդու մեջ ձևավորվում է հոգեկանի խորթ ռեակցիա՝ մոռանալ քո մեջ մարդուն, կամ ինքդ քո մեջ տրորել մարդ լինելու զգացողության վերջին մնացորդները: Սա ամենասարսափելի ռեցիդիվն է, որն

սպառնում է պետականության անհետացմամբ:

Հոգեբանական առումով Հայաստանի ժողովրդի մեծ զանգվածը հայտնվեց կուրության համախտանիշի մեջ, որն էլ մեր երկրում ժողովրդափշխանությունը փոխեց ամբոխավարության: *Ամբոխավարությունը երևույթ է, երբ իշխանության մի թևը կամ մարդկանց խումբը սեփականաշնորհում է ժողովրդափշխանությունը, օգտագործելով բնակչության զայրույթն ու հասարակության դժգոհությունը, որպեսզի ճնշում գործադրելով իշխանության մյուս թևերի նկատմամբ յուրացնի ամբողջ իշխանությունը (ընդգծումը մերն է):*

Իհարկե, կուրությունը համաշխարհային համաճարակի նախանշան չէ: Այն «ՀԱԿԱՄՇԱԿՈՒՅԹԻ» երևութաբանություն է՝ բնականության ժխտման և «ՈՉՆՉԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ինստիտուտի գործարկման հիմնական ուղերձով: Այսինքն՝ դա ամենաթողությունն է, որը բնակեցվել է տարածության մեջ որպես գոյի կեղծ օբյեկտ, որի առաքելությունը ոչ թե արարող լինելն է, այլ ազատ լինելը, էություն չունենալը, բայց ֆիզիկապես գոյություն ունենալը, որպես անսահմանափակ իրավունքներ և ազատություններ ունեցող սպառող, և հետևաբար լինել հակաբնականության աշխարհի արարիչը:

Կերը նշված բարդագույն խնդրի հաղթահարման համար «Մարդ» և «Ժողովուրդ» կատեգորիաների էության բացահայտման համար անհրաժեշտ է կիրառել համալիր մեթոդաբանություն, այսինքն այդ երկու երևույթները դիտարկել հենց *բնական իրավունքի* տրամաբանական հարթության մեջ: Այսպես, մարդ հասկացության հետ իրավունքի համատեղ գոյությունը ենթադրում է, որ մարդը համարվում է բնականության օրինաչափություններով գործող տիեզերքի բաղկացուցիչ մաս, և պետք է գտնվի որոշակի իրավահարաբերություններում, որոնք համակարգային հիմքերի վրա Բնություն-մարդ համակարգային հարաբերությունների շրջանակներում սահմանում են տիեզերքի և նրա օբյեկտների հետ մարդու փոխգործակցությունը: Իրավունքի և մարդու համատեղ գոյությունը հակառակ պարագայում դիտարկելիս կխաթարվի տիեզերքի կարգավորվածության պարադիգ-

ման՝ վերացնելով տիեզերքի գլոբալ բանականության սկզբունքը, լավագույն դեպքում տեղ հատկացնելով բանականությանը իրավիճակային կարգավորվածության մակարդակում (Կանտի դասակարգմամբ դա մաքուր բանականության չեղարկումն է՝ թողնելով միայն պրակտիկ բանականությունը կամ պրակտիկ բանականությունը գերիշխում է տեսականին¹²), իսկ վատագույն դեպքում քառսի հռչակումը որպես տիեզերքի գոյի հիմնական սկզբունք: Այս տեսակետն էլ ձևավորում է պոզիտիվ իրավունքի պարադիգման, որն անընդունելի է:

Բոլոր դեպքերում մարդն իր փաստացի գոյությամբ դատապարտված է հավաքական գոյի շրջանակներում արտաքին աշխարհի այլ օբյեկտների հետ համակարգային հարաբերությունների:

Նույնիսկ անհատական գոյի ձևաչափում տեղի է ունենում փոխհարաբերություն ներքին աշխարհի օբյեկտների հետ, որոնք անպատճառ համարվում են մարդ բնականություն հարաբերությունների ենթահամակարգ և ենթարկվում են բնականության օբյեկտիվ օրինաչափություններին, որոնք սահմանում են ներքին աշխարհի գործառավորումը:

Այս երկու ենթահամակարգերը փոխկապակցված են և համարվում են միասնական ամբողջականության մասեր և համապատասխանաբար պետք է գտնվեն միասնական սահմանադրական ամրագրման իրավասության տակ:

Հենց մարդու բովանդակային ամբողջականությունն է հանդես է գալիս որպես սահմանադրական օբյեկտ՝ սահմանելով ածանցյալ բազիսային բովանդակությունները, որոնք ձևավորում են մարդու երևութաբանությունը տիեզերքի գործառավորման բնական ընթացքում որպես հատուկ երևույթի, որին վերագրվում է կյանքի, ազատության և երջանկության իրավունքները:

Այդ ամբողջականության խաթարումը ոտնահարում է դրանցից յուրաքանչյուրի իրավակերպությունը (правосообразность) և նախադրյալներ է ստեղծում համակարգային հակամարտության

¹² St' u Kant. Сочинения. В шести томах. Том 4. Часть 1:

ծագման համար, որում մասնավոր կյանքի, անհատական երջանկության և ազատության իրավունքները, որպես ներքին աշխարհի օբյեկտներ, **հավաքական գոյի իրավասահմանումների** (Правоустановками) հետ հակադրության մեջ են մտնում այնպիսի համակարգային օբյեկտների շրջանակներում, որպիսիք են **ժողովուրդը, հասարակությունը, պետությունը**: Այսինքն մարդու, որպես հասարակական և պետական իրավակարգի սուբյեկտի, ներքին հարաբերությունների մեկնաբանության մեջ են իրավական ամրագրում ստանում մարդու կյանքի, ազատության և երջանկության իրավունքները:

Ակնհայտ է, որ այդ ամբողջականությունը հնարավոր է ապահովել միայն իրավական պարադիգմայի հայեցակարգային միատարրության միջոցով, որը կբացառի մարդու, որպես անհատական և հավաքական գոյի սուբյեկտի, դիտարկումը տարբեր տրամաբանական հարթությունների տեսանկյունից: Այսինքն, անհատի ներքին աշխարհի էթիկական նորմերը չպետք է հակամարտության մեջ լինեն այն էթիկայի հետ, որը բխում է հասարակական օրենսդրությունից: Այդ է պատճառը, որը մարդկային հասարակության զարգացման սկզբնական փուլերում իրավունքը, որպես այդպիսին, համատեղ գոյություն է ունեցել իր բովանդակային համապարփակությամբ, որի պարագայում էվոլյուցիան տեղի է ունեցել հարաբերությունների էթիկայի փոփոխության մակարդակում, որը համարժեք է եղել գիտակցական մակարդակում ժողովրդի իրավագիտակցությանը և ինքնանույնականացմանը ինչպես մարդու արտաքին դրսևորման, այնպես էլ ներքին աշխարհի հոգևոր զարգացման առումով:

Փաստացի մեթոդաբանական չափանիշային համակարգով չեն հստակեցվում **ազգ, ժողովուրդ, հասարակություն և բնակչություն** հասկացությունների, որպես սահմանադրական օբյեկտների, իրավական բովանդակությունը՝ շատ հաճախ դրանք նույնականացնելով, ինչն էլ իր հերթին պատշաճ ամրագրում չի ստանում պետությունների սահմանադրություններում և հանգեցնում է բազում համակարգային հակամարտությունների: Այսինքն՝ չի **հստակեցվում, թե իշխանությունը պատկանում է ազգին, ժողովրդին,**

հասարակությանը, թե բնակչությանը:

Ժողովրդաիշխանության իրականացման խնդիրն առավել բարդանում է այն երկրներում, որոնք ունեն բազմամշակութային մոդելի հասարակություն (Օրինակ, Գերմանիան, Նիդերլանդները, ՌԴ, ԱՄՆ և այլն): Հետևաբար գտնում ենք, որ ժողովուրդ կատեգորիայի առանցքային հատկանիշը, ի թիվս իրավաբանական գրականության մեջ նշվածների, անհրաժեշտ է դիտարկել ***որոշակի աշխարհագրական տարածքի վրա համատեղ գոյի, համագործակցության, համագոյակցության, ճակատագրի համատեղ կերտման ու բարգավաճման կազմակերպումը:*** Կարծում ենք, հենց այս հատկանիշների հաշվառմամբ է միայն հնարավոր, ժողովրդի, որպես բարձրագույն իշխանության կրողի մեջ ներառելով, ազգերին, ազգություններին, սոցիալական տարբեր խմբերին և ընդհանրապես հասարակությանը, ապահովել մարդու կյանքը, անվտանգությունը, համագործակցությունը և համագոյակցությունը, զարգացումն ու բարգավաճումը որպես մարդու բնական էության լիակատար դրսևորում: Իսկ ո՞ր պարագայում է դա հնարավոր իրագործել.

Ժամանակակից Եվրոպայի ամենաինքնատիպ քաղաքական փիլիսոփաներից մեկի՝ Էնտոնի Դե Յասայիի «Պետություն» աշխատությունը սկսվում է հետևյալ արտահայտությամբ. «Ի՞նչ կանեիք, եթե լինեիք պետություն»¹³: Եթե այս հարցադրումը փոխենք «Ի՞նչ կանեիք, եթե լինեիք ժողովուրդը» հարցադրմամբ, ապա պատասխանը կլիներ հետևյալ պոստուլատը, որն էլ կազմում է ժողովրդաիշխանության սիստեմատեխնիկան.

- Ժողովուրդը պետք է պատասխանատու կերպով և միանշանակորեն գիտակցի, որ իր գոյատևումն ու կենսագործունեությունը չի կարող ունենալ ոչ համակարգային բնույթ և գտնվել անկառավարելի ինքնաձևավորման ռեժիմում, և գլոբալ քաղաքակրթական էկզիստենցիալ համակարգի շրջանակներում, որպես մարդկության բաղկացուցիչ մաս, պետք է կյանքի կոչի

¹³Տե՛ս Էնտոնի Դե Յասայի, Государство, Москва: Челябинск: ИРИСЭН, Социум, 2016, էջ 13:

համաշխարհային հանրության հավաքական գոյը՝ իրավական կարգավորման համարժեք գործուն կառուցակարգերով:

Վերը նշված պոստուլատի ընդունման պարագայում ժողովուրդը հանդես է գալիս որպես իմանենտ իրավագիտակցությամբ օժտված բանականության կրող, որի հիման վրա գործի է դրվում իրավագեները և իրավաձևավորման գործընթացը, որում ձևավորվում է ժողովրդի, որպես էկզիստենցիալ համակարգի շրջանակներում իրավական ամրագրման օբյեկտի՝ իրավասուբյեկտությունը: Այս դեպքում իրավական մետրիկան կառուցակարգվում է բանականության առկայության պարտադիրության սկզբունքի հիման վրա, համակարգի, որպես ցանկացած գոյի սուբստանցիալ հիմքի օբյեկտիվ սկզբի, և համակարգայնության, որպես հասարակության գոյության ձևի պարտադիր հատկության, որը հանդես է գալիս որպես էքզիստիմության առաջնային դրսևորում հիմնակառուցման (constitution) շրջանակներում: Էքզիստիմությունը, որպես իրավական չափանիշ, գործի է դնում ինչպես ժողովրդի, այնպես էլ համաշխարհային հանրության, որպես իրավական օբյեկտների, իրավաբանական կարգավիճակը ամրագրող սահմանադրականության ակտը:

Առանձին վերցրած պետականության մասշտաբում դիտարկելիս այս պոստուլատը ուժի մեջ է մտնում ժողովրդի կամահայտնության միջոցով: Այստեղ ժողովուրդը հանդես է գալիս որպես հասարակության էկզիստենցիալ համակարգի հայեցակարգային մոդելը հաստատող իմանենտ իրավունքի կրող: Այդ մոդելը միանշանակ ձևականացման մակարդակում լիարժեքորեն առարկայական նկարագրում և բացահայտում է արժեհամակարգը, որպես իրավական ամրագրման օբյեկտ, որի հիման վրա պետք է մշակվի արդեն էկզիստենցիալ համակարգի գործառական մոդելը, գործի դնելով իրավական տարածությունը, որում պետք է տեղավորվեն ինչպես հասարակությունը, այնպես էլ վերջինիս կողմից հիմնադրվող պետությունը (իր գործառական առաքելության և լիազորությունների իրավաբանական ամրագրմամբ), ինչպես նաև համալիր հասարակական գործընթացների իրավական կարգավորման համակարգը:

Ժողովուրդը պետք է ունենա կամք և գործառական ունակություն կառուցելու իր էկզիստենցիալ համակարգը, որպես համալիր տեխնոլոգիական գործընթաց, որն իր մեջ ներառում է բոլոր ենթահամակարգերի կառուցումը, որոնց համակարգային փոխգործակցության արդյունքում ապահովվում է հասարակության ներդաշնակ ու հավասարակշռված գործառական էկզիստենցիան ինչպես ներպետական ու ազգային, այնպես էլ վերպետական և վերազգային մակարդակներում:

Այս պոստուլատի ընդունումը նշանակում է, որ ժողովուրդն արդեն ունենալով համարժեք իրավագիտակցություն և ինքնագիտակցություն նույնականացնելու իրեն որպես բանական գոյի (բարձր կազմակերպված բանականության կրողի բնական իմանենտ իրավասութեկություն), ճանաչելով համակարգային մակարդակում իր էկզիստենցիայի կառավարման անհրաժեշտությունն ու օբյեկտիվ բնույթը, որպես ֆունկցիոնալ-ակտիվ արարող, ստեղծագործող, պարտականություն է ստանձնում կառուցելու էկզիստենցիայի համակարգ ֆունկցիոնալի իրավասութեկության ձևաչափում:

Այս մակարդակում «Ժողովուրդ» և «համաշխարհային հանրություն» իրավական օբյեկտները, ունենալով կյանքի և գոյատևման սահմանադրական իրավունք, արդեն որպես ֆունկցիոնալներ, ծանրաբեռնվում են իրանց ճակատագրի և կենսապահովման համար պատասխանատվությամբ, դրանով իսկ ավարտելով լիարժեք իրավասութեկության ակտը: Այդպիսով տեղի է ունենում իրավունքի ֆունկցիոնալ գործողության տարածականագոյացումը: Այսինքն, տեղի է ունենում իրավունքի օնտոգենեզ, որպես իրավունքների և պարտականությունների սինթեզ միասնական ամբողջում, որի արդյունքում գործառականորեն իրացվում է իրավագոյացումը, քանի որ արդեն առկա է ինչպես իրավունքի կառուցվածքը, այնպես էլ դրա կրողը, որի դերում հանդես է գալիս սութեկտը: Այդպիսով համակարգագոյացումը ձեռք է բերում իրավական բնույթ, իրավական օբյեկտի հատկություն, համապատասխանաբար և իրավական բովանդակություն պարտավորվածության, կարգավորվածության և կառավարելիության

կազմվածքով ստեղծվող համակարգի շրջանակներում:

Նման դրվածքում դիտարկվում է նաև երրորդ սահմանադրական ակտը, եզրափակելով իրավագենեզի ամբողջականության սխտեմատիսնիկական կառուցվածքը, գործի է դնում իրավունքի օպերացիոն գործողության տարածությունը՝ դրանում տեղադրելով պետությունը որպես իրավական օբյեկտ տեխնիկական ընթացակարգային մակարդակում՝ հիմնական օրենքի ընդունման իրավաբանական կանոնակարգի շրջանակներում:

Հավաքական գոյի շրջանակներում մարդու գոյության սկզբունքի գիտակցումը պետք միտված լինի նրան, որ յուրաքանչյուր մարդ ունի կյանքի իրավունք: Համապատասխանաբար, պետությունն ունի պարտականություն ապահովելու քաղաքացիների կյանքի անձեռնմխելիությունը, որպես վերջիններիս բազային և առաջնային իրավունքի: Առանց նման գիտակցության հասարակության իրավագիտակցության ինստիտուտը կլինի ոչ լիարժեք՝ քաղաքացիների կողմից գիտակցական մակարդակում իրենց իրավունքների ու պարտականությունների չընկալման ռեցիդիվով:

Մասնավորապես, այդ ասպեկտն էլ համարվում է անկատարության և երբեմն նաև անկոնֆլիկտ իրավական կարգավորման համարժեք համակարգի ստեղծման անհնարինության պատճառական մակարդակը: Օրինակ, միջազգային իրավունքի համակարգի ճգնաժամը, երկմակարդակ սահմանադրության գործառավորումը վերազգային, դաշնային մակարդակներում և իրավունքի գործողությունը ինքնավարության մակարդակում՝ ինքնիշխանության այս կամ այն մոդելով:

Բացական պատասխանը, այսինքն իրավական պոստուլատի չընդունումը գործի է դնում անհամակարգայնության թույլատրելիությունը, որի արադյունքում հնարավոր չի դառնում գոյատևման ներդաշնակ ու հավասարակշռված էկզիստենցիալ համակարգի կառուցումը, կամ նեղացվում է համակարգագոյացման դրվածքը ժողովրդի այն անդամների շահերի իրավիճակային պայմանավորվածությունների ձևաչափում, որոնց դիրքորոշումները հնարավոր չէ անտեսել ուժի իրավունքից տեսանկյունից:

Այս դրվածքի պայմաններում առաջանում է իրավունքի համակարգագոյացման համակարգային հակամարտություն, որում հնարավոր չի լինում կառուցել իրավունքի համակարգ, որն ապահովի իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքը, և որի պայմաններում իրավագոյացման սուբստանցիալ հյուսվածքները փոխարինվում են վարքագծի կանոնագոյացմամբ, որը դուրս է լեգիտիմության իրավական մետրիկայից, փոխարինելով իրավական իմպերատիվը (սահմանադրական իրավական լեգիտիմության օբյեկտիվ բնույթը) որոշում կայացնող ուժային խմբի բռնապետական թելադրանքով, ինչի արդյունքում ժողովուրդը կորցնում է իր բարձրագույն իշխանությունը:

«Ժողովուրդ» և «համաշխարհային հանրություն» եզրույթների համակողմանիությամբ և մեծածավալությամբ հանդերձ, իրավագիտության տեսանկյունից, որը պարտավոր է դիտարկել դրանք որպես իրավունքի օբյեկտներ, դրանք չեն կարող մնալ «պետությունների ներսուբյեկտային ընկալման» հարթության մեջ և ակնհայտ է, որ պետք է ձևականորեն մոդելավորվեն սահմանադրական ունիվերսումի վերլուծական ձևաչափում, որը սահմանում է բովանդակային և գործառնական միանշանակությունը, առանց որի «Ժողովուրդ» և «համաշխարհային հանրություն» հասկացությունների ընդհանրական ընկալումը վերջիններիս կդարձնի առնվազն անկարող:

Իրավական համակարգի նման սիստեմատեխնիկայի արդյունքում իրավունքի գործողությունը գործի է դրվում ակտիվ իրավասուբյեկտության պարադիգմայի ձևաչափում: Այս պարագայում ընդունվում է, պետության, որպես ակտիվ գործող սուբյեկտի, հանդես գալու թույլատրությունը, որը հետապնդում է իր սեփական շահերը, որոնք հակադրվում են և փոխադարձաբար բացառում են պետականության մոդելին, հիմնված քաղաքական - փիլիսոփայական հայեցակարգի վրա, որի համաձայն «պետությունը «պասիվ գործիք է», որը ծառայում է բացառապես ժողովրդի շահերին ամբողջությամբ:

Այս տարբեր հայեցակարգերի իրավական բովանդակությունը տարբեր է և անհամադրելի, որոնցում սահմանադրական էութ-

յունն ու բովանդակությունը տարբեր են: Պետության սուբյեկտության ակտիվ մոդելի դեպքում սահմանադրաիրավական կարգավորումը իր մեջ կրում է եզրութային հայեցակարգային հակամարտություն, որը վերացնում է իրավունքի էությունը և փոխարինում է այն համապարտադիր կանոններով, փոխարինելով իրավագոյացումը կանոնագոյացմամբ, պարտավորության ինստիտուտը փոխարինում է հարկադրական կանոնակիրառմամբ: Պետության օպերացիոն գործառնավորման տեսանկյունից դա կարող է լինել աննկատ, քանի որ իրավունքի դրսևորման իրավակիրառ մակարդակը «իրավունք չունի» քննարկել կամ սահմանել արդարադատության արդարության չափանիշները, որպես ֆունկցիոնալ իր գործադիր բնույթի բերումով, պարտավոր է պահպանել «համապարտադիր վարքագծի կանոնները»:

Արդյունքում նշմարվում է պետականագոյացման համակարգային հակամարտություն, որը կայանում է նրանում, որ պետականության մեթոդաբանական բազիսը, պետության գործառնավորման օպերացիոն բազիսը, որը դիտարկվում է քաղաքական փոլիտոփայությունից դուրս, նեղացվում է տնտեսագետների մոտեցման շրջանակներում, որոնք պետությունը դիտարկում են որպես բիզնես սուբյեկտ, որպես ունիվերսալ կոնստրուկտիվ, միայն պետության դեպքում է, որ վերջինս ձգտում է առավելագույնի հասցնել ոչ թե շահույթը, այլ իշխանական լիազորությունների ծավալը, դրանք օգտագործելով սեփական վերջնական նպատակներին հասնելու համար, ինչպիսին որ նրանք չլինեն:

Նման համակարգային հակամարտության պայմաններում ձևավորվում է համակարգային ռեցիդիվ, համաձայն որի՝ ամեն ինչ դիտարկվում է օգուտի հարթության մեջ: Պետության դիսֆունկցիոնալ հանդես է գալիս որպես իրավական էության փոխարինման արդյունք, որտեղ էկոնոմիկան չի բխում պետականության աստիճանակարգային կառուցվածքից, որպես հասարակական կառուցվածքի համակարգի, այլ ընդհակառակը, պետությունը հանդես է գալիս որպես օգուտի տնտեսական կոնստրուկտիվի մասնավոր դեպք: Պետության էության նման գաղափարախոսական իրավասահմանման արդյունքում, որպես պարտավորութ-

յան անվիճելի և առաջնային սահմանադրական առարկա, փոխարինվում է ժողովրդի և պետության միջև առևտրով, որոնք ունեն օգուտի տարբեր ոլորտներ:

Նման դասավորվածությամբ «պետության հիմնական գործիքը համարվում է այս կամ այն խմբի հպատակների սատարման գրավումը նրանց օգտին ուրիշներից զավթած հարստության վերաբաշխման» միջոցով . . .

Այս պարագայում պետությունը պարփակվում է քաղաքական իշխանության ներքին բնույթի մեջ, ունենալով կենտրոնական նպատակ և խնդիր՝ ցանկացած միջոցով փոփոխվող հանգամանքների պայմաններում ապահովել իշխանության համակարգի հավերժությունն ու անխափանությունը, սահմանելով այն ուղին, որով զարգանում են կառավարման ձևերը, այլ ոչ թե ուղին է սահմանվում այդ ձևերով: Սա սահմանադրականության համակարգային հակամարտության թաքնված ռեցիդիվ է, երբ սահմանադրությունը գրվում է կամ փոփոխվում է հարմարավետ կառավարման ձևի համար, այլ ոչ հակառակը, որ կառավարման ձևը և հասարակական համալիր գործընթացների կառավարման համակարգը բխեցվում են պարտավորության (долженствование) սահմանադրական կարկասից, որն իրացնում է հասարակության արժեքների համակարգը՝ պետական շահերի իրավական մետրիկայով: (Պոզիտիվիզմի կոնֆլիկտաբանական բնույթը):

Պետության և ժողովրդի շահերի միջև անհավասարակշռությունը հնարավոր չէ լուծել առանց լեգիտիմության իրավական մետրիկայի, որը որոշում և ուրվագծում է իրավական թույլատրելիության սահմանները (շահերը որպես այդպիսիք), որն էլ իր հերթին կարող է դուրս բերվել պետության շահերի իրավական բովանդակության և ժողովրդի շահերի իրավական բովանդակության կոնստրուկտիվներից:

Իրավագիտության տրամաբանական հարթակը տեսականորեն թույլատրում է նման հակամարտության առկայությունը որպես «իրերի բնական վիճակ» պետության զարգացման դինամիկայի պայմաններում և համապատասխանաբար պետություն-ժողովուրդ հարաբերություններում նոր հանգամանքների ի հայտ

գալով: Ավելին, այդ ամենը բնական և օրինաչափ չեն և բացառում են սահմանադրականությունը, որի խնդիրն է սահմանել պետականության բազիսի անփոփոխելիությունը (արժեհամակարգի և կառավարման ձևի սահմանադրական կոնստրուկտիվը, որն ապահովում է այդ արժեքների համակարգի ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը) և իրավական համակարգը, որը ապահովում է այդ պետականության իրավական ամրագրումը և իրավաբանական ուղեկցումը արդեն օպերացիոն գործառնական մակարդակում:

Այս պարագայում սահմանադրականության էությունը անորոշ է դառնում հասարակության քաղաքացիական իրավասությանը համաչափ, երբեմն իջնելով մինչև կենցաղային մտածողության մակարդակ, ձևավորելով անկարողություն հասկանալու սահմանադրական բազիսի փոփոխության իրավական բովանդակության և կարգավիճակի տարբերությունը և այն հանգամանքները, որոնք փոխգործակցության կոնֆիգուրացիայի փոփոխության ուժով պահանջում են իրավական ամրագրում համալիր հասարակական գործընթացի շրջանակներում, որոնք նոր հանգամանքների (որոնց իրավական բովանդակությունը չպետք է դուրս գա սահմանադրական բազիսի շրջանակներից) բերումով պահանջում են կատարելագործում և լրացուցիչ իրավական ամրագրում:

Սա իրավական վերլուծության որակի համարժեքության համար պատասխանատվության առանցքային հիմնահարցն է, որն ի վիճակի է հասկանալ իրավունքի էությունն ընդհանարապես և սահմանադրականության իրավական բովանդակությունը, որպեսզի «ակնածանքով» վերաբերվի իրավունքի գենեզիսի, հասարակության, պետության, պետականության ինստիտուտի ամրագրման իրավագոյացման և պետության իրավասությունների գործառնական նախագծման հիմքերին վերաբերող ցանկացած հարցի: Սահմանադրությունը ընթացիկ իրավիճակի ներքո չի կարող գրվել: Սահմանադրականության, որպես պետականության իրավական ամրագրման դիսցիպլինի գաղափարը չի կարող հիմնվել կարճաժամկետ կամ նույնիսկ միջնաժամկետ հանգամանքների իրավաստեղծագործության վրա, սակայն օբյեկտը

սահմանադրական օրինաստեղծագործության կարգավիճակ ձեռք է բերում միայն այն դեպքում, եթե ունենում է համակարգաստեղծ ֆունկցիոնալություն, այսինքն բովանդակային և մասնավորապես, նրա իրավական բովանդակության կազմվածքի առումով ունենում է ոչ միայն երկարաժամկետ ֆունկցիոնալության բնույթ, այլև, որպես բազային օբյեկտ, անփոփոխելիության իմանենտ կարգավիճակ, որից կախված է համակարգային ամբողջականությունը: Մասնավորապես, պետությունը չունի բարձրագույն իշխանության իմանենտ իրավունք, այն պատկանում է **բացառապես ժողովրդին-հասարակությանը** (հասարակության իրավական բովանդակությունը):

Համակարգային հակամարտությունների գենեզիսի մեթոդաբանական համալիրի առջև ծառայած կենտրոնական առանցքային հարցը իրավունքի էության տեսանկյունից շարունակում է մնալ մարդկության պատմության մեջ հավաքական գոյի ամենասկանդալային ռեցիդիվին առնչվող հարցին պատասխանելու փաստացի ունակությունը. ինչպե՞ս են պետությունն ու ժողովուրդը (հասարակությունը) միմյանց հետ փոխգործակցում, որի արդյունքում չեն արդարացնում մեկը մյուսին՝ միմյանց զցելով խղճուկ և անարժան վիճակի մեջ:

§ 2. Ժողովրդաիշխանության ժամանակակից ընկալումները դրսևորումները

Ժողովրդաիշխանության սկզբունքն այս կամ այն կերպ իր ամրագրումն է ստացել ժամանակակից երկրների՝ անգամ ոչ ժողովրդավարական կարգ ունեցողների սահմանադրություններում: Սակայն այդ ամրագրումներն ունեն ամենատարբեր բովանդակություն և սուբյեկտիվ կերպով են մեկնաբանվում պետությունների կողմից: Առանցքային է համարվում այն հիմնահարցը՝ արդյո՞ք իշխանությունը իրականում պատկանում է ժողովրդին, թե՞ պետությանը: Այս առումով դիտարկենք ժողովրդաիշխանության սկզբունքի ամրագրումը զարգացած իրավական համակարգ ունեցող մի շարք երկրների սահմանադրություններում:

Այս առումով պետությունների մի խումբն ուղղակիորեն ամրագրում է, որ *իշխանությունը պատկանում է ժողովրդին*, իսկ մյուս խումբը *ժողովրդին վերագրում է ինքնիշխանությունը, երրորդ խումբն էլ ժողովրդին դիտարկում է որպես իշխանության միակ աղբյուր*։ Այսպես, ՀՀ Սահմանադրության 2-րդ, ընդ որում, փոփոխման ոչ ենթակա հոդվածն ամրագրում է. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Նույնաբովանդակ դրույթներ են ամրագրում Բուլղարիայի Սահմանադրության առաջին, Չինաստանի ժողովրդական Հանրապետության Սահմանադրության 2-րդ, Հունգարիայի Սահմանադրության 2-րդ հոդվածները և այլն:

Երկրորդ մոտեցումը՝ այն է *ժողովրդին է պատկանում ինքնիշխանությունը*, ամրագրվել է Ֆրանսիայի Սահմանադրության 3-րդ, Ճապոնիայի Սահմանադրության առաջին, Իտալիայի Սահմանադրության առաջին, Իսպանիայի Սահմանադրության առաջին, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 3-րդ հոդվածներում և այլն:

Ժողովուրդը որպես իշխանության միակ աղբյուր դիտարկվում է Բելոռուսի Հանրապետության Սահմանադրության առաջին, Հունաստանի Սահմանադրության առաջին, Իսպանիայի Սահմանադրության առաջին, Չեխիայի Սահմանադրության 2-րդ, Շվեդիայի Սահմանադրության առաջին, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 2-րդ, Բրազիլիայի Սահմանադրության 3-րդ հոդվածներում և այլն:

Այս ամենի հետ մեկտեղ, օրինակ Բելոռուսի Սահմանադրությունը այդ երկրի տարածում *իշխանության գերակայությունը և լիակատարությունը վերապահում է պետությանը*՝ ընդգծելով, որ այն բխում է ժողովրդից:

Ավելին, ժողովրդաիշխանության սկզբունքը որպես այդպիսին, իր ուղղակի ամրագրումը չի ստացել սահմանադրական համակարգաստեղծ գործառույթներ ունեցող այնպիսի երկրների հիմնական օրենքներում, ինչպիսիք են Ամերիկայի Միացյալ Նահանգները, Գերմանիայի Դաշնությունը կամ Շվեյցարական Համադաշնությունը:

Հետևաբար հարց է ծագում, արդյո՞ք նույն իրավական բովանդակությունն ունեն այդ ձևակերպումները և իրականում ու՞մ է պատկանում իշխանությունը:

Նշված հիմնահարցի լուծման բանալին նույնպես անհրաժեշտ է փնտրել բնական իրավունքի տրամաբանական հարթության մեջ, որի մեթոդաբանական բազան պարտադրում է բոլոր տեսակ եզրույթների միանշանակություն և համակարգային ամբողջականություն: Հակառակ պարագայում՝ պոզիտիվիզմի տրամաբանական հարթության մեջ թույլատրելի է եզրույթների ցանկացած կամայական մեկնաբանություն՝ ելնելով ընթացիկ իրավիճակի նպատակահարմարությունից: Վերը նշված սահմանադրական ձևակերպումները կարծում ենք նույնաբովանդակ չեն և դրանցում առկա են էական տարբերություններ:

1. Առաջին մոտեցումն այն է, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ընդ որում՝ այս տեսակետին հավատարիմ բոլոր պետությունների սահմանադրություններում որպես ժողովրդին պատկանող իշխանության իրականացման ձև հանդես են գալիս պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք և հանրաքվեն: Այստեղ տրամաբանական հարց է ծագում՝ արդյո՞ք ժողովուրդը, որպես հավաքական միավոր, վերը նշված գործիքակազմով ի գորու է իրականացնել իրեն պատկանող իշխանությունը: Մյուս կողմից, ինչպես առաջին պարագրաֆում ներկայացվեց՝ իշխանությունը դա սեփական կամքը բոլորին կամ այլոց թելադրելու հնարավորությունն է: Արդյունքում բախվում ենք համակարգային հակամարտության հետ այն առումով, որ ժողովուրդը, որպես հավաքական միավոր իր կամքը **թելադրում է յուրաքանչյուրին և ամենքին**: Այս տրամաբանական եզրահանգման արդյունքն առավելապես հիշեցնում է քաոս, քան կարգավորվածության ապահովում: Հետևաբար գալիս ենք այն խելամիտ եզրահանգման, որ ժողովուրդն օբյեկտիվորեն չի կարող ամբողջ ծավալով իրականացնել իրեն պատկանող իշխանությունը:

2. Այլ է խնդիրը, երբ երկրորդ խումբ պետություններն իրենց սահմանադրություններում ժողովրդին վերապահում են ոչ թե *իշ-*

խանությունը, այլ ինքնիշխանությունը: Ինչով են միմյանցից տարբերվում այս երկու երևույթները:

Ինքնիշխանություն ծագումնաբանությունը գալիս է գերմաներեն *Souveränität*¹⁴ և ֆրանսերեն *souveraineté* եզրույթից, որը նշանակում է **բարձրագույն իշխանություն, գերակայություն, գերիշխանություն**¹⁵: Նշվածից միանշանակորեն հետևում է ինքնիշխանություն եզրույթը կոչված է ապահովելու իշխանություն երևույթի աստիճանակարգվածությունը: Ըստ այդ հատկանիշի իրավական շրջանառության մեջ հանդիպում են «պետական ինքնիշխանություն», «ազգային ինքնիշխանություն» և «ժողովրդական ինքնիշխանություն» հասկացությունները:

Այսպես, պետական ինքնիշխանությունը դա անկախ պետության անօտարելի իրավաբանական հատկանիշն է, որը խորհրդանշում է վերջինիս իրավաբաղաքական ինքնուրույնությունը, բարձրագույն պատասխանատվությունը և միջազգային իրավունքի առաջնային սուբյեկտ լինելու արժեքը, որն անհրաժեշտ է բացառապես պետական իշխանության գերակայության համար և ենթադրում է այլ պետության իշխանությանը չենթարկվելը, որը ծագում կամ վերանում է անկախ պետության, որպես ամբողջական սոցիալական օրգանիզմի, կարգավիճակի ինքնակամ փոփոխության ուժով, պայմանավորված անկախ պետությունների իրավական հավասարությամբ, որն ընկած է ժամանակակից միջազգային իրավունքի հիմքում¹⁶: Ինքնիշխանության հարգումը ժամանակակից միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների հիմնարար սկզբունքներից մեկն է, որն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրությամբ:

Ժամանակակից միջազգային իրավունքում պետական ինքնիշխանությանը զուգահեռ ձևավորվել է նաև ազգային ինքնիշխանություն հասկացությունը, որը ընկալվում է որպես յուրաքանչ-

¹⁴ St' u Суверенитет государственный // Большая советская энциклопедия / Гл. редактор А. М. Прохоров. 3-е издание. М.: Издательство Советская энциклопедия, 1976. Т. 25. էջ 26:

¹⁵ St' u Большой французско-русский словарь АBBYY Lingvo / Главный редактор М. Н. Сизых. М.: АБИ Пресс, 2010:

¹⁶ St' u Моисеев А. А. Суверенитет государства в международном праве. М., Восток-Запад, 2009. էջ 68:

յուր ազգի ինքնորոշման իրավունք¹⁷: Ազգային ինքնիշխանության բովանդակությունը համարվում է ազգի լիիշխանությունը, քաղաքական ազատությունը՝ ընտրելու իր պետաիրավական կազմակերպչական ձևը և այլ ազգերի հետ փոխհարաբերակցվելու ձևը: Ազգի ինքնիշխանությունն ապահովվում է հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական կառուցվածքով. Այսինքն դա ի վերուստ տրված չէ ցանկացած ազգի: Իր բովանդակությամբ ազգային ինքնիշխանությունը համարվում է ժողովրդաիշխանության սկզբունք, որի իրականացումը կախված է ազգի՝ իր գոյության և զարգացման կենսական շահերը գիտակցելու մակարդակից:

Սակայն, ազգային ինքնորոշման սկզբունքը բացարձակ չի դարձնում ազգին, այլ պետական ինքնիշխանությանը հաղորդում է նոր որակ: Պետության ինքնիշխանության իրավունքը որոշակի պատմական զարգացման փուլում դառնում է ազգի իրավունք, որը կարող է վերջինս իրականացնել ինչպես նոր պետության ստեղծման ձևով, այնպես էլ ավելի խոշոր պետական կազմավորման կազմի մեջ մտնելով¹⁸:

Այլ է հարցն արդեն *ժողովրդի ինքնիշխանության* առումով: Ժողովրդի ինքնիշխանության դոկտրինը մշակվել է XVIII դարի ֆրանսիացի լուսավորիչ Ռուսոյի կողմից, որը ինքնիշխանին անվանեց ոչ այլ ինչ, քան հավաքական արարած, որը կազմավորվում է մասնավոր անձանցից և իր համակցությամբ ստանում ժողովուրդ անունը¹⁹: Ժողովրդական ինքնիշխանության էությունը կայանում է պետության մեջ ժողովրդի գերակայությամբ, այսինքն ժողովուրդը դիտարկվում է որպես բարձրագույն իշխանության

¹⁷ St'ou *Шевцов В. С.* Национальный суверенитет (проблемы теории и методологии). М.: Юрид. лит., 1978. էջ 3-4, 18-19:

¹⁸ St'ou *Ушаков Н. А.* Суверенитет в современном международном праве. М.: Изд. ИМО, 1963. էջ 35-37:

¹⁹ St'ou *Руссо Ж.-Ж.* Об общественном договоре, или Принципы политического права = Du contrat social ou Principes du droit politique // Об общественном договоре. Трактаты / Перевод с франц. А. Д. Хаятина и В. С. Алексеева-Попова. М.: КАНОН-пресс, «Кучково поле», 1998. Книга 1, глава VI и далее.

միակ, օրինական և իրավաչափ կրող²⁰ կամ պետական ինքնիշխանության աղբյուր²¹: Փաստացի հենց ժողովրդական ինքնիշխանությամբ է աստիճանակարգվում իշխանության համակարգը, որի բուրգի գագաթում փաստացի կանգնած է ժողովուրդը:

Բնականաբար երրորդ խումբ երկրների սահմանադրություններում ժողովրդի՝ իշխանության միակ աղբյուր լինելու հանգամանքն արդեն հիմնավորվում է վերը բերված փաստարկներով: Այստեղ հարց է առաջանում, թե ինչպիսի սահմանադրաիրավական ամրագրում պետք է ստանա ժողովրդաիշխանության սկզբունքը, որպեսզի չծագեն համակարգային հակամարտություններ: Խնդրի լուծման համար որպես մեթոդաբանական գործիք հանդես է գալիս «**լեգիտիմություն**» երևույթը:

Բոլոր պետությունների (հատկապես նոր պետականության կազմակերպման գործընթացում գտնվող) առջև առանց այլընտրանքի ծառայել է պետականության իրավական ամրագրման հիմնախնդիրը, որի նպատակը վերջինիս լեգիտիմության ապահովումն է իր բոլոր դրսևորումներում և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում և մակարդակներում:

Լեգիտիմության հիմնախնդիրն ունի հիմնարար բնույթ և ընդգրկում է հասարակության, որպես իրավունքի սուբյեկտի, կայացման բոլոր փուլերը՝ սկսած կենսագործունեության մինչպետականից մինչև սահմանադրաիրավական կարգավորման ժամանակահատվածը:

Այս գործընթացում լեգիտիմությունը բյուրեղացվում է որպես իրավունքի բազային որակական հատկանիշ և հանդես է գալիս որպես փոխհարաբերությունների համակարգի կազմակերպման համապատասխան գործիք (որպես վարքագծի նորմ) և փոխգործակցության կարգավորման (նորմից շեղումները չթույլատրելու) որակի որոշակի չափանիշ, որոնց համակցությունը «իրավունք է տալիս» իրավունքին լինել որպես այդպիսին:

²⁰ Ст'у *Левин И.Д.* Суверенитет. Спб.: Юридический центр Пресс, 2003., էջ 18:

²¹ Ст'у *Черниченко С.В.* Государство как личность, субъект международного права и носитель суверенитета // Российский ежегодник международного права. Спб.: Издательский дом СПбГУ, 1995. էջ 23-24:

Հատկապես կարևոր է նշված հիմնախնդրի բնույթի դիտարկումը սահմանադրաիրավական կարգավորման, որպես իրավական կարգավորման համակարգի, դիրքերից: *Այստեղ լեզվափոփոխությունը հանդես է գալիս որպես իրավական պետականության հիմնարար պայման, որի ապահովման համար ձևավորվում է հատուկ իրավական աստիճանակարգ, որտեղ առանձնակի կարևորվում է հիմնական օրենքի դերը:*

Վերջինիս է վերապահված ամբողջ իրավական համակարգի և պետական կառույցի լեզվափոփոխության ամրագրման առաքելությունը: Արդյունքում ինչպես պետական իրավունքի տեսական սահմանումների, այնպես էլ պետական կառույցի ձևավորման և կառուցման գործնական մակարդակում սահմանադրական կարգը հանդես է գալիս որպես պետական կառույցի բարձրագույն կազմակերպաիրավական ձև:

Այս եզրահանգման իրավաչափության հիմնական չափանիշը համարվում է սահմանադրաիրավական կարգավորման, որպես իրավական կարգավորման հատուկ համակարգի, ունակությունը՝ ապահովելու համալիր հասարակական գործընթացների առավելազուցում հավասարակշռություն ու ներդաշնակություն օրենսդրական համակարգի իրավական կարգավորման ամբողջականության միջոցով՝ սահմանադրաիրավականից մինչև վարչաիրավական կարգավորման մակարդակները:

Սահմանադրաիրավական կարգավորման հիմնական գործունը համարվում է այն նախապայմանը, որ իրավական կարգավորման համակարգի և պետության կառույցի լեզվափոփոխությունը հաստատող *բարձրագույն սուբյեկտ* պետք է հանդիսանա *ժողովուրդը*, որը ամբողջապես մարմնավորում է հասարակությունը:

Այս պարագայում կենտրոնական հիմնախնդիրը համարվում է այն, թե արդյո՞ք ժողովուրդը քաղաքացիական ինքնագիտակցության (քաղաքական գրագիտության) մակարդակի իր փաստացի ունակությամբ կարող է հանդես գալ այդ դերում: Պետք է/կարող է կամ կարող է/պետք է հարցերի փոխհարաբերությունն էլ համարվում է իրավական կարգավորման համակարգի լեզվափոփոխության որակական բնութագրիչներին համապատասխանելու ա-

ռանցքային գործոնը: Հատկապես սկզբունքային է համարվում պետական կառույցի բազիսային նորմերի հաստատումը լեգիտիմացնող սկզբնական ակտի ընդունման ձևն ու ընթացակարգը սահմանող կառուցակարգը՝ հանրաքվեն: Այս պարագայում ***ժողովուրդը հանդես է գալիս որպես լեգիտիմացման սկզբնական սուբյեկտ***: Այսինքն հաստատում է նորմերի իրավական կարգավիճակը, որպես պետականության տրամաբանությանը և դրանից բխող պետական կառույցին համապատասխան մոդել, որը նկարագրում է հասարակության, որպես կառուցվածքային-կազմակերպական օբյեկտի, գործառույթյան ամբողջ մեխանիկան:

Լեգիտիմացման սկզբնական ակտից՝ հանրաքվեից հետո ***ժողովուրդը*** դառնում է ***պետականության կարգավիճակ ունեցող սուբյեկտ*** (քաղաքացիական հասարակություն և իշխանության ինստիտուտներ): Մինչ այդ ***ժողովուրդը հանդես է գալիս որպես օբյեկտ***, որն օժտված է ***լեգիտիմության ինքնիմունիտետով***: Հանրաքվեից հետո նա վերափոխվում է ***լեգիտիմությունը հաստատելու իրավունքով օժտված սուբյեկտի***:

Սահմանադրաիրավական կարգավորման համակարգի մշակման, ընդունման և գործադրման ընթացքում առաջացող համակարգային հակամարտության նկարագրման և կառավարման համար մեր կողմից գործարկվում է լեգիտիմացման հետևյալ աստիճանակարգային համակարգը, որը հնարավորություն է տալիս բացահայտել հակամարտությանը ծագումն ու բնույթը, զարգացման և դրսևորման գործընթացը, ինչպես նաև դրա լուծման մոտեցումները և տրամաբանությունը:

1. Սահմանադրական համակարգի մշակման գործընթացի լեգիտիմությունը:

2. Իշխանության համակարգի իրավական ամրագրման լեգիտիմությունը, որը բխում է Սահմանադրությունից:

3. Իրավական կարգավորման համակարգի ամրագրումը և դրա դատական ու վարչական մշտադիտարկման համակարգը:

Սահմանադրական համակարգի մշտական գործընթացի լեգիտիմությունն ապահովվում է սահմանադրական կարգավորման ենթակա համալիր օբյեկտների նախագծմամբ: Այստեղ ա-

ռանձնացվում է իրավական տարածության ձևավորման սկզբնական նորմատիվ մակարդակը, որից պետք է բխի պետության օրենսդրական համակարգը, հստակ տարանջատելով նորմաստեղծագործության աստիճանակարգը: Այն ենթադրում է նորմաստեղծագործության տարբեր մակարդակների առկայություն ինչպես մեթոդաբանական, այնպես էլ մեթոդական մակարդակներում:

Այս պարագայում անհրաժեշտ է իրավական կարգավորման օրենսդրական մակարդակի նորմաստեղծագործության կիրառման եղանակը բացառել սահմանադրական կարգավորման առարկա հանդիսացող օբյեկտների նկատմամբ և հակառակը: Մասնավորապես, *սահմանադրական օբյեկտներ են համարվում Արարիչը²², Մարդը, քաղաքացին, ժողովուրդը, հասարակությունը, պետությունը, հանրաքվեն, կրոնը, ընտանիքը և այլն: Վերջիններիս հիման վրա է սահմանվում, հաստատվում և գործի դրվում պետության կոնկրետ մոդելը՝ կոնկրետ պետական կառույցով, կոնկրետ ժողովրդի և հասարակության համար՝ հաշվի առնելով համամարդկային արժեքների և ազգային համակարգի արտացոլումը, պատմամշակութային ժառանգության հիման վրա արժեհամակարգի սեփական ընկալումը, ինչպես նաև իրավական մտածելակերպի ձևավորման կոնկրետ մակարդակը:*

Նշված պայմանների բավարարման պարագայում արդեն գործընթացները դեկավարվում են լեգիտիմ սուբյեկտի՝ պետության (լիազորված լեգիտիմացման սկզբնական ակտով) կողմից, որն օժտված է պետական կառավարման աստիճանակարգի հաջորդող սուբյեկտների լեգիտիմացման իրավունքով:

Քննարկվող հիմնախնդիրը, որպես սահմանադրաիրավական կարգավորման համակարգ, իրավաբանական գրականության մեջ միշտ էլ ուսումնասիրվել և դիտարկվել է որպես իրողություն,

²² Մի շարք երկրների սահմանադրություններում Արարիչը հանդիսանում է սահմանադրական ամրագրման առարկա, ինչն էլ նշանակում է, որ Սահմանադրությունը գրված է բնական իրավունքի տրամաբանական հարթությունում: Նշված երկրներից են Պերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Շվեյցարական համադաշնությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան, Իրանի Իսլամական Հանրապետությունը և այլն:

որի ծագումնաբանությունը հիմնականում չի քննարկվել ակադեմիական մակարդակով: Այստեղ նկատի ունենք, թե մինչսահմանադրական կացութաձևում ինչ ընթացակարգով ու մեխանիզմով է մշակվել և գրվել Սահմանադրության նախագիծը, որպես նոր պետության և հասարակության մոդել: Այս առումով պետականության լեգիտիմացման աստիճանակարգի առաջին մակարդակը (սահմանադրաիրավական համակարգի մշակման գործընթաց) պահանջում է ժողովրդի, որպես իրավական ինքնահիմնիտետով օժտված սուբյեկտի, փաստացի ունակությունը հետևյալ դրսևորումներով.

1. Միջազգային իրավունքի շրջանակներում համամարդկային և համաշխարհային արժեքները, նպատակները ընկալելու և դավանելու գիտակցական մակարդակ:

2. Սահմանադրականության իրավական տարածությունում գործող նոր պետության կառույցի ձևավորման անհրաժեշտության ընկալման և հիմնավորման գիտակցական մակարդակ՝ նպատակաուղղված ազգի՝ ժողովրդի բարգավաճմանը:

3. Հիմնական օրենքի և ամբողջությամբ վերցրած օրենսդրական համակարգի որակի չափանիշների ընկալման և հիմնավորման գիտակցական մակարդակ:

Պետք է նկատել, որ այս չափանիշներին օբյեկտիվորեն չի կարող ժողովուրդն ամբողջությամբ համապատասխանել: Վերջինս պետք է ունենա իրավագիտակցության բավարար մակարդակ, որպեսզի իր *անունից սոցիալական պատվեր իջեցնի հասարակության մտավոր ընտրանու այն հատվածին, որն առանձնանում է Սահմանադրության և սահմանադրաիրավական կարգավորման օբյեկտների ընկալման և ձևավորման հիմնարար ակադեմիական մակարդակով, ինչպես նաև ժողովրդի և սերունդների առջև պատմական պատասխանատվության ազնիվ զգացումով:*

Այս տեսակետից որակի չափանիշներին համապատասխան պետականություն ստեղծելու առումով դասական օրինակ է աշխարհում առաջինը համարվող ԱՄՆ 1787 թ. Սահմանադրության, ինչպես նաև ԳՂՀ 1949 թ. Հիմնական օրենքի ծնունդը: Դրանք ստեղծվեցին և ընդունվեցին ազգի «Հայրերի» կողմից, որոնք լիո-

վին համապատասխանում էին վերը նշված որակի չափանիշներին:

Ցավոք նույնը չի կարելի ասել օրինակ նորանկախ պետությունների այդ թվում՝ մեր երկրի մասին: Ներկայում վարչապետի կողմից ձևավորված սահմանադրական փոփոխությունների խորհրդի և հանձնաժողովի անդամները որակի (առավելապես պրոֆեսիոնալ մասնագիտական) որևէ չափանիշով և հասարակության մեջ ունեցած իրենց դիրքով չեն կարող հավակնել լինելու ազգի հայրեր և առավել ևս ունակ լինել իրականացնելու լեգիտիմության չափանիշներին համապատասխանող որակյալ սահմանադրական փոփոխություններ: Պետականության լեգիտիմացման այս փուլից էլ սկիզբ են առնում համակարգային հակամարտությունները:

Դրանք ծագում են «ժողովուրդ» օբյեկտի ոչ միանշանակ դասակարգման և որակավորման արդյունքում, երբ չի բացահայտվում ժողովրդի, որպես պետականության և պետության հարցերը հաստատելու լեգիտիմության ինքնափմունիտետի կրողի իրավական բնույթը, հստակ և միանշանակ չեն սահմանվում ժողովրդի պարտականությունները և դրանց ամրագրման կառուցակարգը: Մասնավորապես «ժողովուրդ» օբյեկտն իր մեջ ներառում է ոչ միայն պետության քաղաքացիներին, այլև կացության այլ կարգավիճակներ (օտարերկրացիներ, ապաքաղաքացիներ, փախստականներ և այլն) ունեցող անձանց, ինչպես նաև ընտրական տարիքի դեռևս չհասած քաղաքացիներին: Որպես հետևանք, անհնար է դառնում որոշելու ժողովրդի՝ որպես հանրաքվեի իրավահարաբերությունների սուբյեկտի, դրսևորման համապատասխան որակները: Արդյունքում հնարավոր է հանրաքվեի՝ որպես սահմանադրական գործընթացի և ժողովրդի ընտրության իրավունքի էության և բովանդակության ձևախեղում՝ վերջինիս՝ (որպես իրավունքի սուբյեկտ) իր պարտականությունները լիակատար կատարելու ոչ իրավասու լինելու հետևանքով: Մինչդեռ հայտնի է, որ ***սուբյեկտին իրավասությամբ կարող է օժտել միայն նրա օբյեկտիվ ունակությունը:*** Հետևաբար, եթե ժողովուրդը աչքի չի ընկնում քաղաքացիական իրավասության պատշաճ մակարդակով,

ապա Սահմանադրության ընդունման հանրաքվեն կարող է ունենալ ձևական և տեխնիկական բնույթ և հանգեցնել համակարգային հակամարտության: Որպես առաջնային սահմանադրական օբյեկտ, ժողովուրդն ի վերուստ ունի իրավական ինքնաիմունիտետ, որի կամահայտնությունից կախված է ամեն բան, սակայն փաստացի ունակության տեսակետից եթե չունի տարրական քաղաքական գիտելիքներ, նա չի կարող ունենալ էլեկտորատի, առավել ևս հանրաքվեի սուբյեկտի կարգավիճակ: Բացի այդ, հանրաքվեն, որպես ժողովրդի կամահայտնության միջոցով պետականության լեգիտիմացման սկզբնական կառուցակարգ, պետք է հանդես գա որպես սահմանադրական կարգավորման հիմնարար օբյեկտ և այն չի կարող կարգավորվել ընդամենը սովորական օրենքի մակարդակով: Այս հանգամանքի հաշվառմամբ Հայաստանի Հանրապետության 2015 թ. Սահմանադրական փոփոխություններով «Հանրաքվեի մասին» օրենքին տրվեց սահմանադրական օրենքի կարգավիճակ: Հետևաբար կարծում ենք, որ սահմանադրական մակարդակով անհրաժեշտ է ամրագրել *ժողովրդի՝ իրեն պատկանող ինքնիշխանության վերաբերյալ տարրական գիտելիքներ ունենալու պարտականությունը, որի որակականության ապահովման պարտականությունը պետք է դրվի պետության վրա:*

Քաղաքացիական հասարակության կողմից պետական կառույցի, որպես ամբողջական համակարգի և իրավական լեգիտիմության անհրաժեշտության գիտակցական պահանջի բացակայության արդյունքում խնդիր է առաջանում մոդելավորել իրավական տարածություն, որն իր մեջ կներառի ինչպես պետությունը, այնպես էլ իրավական կարգավորման համակարգը, որն ուղեկցվում է պետականության, որպես համակարգի, լեգիտիմության իրավական ամրագրմամբ: Նշված սոցիալական պահանջն ունի համակարգային բնույթ, ինչպես հասարակության (բոլոր շերտերի) քաղաքացիական իրավասության, պետական մտածողության մակարդակի և իրավական պետականության և իրավական հասարակության առարկայի ընկալման տեսակետից, այնպես էլ ժողովրդի կամահայտնության ձևական ընթացակարգի որոշակի ձևի պատկերացման տեսանկյունից: Այս մակարդակում էլ հենց

ծագում է ամենասկզբնական համակարգային հակամարտությունը, որի հակամարտածինության դասը դիտարկվում է որպես լեզգիտիմության շեղում՝ իրավական տարածության կոորդինատների համակարգի մակարդակում: Անկասկած հակամարտությունների այս դասն ունի համակարգային բնույթ, որի արդյունքում հակամարտության կողմեր կարող են դառնալ հետևյալ սուբյեկտները.

1. *Ժողովուրդ-պետականություն,*
2. *պետականություն-իշխանություն,*
3. *քաղաքացի-պետություն:*

Սահմանադրաիրավական կարգավորման համակարգային առանցքային որակական հատկությունը պայմանավորված է հասարակության մեջ դրսևորվող ցանկացած վարքագծի իրավական արտացոլման հստակ կառուցակարգի առկայությամբ՝ սահմանադրաիրավականից մինչև վարչաիրավական մակարդակ: Այն ներառում է նաև հասարակության իրավական վարքագծի ինքնակարգավորվող ռեֆլեքսները, որոնք ձևավորում են բարոյամշակութային ավանդույթները՝ հասարակական փոխհարաբերությունների բոլոր ոլորտներում, վերջին հաշվով սահմանելով «չգրված Սահմանադրությունը»:

Սահմանադրական կարգավորման համակարգի վերը նշված հատկությունների բացակայության պարագայում ծագում են համակարգային հակամարտություններ, որոնք դրսևորվում են իրավական կարգավորման համակարգի տարբեր մակարդակներում: Այսպես, հակամարտությունը ծագում է այն ժամանակ, երբ պետականությունը, որպես ինքնուրույն կատեգորիա՝ իր որակական հատկանիշներով պահանջում է *ժողովրդից համապատասխան ունակություն՝ հանդես գալու որպես պետության և պետական կառույցի համապատասխան մոդելի միջոցով իր հասարակական կեցության կազմակերպման ձևի անհրաժեշտությունը որոշող բարձրագույն իրավական առյան,* և այդ պայմանը չի ապահովվում: Արդյունքում, պետականության և դրա կազմակերպաիրավական ձևերի էության և բովանդակության ընկալման անկարողությունը կարող է հանգեցնել իրավիճակի, երբ ժողովուրդը հաջորդաբար

կքվեարկի տարբեր և նույնիսկ միմյանց հակասող պետականության մոդելների օգտին, որոնք դեկլարատիվ մակարդակում ունեն միևնույն նպատակը՝ ժողովրդի բարեկեցությունն ու բարգավաճումը: Ասվածը կարելի է հիմնավորել Եգիպտոսի օրինակով: Մասնավորապես, 2011 թ. Եգիպտոսում ժողովրդավարական կարգեր հաստատելու պատրվակով գերտերությունների աջակցությամբ տեղի ունեցավ հեղափոխություն, որի արդյունքում երկրի իշխանության ղեկին եկավ «Սահմեդական եղբայրներ» քաղաքական կուսակցությունը, որն աչքի էր ընկնում ծայրահեղ իսլամիստական հայացքներով և ոչ մի չափանիշով չէր համապատասխանում ժողովրդավարության պահանջներին: 2012 թ. դեկտեմբերի 15-ին անցկացվեց հանրաքվե, որի արդյունքում ընդունվեց Եգիպտոսի նոր Սահմանադրությունը:

Արդյունքում այդ երկրում ավելի լայն թափ առավ նոր հակամարտություն: Խնդիրն այն է, որ նոր սահմանադրության նախագծով երկրի իրավական համակարգի հիմքում դրվեցին Շարիաթի սկզբունքները, և էապես ընդարձակվեցին պետության զլխի լիազորությունները:

Այդ առումով, սահմանադրական հանրաքվեի դիտորդները արդարացիորեն նշեցին, որ նոր Սահմանադրությունը կսատարվի հանրաքվեին մասնակցող անգրագետ գյուղացիական բնակչության հաշվին, իսկ դրա ընդունումից հետո երկրում կսկսվի նոր պառակտում, քանի որ լիբերալներն ու քրիստոնյաները դժվար թե համաձայնվեն ապրել նոր Սահմանադրության պայմաններում, որը հիմնված է Շարիաթի սկզբունքների վրա²³:

Վերոնշյալ նկատառումներով էլ Եգիպտոսի լիբերալ «Ադ-Դուստուր» կուսակցության հիմնադիր Մուհամեդ Էլ-Բարադեյը (ՄԱԳԱՏԷ-ի նախկին ղեկավար) նկատում էր. «Հանրաքվեից հետո երկրի նոր հիմնական օրենքով Եգիպտոսի պառակտումը իսլամիստական և աշխարհիկ ճամբարների ավելի է խորացել, իսկ պետության հիմքերը սկսում են քանդվել: Շատ եգիպտացիների աղքատությունն ու անգրագիտությունը ամենապարարտ հողն են

²³ Տե՛ս http://www.topnews.ru/news_id_55041.html

ստեղծում կրոնի առուծախի համար»²⁴:

Եգիպտոսի օրինակը դասական առումով իր դրսևորումն ունեցավ այլ երկրներում, օրինակ Ուկրաինայում և Հայաստանի Հանրապետությունում: Մեր երկրում իշխանության եկած քաղաքական ուժերի կողմից դեգրադացիան այն աստիճան արմատավորվեց ժողովրդի մեջ, որ անգամ Արցախյան պատերազմի ցավալի և դավաճանական պարտության արդյունքում ժողովրդի մեծամասնությունը արտահերթ խորհրդարանական ընտրություններում իր վստահության քվեն վերստին տվեց պատերազմում պարտված իշխանությանը, ինչն աննախադեպ է համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ:

Ժողովրդի փաստացի անկարողությունը, որպես կանոն, ծնում է երկրորդ մակարդակի հակամարտությունը, որում ժողովրդի փաստացի իրավասությունը փոխանցվում է ընթացիկ իշխանությանը, իսկ սահմանադրական օբյեկտները տեղափոխվում են սովորական օրենսդրության իրավական կարգավորման մակարդակ, գործող իշխանության իրավական հարմարավետությունը ապահովելու առաջնությամբ, ստեղծելով համակարգային հակամարտություն: Այս մակարդակում հիմնարար սկզբունքները հաճախ ծխածածկույթի դեր են խաղում օրենքի անունից քաղաքական և անձնական նպատակահարմարության իրականացման համար²⁵:

Այս իրավիճակի տրամաբանությամբ փաստացի գոյություն ունեցող պետությունը համարվում է «սահմանադրական», իսկ պետականությունը պետք է լինի այնպիսին, որ համապատասխանի այդ պետությանը: Այն ամենը, ինչը չի համապատասխանում պետությանը, համարվում է ոչ սահմանադրական: Արդյունքում համապատասխան պետականության օբյեկտիվ բնույթը հա-

²⁴ St´u <http://mir-politika.ru/2649-egipet-konstitucionnyy-referendum-raskolol-stranu.html>.

²⁵ St´u Деформации конституционализма в Евразийском пространстве, Интервью с председателем конституционного суда Республики Армения, доктором юридических наук, профессором Арутюняном Гагиком Гарушевичем. Евразийский юридический журнал, номер 7(26)2010, <http://www.eurasialaw.ru/>

կամարտության մեջ է մտնում սուբյեկտիվորեն սահմանված իշխանության իրավունքի հետ, որը որպես այդպիսին, չունի *ինքնահիմունիտետի իրավունք*, որի *բացառիկ կրողը ժողովուրդն* է: Նույնիսկ եթե իշխանությունը հանդես է գալիս ժողովրդի անունից, դա *ներկայացուցչական իրավական կարգավիճակ է, այլ ոչ թե լեգիտիմության ինքնահիմունիտետ*: Այս հակամարտության առկայությունն ուղեկցվում է հայեցակարգային դեֆոլտով:

Եթե ժողովուրդը չի հասկանում ինչ է պետականությունը, հետևաբար չի կարող ներկայացված լինել լեգիտիմ ընտրանիով, որը կարող է արտացոլել պետության՝ իր ամբողջ յուրահատկությամբ ընկալվելու ունակությունը: Արդյունքում, ժողովուրդը չի կարող հանդես գալ որպես պետականության մոդելը գնահատող, հաստատող, գործի դնող սուբյեկտ: Նա կարող է կուրորեն ընդունել պետականության տարբեր ընկալումները, որոնք կարող են հիմնված լինել ոչ պետական մոտեցումների վրա: Այս պարագայում թույլ է տրվում, որպեսզի պետականության կերտման գործընթացները ընթանան *ինքնաձևավորման, ինքնակազմավորման և ինքնահոսի գարգացման* ուղղությամբ: Արդյունքում բնակչության մոտ իշխանությունների հանդեպ ձևավորվում է անվստահություն և դժգոհություն:

Ե՞րբ է դժգոհող հասարակությունը վերածվում բողոքավոր կոնտինգենտի: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ սահմանադրաիրավական կարգավորման անհավասարակշռված համակարգի արդյունքում բացակայում է իրավական համակարգի աստիճանակարգի ամբողջական և փոխադարձ կապվածությունը, իշխանությունների տարանջատման անհավասարակշռված համակարգում ձևավորված չեն լինում և լիարժեք չեն գործում պետական իշխանության ինստիտուտները, առկա է լինում քաղաքացիական իրազեկության և քաղաքացիական ինքնագիտակցության անբավարար կամ ցածր մակարդակ, քաղաքացիական հասարակության չձևավորված մտածելակերպ: Արդյունքում հասարակության *դժգոհություն-բողոքի* առաջացումը հիմնվում է առավելապես *անվստահության* վրա, որն ինքնին ունի հոգեհուզական բնույթ, քան *անհամաձայնության*, որը տրամաբանական հիմ-

նավորմամբ պետք է հենվի պահանջի գիտակցական ձևակերպման վրա: Որպես դասական օրինակ կարելի է բերել Հայաստանի Հանրապետությունում 2018 թ. ապրիլին իրականացված իշխանափոխության լուզուզը՝ «Մերժիր Սերժին», որը զուրկ էր որևէ գաղափարական հիմքից և գտնվում էր լոկ հոգեհուզական տիրույթում:

Մինչդեռ պետություն-հասարակություն փոխհարաբերություններում սահմանադրաիրավական կարգավորման համակարգը կոչված է կարգավորելու *անհամաձայնության դրսևորումը*, ճնշելու *պրոպոկլազիոն դժգոհությունն* ընդհանրապես և կանխելու սահմանադրաիրավական կարգավորման համակարգի նկատմամբ ձևավորված *անվստահությունը*, որը որպես կանոն, զուրկ է լինում տրամաբանական հիմնավորումից և փաստարկումից: Առաջացած իրավիճակում ինչպես իշխանության (որը պարտավոր է ապահովել սահմանադրական կարգը), այնպես էլ հասարակության գործողությունները բովանդակային առումով դառնում են ոչ լեգիտիմ: Արդյունքում հակամարտության կողմերից յուրաքանչյուրը ձգտում է *«սեփականաշնորհել»* երկրի Սահմանադրությունը, որպես իր ոչ լեգիտիմ գործողությունների ամրագրում: Ստեղծվում է իրավիճակ, երբ հասարակության բողոքավոր կոնստիդենտի վարքագծային դրսևորումները ձեռք են բերում զանգվածային անկարգությունների բնույթ և «հիմնավորվում» որպես Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդի կամահայտնության իրավունքի իրացում: Իսկ բողոքավոր կոնստիդենտի ագրեսիվ վարքագծի կանխումն ու վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդումները իշխանության ինստիտուտները «հիմնավորում» են որպես Սահմանադրությամբ իրենց վրա դրված սահմանադրական կարգի պահպանման պարտականության կատարում:

Ակնհայտ է, որ այս պարագայում իշխանության մոտ դա ավելի լավ է ստացվում, քանի որ վերջինս տիրապետում է վարչական ռեսուրսներին և հարկադրանքի միջոցներին: Արդյունքում բախվում են երկու «լեգիտիմները», ինչը հանգեցնում է անկառավարելի համակարգային հակամարտության: ՌԻստի բողոքի ինքնաբերաբար դրսևորումը կարող է առաջացնել հակամարտություն:

- ա) բնակչության տարբեր սոցիալական խմբերի միջև,*
- բ) իշխանության կառույցների միջև,*
- գ) բնակչության և իշխանության միջև:*

Բողոքի ծագումնաբանությունը, որպես իրավաբանական կատեգորիա, և դրա դրսևորման բնույթը մեր կողմից դիտարկվում է որպես *հասարակության մեջ խրոնիկ դժգոհության առկայության արդյունք՝ դրա վերացման սահմանադրաիրավական կարգավորման համակարգի մշտական անկարողությամբ*: Արդյունքում ձևավորվում է հասարակության մեջ *բողոքավոր կոնտինգենտը*:

Դժգոհությունը բողոքի վերածվելու դեպքում վերջինիս (բողոքի) պահանջի իրավական հիմքն արդեն էապես տարբերվում է նախորդից նրանով, որ.

ա) Փաստարկվում է, որ դժգոհության առարկայի հետ կապված առկա է անլուծելիություն,

բ) որ գործող սահմանադրաիրավական կարգավորման համակարգը վստահություն չի ներշնչում, որի արդյունքում ծայր են առնում անհամաձայնությունը և առարկությունները կարգավորման վերաբերյալ: Իրավական ընթացակարգերով, թեև այն երբեմն ունենում է նաև օբյեկտիվ հիմքեր:

Տվյալ պարագայում ո՞րն է խնդրի լուծումը: Ակնհայտ է, որ բնակչության անվստահության դրսևորումը, որն ունի հոգեկան-հուզական բնույթ, հնարավոր չէ նկարագրել սահմանադրաիրավական նորմերով և կարգավորել իրավական ընթացակարգերով, թեև այն երբեմն ունենում է նաև օբյեկտիվ հիմքեր: *Բնականաբար, իշխանությունը չպետք է անտեսի քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորված չլինելու հանգամանքը և ապավինի դրանց ինքնաձևավորմանը*:

Ընդհակառակը, նա պետք է ձեռնամուխ լինի հասարակության ինքնագիտակցության բարձրացմանը և քաղաքացիական հասարակության մտածելակերպի ձևավորմանը, ինչը կբացառի հասարակության դժգոհության սադրիչ հոգեհուզական դրսևորումների հավանականությանը և կփոխարինի այն *տրամաբանական ձևաչափով անհամաձայնություն* դրսևորելու տարբերակով: Նշված անհամաձայնության դրսևորման յուրաքանչյուր կոնկրետ դեպքն ու չափանիշները պետք է նկարագրվեն սահմանադրաիրավական

րավական նորմերով, ինչը իշխանությանը հնարավորություն կտա հակամարտությանը տալ իրավական որակում և գտնելու խնդրի լեգիտիմ լուծումներ: *Հակառակ պարագայում, եթե իշխանությունն ի վիճակի չի լինում գնահատելու քաղաքացիական կոնտինգենտի ընթացիկ կարգավիճակը, ապա ազատ հավաքների մասին ընդունված ցանկացած օրենք զուրկ է լինում հայեցակարգային հիմքերից, վերածվում է տեխնիկական բնույթի փաստաթղթի և ի գորու չի լինում կանխել զանգվածային անկարգությունները:*

Ժողովուրդը, որպես իրավական համակարգի լեգիտիմությունը որոշող առաջին ատյան, պետք է ունենա քաղաքացիական իրազեկության բավարար մակարդակ, որպեսզի գիտակցական մակարդակով կարողանա իրեն *ինքնանույնականացնել որպես լեգիտիմության բարձրագույն սուբյեկտի* և որպես այդպիսին՝ ապահովել իր ապաքաղաքականացված լինելու կարգավիճակը:

Բողոքի դրսևորման իրավական համարժեքության կտրվածքով վերջինիս նորմատիվ նկարագրական և սահմանադրաիրավական կարգավորման չափանիշների բացակայության արդյունքում հասարակության և իշխանության ինստիտուտների միջև ձևավորվում է *առաջին ատյանի կարգավիճակի հակամարտություն*, որը որոշում է բողոքով ուղեկցվող ամբողջ իրավական համալիրի լեգիտիմությունը ընթացիկ ժամանակահատվածում: Այստեղ կողմերից յուրաքանչյուրը ձգտում է ամեն գնով ցույց տալ իր առաջին ատյան լինելու կարգավիճակը՝ ժողովուրդը, որպես իշխանության բացառիկ աղբյուր, կրող և պետության իրավական համակարգի (հանրաքվեով ընդունված Սահմանադրության) հեղինակ, իսկ իշխանությունը՝ որպես երկրի սահմանադրական կարգի պաշտպան և պատասխանատու: Արդյունքում երկու կողմերի վարքագիծը սկսում է ունենալ ագրեսիվ դրսևորումներ, որի անկառավարելիության հետևանքով առաջանում է քաղաքացիական անհնազանդություն և տեղի է ունենում սոցիալական պայթյուն:

§ 3. Ժողովրդախիշխանության իրացման ժամանակակից կառուցակարգերը

Ժամանակակից ժողովրդավարական երկրներում ժողովուրդն իրեն պատկանող ինքնիշխանությունն իրականացնում է *ազատ ընտրությունների, հանրաքվեների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց* միջոցով: Սրանք ժողովրդախիշխանության իրականացման այն հիմնական կառուցակարգերն են, որոնք տեղ են գտել ժամանակակից ժողովրդավարական երկրների սահմանադրություններում²⁶: Այստեղից ողջամտորեն հարց է առաջանում. Արդյո՞ք վերը նշված կառուցակարգերը *իշխանության իրականացման, թե՞ ժողովրդական ինքնիշխանության իրականացման կամ ուղղակի իշխանության ձևավորման* կառուցակարգեր են: Նախորդ պարագրաֆներում հիմնախնդրի քննարկման արդյունքում եկանք այն եզրահանգման, որ *օբյեկտիվորեն ժողովուրդն իր հավաքական անբողջականությամբ չի կարող իրականացնել իշխանությունը*: Այն իրականացնում է *պետությունը*, իսկ ժողովուրդը ձևավորում է պետական իշխանության մարմիններին ու պաշտոնատար անձանց: Թեպետ ընդդիմախոսները կարող են նշել, որ հանրաքվեն հանդես է գալիս որպես ժողովրդախիշխանության իրականացման անմիջական ձև, այդուհանդերձ դրա կազմակերպման, իրականացման և արդյունքների ամփոփման իրավական կառուցակարգերի առումով փորձը ցույց է տալիս, որ ծագում են բազում համակարգային հակամարտություններ, որոնք ցույց են տալիս, որ պետության դերակատարությունն ավելի մեծ է քան ժողովրդի կամահայտնությունը:

Փորձենք առանձին-առանձին անդրադառնալ ժողովրդախիշխանության իրացման կառուցակարգերին և դրանց առնչվող հիմնախնդիրներին:

1. Ժողովրդախիշխանության իրացման առաջին կառուցա-

²⁶ Տե՛ս օրինակ Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Չեխիայի, Բուլղարիայի և այլ երկրների սահմանադրությունները:

կարգը համարվում են ազատ ընտրությունները: Իրավաբանական գրականության մեջ «ընտրություն» եզրույթը մեկնաբանվում է որպես համապատասխան մարմնի կազմավորման կամ պաշտոնատար անձին լիազորություններով օժտելու գործընթաց, որն իրականացվում է իրավագոր անձանց քվեարկության միջոցով²⁷: Ընտրությունների միջոցով տարբեր երկրներում ժողովուրդը ձևավորում է պետության գլուխը, օրենսդիր, գործադիր, երբեմն նաև դատական իշխանության մարմինները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Ասվածից հետևում է, որ ժամանակակից ժողովրդավարական պետություններում ընտրություններն իրենցից ներկայացնում են ժողովրդի կամահայտնության հիմնական ձև, ժողովրդական ինքնիշխանության իրականացման ձև»: Ընտրությունների միջոցով իշխանության ձևավորումը բավականին բարդ և միաժամանակ նուրբ խնդիր է: Քանզի ընտրությունների բովանդակությունը պետք է միանշանակ լինի ժողովրդի *կամահայտնությունը*, այլ ոչ թե ներկայացուցչական մարմինների անհատական կազմի ձևավորումը:

Սա հենց այն առանցքային հիմնահարցն է, որից կախված է պետականության որակը իր բոլոր հետևանքներով: Քանզի ընտրությունների և հանրաքվեների միջոցով ժողովուրդը ոչ միայն ձևավորում է իր երկրի ընթացիկ իշխանությունը, այլ կերտում իր ներկան ու ապագան՝ ճակատագիրը: Բնականաբար պետական իշխանության ձևավորման գործընթացում կարևորվում է ժողովրդի գիտակցական ընտրությունը: Այստեղ հարց է ծագում՝ արդյո՞ք երկրի ճակատագրի կերտումը ժողովրդի ազատությունն է, թե՞ պարտականությունը: Այս առումով անհրաժեշտ է պարզաբանել «կամահայտնություն» և «ազատություն» եզրույթների իրավական բովանդակությունը:

Ազատության իրականացումը որպես կանոն չի նախատեսում սուբյեկտի կողմից գործողության կատարման հետևանքների համար պատասխանատվության գիտակցում, մինչդեռ կամքի

²⁷ Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք 2, դասագիրք բուհերի համար, պրոֆ Ն. Ա. Այվազյանի խմբագրությամբ, Երևան 2016, էջ 83:

արտահայտության դեպքում պահանջվում է իրավասուբյեկտության ավելի բարձր մակարդակ, այսինքն ընտրության կամ հանրաքվեի մասնակիցը պարտավոր է ընկալել իր կատարած քայլի հետևանքները և կրել դրա համար նախատեսված պատասխանատվությունը:

Կերը նշված իրողությունը հիմնավորենք մեր երկրում ծավալված և ընթացող քաղաքական գործընթացների օրինակով: Անկախություն ձեռքբերելուց հետո Հայաստանի Հանրապետության ժողովուրդը փաստացի չկարողացավ իր պետականությունը կերտել գիտակցական մակարդակում: Արդյունքում իշխանության եկած քաղաքական ուժերը նույնպես չտիրապետելով պետականության կերտման բարդ գործընթացի վերաբերյալ գիտելիքներին, մեր երկիրը տարան պետության կերտման ոչ թե *հայեցակարգորեն հիմնավորված*, այլ *ինքնահոսի* ուղով: Հետևանքը եղավ այն, որ ստեղծված նորանկախ պետությունը դուրս մնաց պետականության որակականության դասական չափանիշների համակարգից, որի արդյունքում կտրուկ ընկավ ժողովրդի կենսամակարդակը և սկսեց տեղի տալ սոցիալական խիստ բևեռվածությունն ու անարդարությունը: Այդ պայմաններում իշխանությունների վերարտադրման ամենադյուրին կառուցակարգը դարձան ընտրակաշառքն ու ընտրությունների արդյունքների կեղծումը: Արդյունքում յուրաքանչյուր ընտրությունից հետո իշխանությունը կորցնում էր իր ինստիտուցիոնալ բնույթն ու ձեռք էր բերում անձնավորված բնույթ իր բոլոր դրսևորումներով: Այս արատավոր երևույթն արմատավորվեց հասարակության գիտակցության մեջ և լռելյայն դարձավ ընդունելի քաղաքական մշակույթ, երբ քաղաքացիներն անհամբեր սպասում էին հերթական կամ արտահերթ ընտրություններին, որպեսզի վաճառեին իրենց քվեն: Նման դեգրադացիայի պայմաններում դժվար թե հասարակության մեծամասնության մոտ պահպանվեր ազատ կամքի դրսևորման և պետության ճակատագրի հանդեպ պատմական պատասխանատվության գզացումը: Արդյունքում ժողովրդի ինքնիշխանության իրացումը ստացավ ոչ թե *գիտակցական և կամային*

բնույթ, այլ լոկ սեփական ազատության և նեղ անձնական շահի իրացման ձևաչափ: Այդ արատավոր պրակտիկայի շարունակականության արդյունքում երկրում առաջնային պլան մղվեց պոպուլիզմն ու ամբոխավարությունը, երբ յուրաքանչյուր քաղաքացու գիտակցության մեջ նստած էր այն թեզը, որ որքան պետությունից շատ գողանա, այնքան մեծ հեղինակություն կունենա:

Իրավիճակը հանգեցրեց այսպես կոչված թավշյա իշխանափոխությանը և դրա արդյունքում հայոց պետականության խորը ճգնաժամին:

Այսօր մեր հասարակության մեջ դժգոհությունը ձեռք է բերել խրոնիկ բնույթ և պետության ու հասարակության միջև չեն դադարում հակամարտություններն իրենց բոլոր տեսակի դրսևորումներով:

Այս պարագայում ժողովրդի մտավոր էլիտային արդեն սկսում է արդարացիորեն առաջ քաշել այն հարցը, թե **արդյո՞ք ժողովուրդն օժտված լինելով իշխանություն ձևավորելու բնական իրավունքով, ունի նաև վերջինից ձերբազատվելու լեգիտիմ իրավունք:**

Այս առումով մեր երկրի իրավական համակարգը հստակ չի տալիս այդ հարցի պատասխանը: Կարծում ենք այս վիճակը մեր երկրում սահմանադրականության բացակայության արդյունք է: Իսկ սահմանադրականության սիստեմատեխնիկան խարսխված է հենց այն հանրահայտ հանգամանքի վրա, որ սահմանադրությունը պետք է գրված լինի **բնական իրավունքի տրամաբանական հարթության մեջ և պոզիտիվ իրավունքի նորմերը չեն կարող որևէ մրցակցության կամ հակասության մեջ մտնել բնական իրավունքի հանրահայտ սկզբունքների հետ:** Հենց այս տրամաբանությամբ էլ ապստամբության (լատիներեն. *jus resistendi*) կամ որ նույնն է՝ ճնշմանը դիմադրելու, հեղափոխության իրավունքը պետք է դիտարկել որպես քաղաքացիների՝ բոլոր միջոցներով, ընդհուպ մինչև զինված պայքարը, ուզուրպատորներից իր իրավունքների և ազատությունների պաշտպանություն: Այն դասվում է բնական իրավունքների շարքը, այսինքն չի պահանջում հաստատում պո-

զիտիվ իրավունքի նորմերով²⁸:

Շահագործմանը դիմադրելու իրավունքի հիմնավորումը սկիզբ է առնում դեռևս անտիկ իրավունքում, որը կոչվում էր **բռնակալի սպանություն**։ Իր աշխատանքներից մեկում Յոհան Սոլսբերին գրում էր. «**Բռնակալին սպանելը ոչ միայն օրինական է, այլ ճիշտ և արդարացի**»²⁹:

Բռնությանը դիմադրելու իրավունքն առաջին անգամ իրավական ամրագրում ստացավ 1776 թ. ԱՄՆ անկախության հռչակագրի արեամբուլայում, որտեղ ասվում էր, որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար, և որ Արարչի կողմից նրանց տրված են մի շարք անօտարելի իրավունքներ, այդ թվում՝ կյանքի, ազատության և երջանկության իրավունքը: Այս իրավունքների ապահովման համար մարդկանց կողմից ստեղծվում են կառավարություններ, որոնք իրենց իշխանությունն օգտագործում են կառավարվողների համաձայնությամբ, և եթե ինչ-որ կառավարություն խոչընդոտում է այս նպատակներին հասնելուն, ապա ժողովուրդն իրավունք ունի փոխել կամ վերացնել դրան և հիմնել նոր կառավարություն այնպիսի սկզբունքներով, որն իր իշխանությունն այնպես կկազմակերպի, որպեսզի լավագույնս ապահովի ժողովրդի անվտանգությունն ու երջանկությունը: Եթե չարաշահումների և բռնությունների երկար շարքը հայտնաբերում է ժողովրդին բացարձակ դեսպոտիզմի ենթարկելը, ապա ժողովրդի **պարտականությունն ու իրավունքն է տապալել այդպիսի կառավարությունը և ստեղծել նոր երաշխիքներ իր հետագա անվտանգության ապահովման համար**³⁰:

Երկրորդ իրավական լուրջ փաստաթուղթը 1789 թ. Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագիրն է, որը

²⁸ Տե՛ս Marsavelski, A. (2013) *The Crime of Terrorism and the Right of Revolution in International Law*" *Connecticut Journal of International Law*, Vol. 28, էջ 266-285:

²⁹ Տե՛ս Крестовская Н.Н., Цвиркун А.Ф. История политических и правовых учений: Курс лекций. Харьков, Одиссей, 2002, էջ 89:

³⁰ Տե՛ս Декларация независимости США от 4 июля 1776 г., URL: <http://www.hist.msu.ru/ER/Text/indpndnc.htm>

1971 թվականին հուլիսի 16-ի Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի որոշմամբ ճանաչվեց պարտադիր իրավաբանական ուժ ունեցող փաստաթուղթ, որի ուսնահարումը որակվեց որպես հակասահմանադրական³¹, այսինքն դարձավ Ֆրանսիայի գործող սահմանադրության բաղկացուցիչ մաս: Ավելին այն 1793 թ ընդարձակվեց և նրանում զետեղվեցին հետևյալ ձևակերպումները. «Յուրաքանչյուր ոք, ով կյուրացնի ժողովրդին պատկանող ինքնիշխանությունը, անհապաղ կենթարկվի մահապատժի ազատ քաղաքացիների կողմից»:

- Ճնշման դիմադրությունը մարդու այլ իրավունքներից բխող հետևանք է:

- Հասարակության գեթ մեկ անդամի ճնշումը դա ամբողջ հասարակական միության ճնշումն է: Հասարակական միության ճնշումը դա հասարակության առանձին անդամի ճնշումն է:

- Երբ կառավարությունը խախտում է ժողովրդի իրավունքները, ապա ապստամբությունը ժողովրդի և նրա յուրաքանչյուր մասի համար սրբագույն իրավունք է և անհետաձգելի պարտականություն³²:

Բռնությանը դիմադրելու ժողովրդի իրավունքը ժամանակակից ժողովրդավարական երկրներում այնքան էլ լայն տարածում չի ստացել այն հիմնավորմամբ, որ Սահմանադրությունը հռչակելով ժողովրդի ինքնիշխանությունը, ենթադրում է, որ պետության մեջ իշխանության բացառիկ աղբյուրը համարվում է ժողովուրդը, հետևաբար վերջինս լիարժեք իրավունք ունի դիմադրել իշխանության բռնազավթմանը և չարաշահումներին: Այդուհանդերձ որոշ երկրներ ուղղակիորեն սահմանել են այդ իրավունքը, իսկ աշխարհում առաջինը համարվող ԱՄՆ Սահմանադրությունը այդ խնդրին անդրադարձել է անուղղակի՝ որոշ նրբերանգներով: Այսպես ԱՄՆ Սահմանադրության երկրորդ ուղղման մեջ *ժողովրդին*

³¹ St' u Ermanno Vitale. Costituzione e ius resistendi // Quaderno di storia contemporanea. 2010. F. 47, էջ 11-30:

³² St' u Конституция Франции., URL: <http://www.hist.msu.ru/ER/Text/cnst1793.htm>

(*ոչ թե քաղաքացիներին*) տրվում է զենք պահելու և կրելու իրավունք, «քանի որ այդ կերպ կազմակերպված միլիցիան անհրաժեշտ է ազատ պետության անվտանգության համար»: Նման միլիցիան չպետք է ընկալել որպես պետական զինված ուժերի օժանդակ մարմին, քանի որ այն 5-րդ ուղղման համաձայն կարող է ծառայության զորակոչվել ոչ միայն պատերազմի ժամանակ, այլև հասարակությանը (այլ ոչ թե պետությանը) սպառնացող ցանկացած վտանգի դեպքում:

Անկասկած նման վտանգ կարելի է դիտարկել նաև ոչ ժողովրդավարական դիկտատուրան³³:

Բռնությանը ժողովրդի դիմադրելու իրավունքն իր անմիջական ամրագրումն է ստացել ԳԴՀ գործող 1949 թ, և Շվեյցարիայի սահմանադրություններում: Այս երկու սահմանադրություններն էլ իրենց պրեամբուլաներում հստակ ամրագրում են բնական իրավունքի գերակայությունը՝ սահմանելով սահմանադրական հիմնական օբյեկտի՝ մարդու, աստվածային ծագումնաբանությունը և նրա պատասխանատվությունը Արարչի առջև: Հենվելով սահմանադրականության այս հիմնարար սկզբունքի վրա՝ ԳԴՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը, երկիրը հռչակելով ժողովրդավարական և սոցիալական դաշնային պետություն, սահմանում է, որ. «ցանկացած ոք, ով կփորձի վերացնել այդ կարգը, բոլոր գերմանացիները իրավունք ունեն դիմադրություն ցույց տալու, եթե այլ միջոցները չեն օգտագործվի»³⁴: Ոչ պակաս ուշագրավ է Շվեյցարական համադաշնության սահմանադրության պրեամբուլան, որում նրբանկատորեն ակնարկ է արվում բռնության դիմադրությանը. «Ազատ է համարվում լոկ նա, ով օգտագործում է իր ազատությունը»:

Այդ ամենի հետ մեկտեղ նմանատիպ նորմեր ամրագրված են նաև Պորտուգալիայի Սահմանադրության 7-րդ հոդվածում, համաձայն որի՝ միջազգային հարաբերություններում «Պորտու-

³³ Ст'а Конституция Соединенных Штатов Америки 1787 г., URL: <http://www.hist.msu.ru/ER/Etext/cnstUS.htm>

³⁴ Ст'а Konstitutsii gosudarstv (stran) mira, URL: <http://worldconstitutions.ru/>

գալիան ճանաչում է ժողովուրդների ինքնորոշման և անկախության իրավունքը, ինչպես նաև ցանկացած ճնշումների դեմ ապստամբելու իրավունքը»: Հիշատակման արժանի են նաև Իռլանդիայի, Չեխիայի, Էստոնիայի, Լիտվայի սահմանադրությունները: Այդ համատեքստում պետք է ուսանելի լինի Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Վ. Պուտինի Դաշնային ժողովին ուղղված իր ամենամյա ուղերձում հղած խոսքը, որում հատուկ ընդգծեց. «Ռուսաստանը միայն այն դեպքում կարող է պահպանել իր պետականությունն ու ինքնիշխանությունը, եթե երկրի քաղաքացիները վստահ լինեն այն բանում, որ պետության բոլոր ջանքերն ուղղված են իրենց շահերի պաշտպանությանը, յուրաքանչյուր քաղաքացի պետք է զգա իր ներգրավվածությունը երկրի ձակատագրին: Ռուսաստանի Դաշնության քաղաքացիները ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով իրավունք ունեն և ի գորու են երաշխավորել երկրի քաղաքական հիմքերի զարգացման անսասանությունը: Ազատ ընտրություններն ու հանրաքվեն հանդիսանում են ժողովրդի կամքի արտահայտման բարձրագույն և անմիջական ձևեր»³⁵:

Ժամանակակից ժողովրդավարական կարգ ունեցող պետությունների սահմանադրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ հիմնարար փաստաթղթերում հիմնականում խախտված է *սոցիումի (ժողովրդի) ինքնիշխանության* և *քաղաքական համակարգի (պետական իշխանության) հավասարակշռությունը*:

Խնդիրն այն է, որ սահմանադրություններն առավել մանրակրկիտ ամրագրելով պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման կարգը, գործառույթներն ու լիազորությունները, խիստ *սահմանափակ կերպով են անդրադառնում ժողովրդաիշխանության կառուցակարգերին՝ ընդամենը սահմանելով ազատ ընտրություններն ու հանրաք-*

³⁵ Ст'а Послание Президента Российской Федерации Федеральному Собранию Российской Федерации от 2007 года Послание Президента России Владимира Путина Федеральному Собранию РФ // РФ. № 18, 12.04. 2007г.

վեները: Միաժամանակ բնական իրավունքի տրամաբանությունից բխում է, որ ժողովուրդն ունի դժգոհության բնական իրավունք: Բացի այդ, սահմանադրականության հիմնարար սկզբունքից բխում է նաև այն, որ մարդու, պետության և սոցիումի վարքագծային որևէ դրսևորում չի կարող դուրս լինել սահմանադրական կարգավորման շրջանակներից: Սակայն դժգոհության իրավունքն իր դրսևորման ծագումնաբանությամբ ու ձևերով սահմանադրական ամրագրում չի ստացել, որի արդյունքում նման ցանկացած վարքագծային դրսևորում իշխանությունների կողմից որակվում է որպես զանգվածային անկարգություն՝ իր բոլոր հետևանքներով: Մինչդեռ **պետական իշխանության միակ իրական հակակշիռը օբյեկտիվորեն համարվում է և պետք է լինի ժողովուրդը:** Սակայն առավել ցավալին այն է, որ պետության կողմից ժողովրդին պատկանող ինքնիշխանության զավթման պարագայում այն ետ վերադարձնելու ժողովրդին պատկանող միջոցները խիստ սահմանափակ են, և պետական իշխանության կողմից դրսևորվող բռնությանը դիմագրավելն էլ շատ վտանգավոր: Հենց նույն Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքի անցուդարձից տեսնում ենք, որ գտնվելով աշխարհաքաղաքական ցնցումների և անխուսափելի պատերազմների կիզակետում, իշխանությունը ժողովրդից պաշտպանվելու և իր իսկ ամենօրյա անվտանգության և հարմարավետության համար անհամեմատ ավելի մեծ միջոցներ է օգտագործում, ավելի շուտ՝ վատնում պետական բյուջեից, քան արտաքին ագրեսիայից պաշտպանվելու համար:

Գործող իշխանությունների անվտանգությունն ապահովող անհասկանալի կերպարներով ծառայողների քանակը ավելի մեծ է քան երկրի զինված ուժերում ծառայողներինը, ոստիկանական մարմիններում ծառայողների աշխատանքի վարձատրությունը անտրամաբանականորեն անհամեմատ ավելի բարձր է, քան զինված ուժերի և մյուս պետական ծառայողներինը: Դրա տրամաբանական հետևանքն էլ եղավ Արցախյան երկրորդ պատերազմում մեր երկրի խայտառակ պարտությունը և հասարակության մեջ արմատավորված պառակտումն ու անհան-

դուրժողականությունը:

Կյանքը ցույց է տալիս, որ պետության բռնության դեմ ցանկացած ընդվզում տեսականորեն կարող է հաջողություն ունենալ միայն այն պարագայում, երբ հնարավոր է լինում դրա արդյունքում փոխել ընթացիկ իշխանությունը կամ իրականացնել հեղափոխություն, հակառակ պարագայում երկրի քրեակատարողական հաստատությունները մինչև կոկորդները լցվում են քաղաքական բանտարկյալներով:

Խնդրի լուծման կապակցությամբ կարծում ենք անհրաժեշտ է համախմբել ոչ միայն մեր երկրի, այլև միջազգային հանրության ջանքերը, որպեսզի միջազգային-իրավական փաստաթղթերում և պետությունների սահմանադրական ակտերում առավել դետալացվեն և համալրվեն ժողովրդի ինքնիշխանության իրացման և բռնազավթված իշխանությունը վերադարձնելու, առանձին բարձրաստիճան պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու և արժանավորներով փոխարինելու կառուցակարգերը: Դա համալիր խնդիր է, որի վրա պետք է աշխատեն ոչ միայն իրավունքի, այլև հասարակական գիտությունների բոլոր ոլորտների մասնագետները:

2. Ժողովրդի կամքի ազատ արտահայտման առավել պատասխանատու և ճակատագրական հետևանքներ առաջացնող երևույթ է **հանրաքվեն**:

Հանրաքվե (ռեֆերենդում լատ.՝ referendum՝ այն, ինչ պետք է հաղորդվի), համապետական, տարածաշրջանային կամ տեղական նշանակության հարցերի վերաբերյալ քաղաքացիների քվեարկության ձևով անմիջական կամարտահայտման միջոց : Հանրաքվեն ժողովրդաիշխանության կարևորագույն ինստիտուտն է և ժողովրդի անմիջական իրավաստեղծ գործունեության մեխանիզմը: Այն պետության և յուրաքանչյուր քաղաքացու համար կարևոր որոշումների ընդունման գործընթացում հանրության մասնակցության ձևերից է: Հանրաքվեի մասնակցի ընդունած որոշումը ազդում է գործընթացի արդյունքի վրա և պետք է ամրապնդվի խնդրո առարկա հարցի վերաբերյալ մասնակցի տեղ-

յակ լինելով: Հանրաքվեն (համաժողովրդական քվեարկությունը) ժողովրդի կողմից անմիջականորեն իշխանության իրականացումն է՝ Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու, օրենքներ ընդունելու, ինչպես նաև պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու եղանակով: Հանրաքվեի անցկացման պայմանները և ընթացակարգը կարգավորվում են տվյալ երկրի Սահմանադրությամբ և օրենքներով:

Հանրաքվեի, որպես ժողովրդի անմիջական ազատ կամահայտնության դրսևորման ձևի, էության առանցքային բաղադրիչն այն է, որ հանրաքվեի արդյունքները վերջնական են, պարտադիր և որևէ պատական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից հաստատման ենթակա չեն:

Հանրաքվեի իրականացման որակականությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Մասնավորապես այն պետք է իրացվի բացառապես ժողովրդի պատշաճ իրավագիտակցության և իրազեկության մակարդակում և համակարգային հակամարտության մեջ չլինի երկրի հիմնական օրենքի այլ դրույթների հետ, քանզի դրա արդյունքները կարող են լինել գրոյական:

Այսպես 2017 թ. Հոկտեմբերի 1-ին Կատալոնիայի ինքնավար միության իշխանությունները կազմակերպեցին հանրաքվե՝ Իսպանիայից անջատվելու նպատակով: Այդ գաղափարը աջակցեցին հանրաքվեի մասնակիցների 90 տոկոսը: Սակայն հանրաքվեի անցկացման ընթացքն ուղեկցվեց քաղաքացիների և ոստիկանության միջև բիրտ ընդհարումներով, որի արդյունքում տուժեց մոտ 800 քաղաքացի: Համակարգային հակամարտությունը դրսևորվեց այն առումով, որ Իսպանիայի սահմանադրությունը «ժողովուրդ», «ազգ» սահմանադրական օբյեկտների իրավական բովանդակությունը ճիշտ չէր ամրագրել, որի արդյունքում ֆեդերալ սահմանադրության մակարդակում կատալոնացիների, որպես ազգի, ինքնորոշման իրավունքն ամրագրված չէր, որի արդյունքում Իսպանիայի սահմանադրական դատարանը 2014 թ.

Մարտին Կատալոնիայի անկախության հանրաքվեի արդյունքները ճանաչեց սահմանադրությանը հակասող և անվավեր³⁶: Արդյունքում մի ողջ ազգի բնական իրավունքը, իղծերն ու երազանքներն ի չիք դարձան Իսպանիայի ֆեդերալ Սահմանադրության «տրամաբանության» հիման վրա:

Երկրորդ կարևոր բաղադրիչը ժողովրդի պատշաճ իրավագիտակցության մակարդակն է: Այն ձևավորվում է իշխանությունների կողմից վարվող հետևողական քաղաքականության հիման վրա: Այսպես Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են մատերի վրա հաշված հանրաքվեներ՝ 1991 թ. Անկախության, 1995 թ. ՀՀ Սահմանադրության ընդունման, 2003 թ., 2005 թ. և 2015 թ. սահմանադրական փոփոխությունների հանրաքվեները: Խնդիրն այն է, որ մեր երկրում դեռևս ձևավորված և արմատավորված չեն անմիջական ժողովրդաիշխանության իրականացման ավանդույթները, և դրանց արդյունքները համապետական ընտրությունների ժամանակ հեշտությամբ կեղծվում և նենգափոխվում են, քանի որ չկան կոնկրետ թեկնածուներ կամ կուսակցություններ, հետևաբար նաև՝ գործընթացը վերահսկելու քաղաքական շահագրգռվածություն: Ավելին 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը հանրաքվեի համար նախատեսում է ժողովրդական նախաձեռնության իրավունքը, սակայն դրա համար մեր երկրի բնակչության թվի համամասնությամբ այնպիսի անտրամաբանական և ոչ իրական նախաձեռնող քաղաքացիների թվաքանակ (200 000) է նախատեսել, որ տեսական և պրակտիկ առումով անհնար է այն իրականացնել: Բնականաբար 2015 թվականից առ այսօր (շուրջ 7 տարի) այդ ինստիտուտը կյանքի կոչելու առումով դեռևս որևէ փորձ չի ձեռնարկվել: Ասվածին որպես ծայրահեղ հակադիր օրինակ կարելի է բերել Շվեյցարիայի փորձը, որտեղ 1848 թվականից ի վեր անցկացվել են շատ մեծ քանակությամբ հանրաքվեներ: Մասնավորապես 521 հանրաքվեներից 216 -ի պարագայում հանրաքվեի առարկան եղել է սահմանադրության ձևափան, իսկ 148 -ի դեպքում՝ օրինագծի ընդունու-

³⁶ St' u https://www.gazeta.ru/politics/2021/03/17_a_13514468.shtml

մը կամ այս կամ այն միջազգային պայմանագրին հավանություն տալը: Ինչ վերաբերվում է Շվեյցարիայում ժողովրդական նախաձեռնությանը, ապա 19-րդ դարի վերջերից սկսած կիրառվել է 200 անգամ, որից 159-ի դեպքում նախագիծը դրվել է հանրաքվեի: 14 դեպքերում որոշումը ժողովրդի կողմից եղել է դրական, իսկ 144 դեպքում՝ բացասական³⁷: Նման պրակտիկան անխոս ցույց է տալիս, որ Շվեյցարիայի ժողովրդի մեջ արմատավորված է հանրաքվեի իրավական մշակույթը և հանրությունը գտնվում է պատշաճ «մարզական վիճակում»: Հետևությունն այն է, որ պետության հետևողական քաղաքականության միջոցով է հնարավոր միայն ժողովրդին դարձնել հանրաքվեի իրավունքի լիիրավ սուբյեկտ, հակառակ պարագայում հանրաքվեի ինստիտուտը կդառնա պետության անտրամաբանական որոշումների և քաղաքականության լեգիտիմացման գործիք:

Մեկ այլ ծայրահեղության օրինակ է 2015 թ. Հուլիսի 5-ին Հունաստանում իրականացված ֆինանսական քաղաքականության մասին հանրաքվեն: Այստեղ համակարգային հակամարտության պատճառն այն է, որ եվրամիության հիմնարար իրավական ակտերով մինչ օրս հստակ սահմանված չէ այդ վերազգային կառույցի հիմնարար փաստաթղթերի և անդամ պետությունների սահմանադրությունների իրավական կշռի հարաբերակցությունը: Պատճառն այն է, որ եվրամիության անդամ պետությունները չկարողացան ընդունել վերպետական կառույցի միասնական Սահմանադրություն, որով կկանոնակարգվեին ժողովրդի ինքնիշխանության սահմանները: Արդյունքում 2015 թ. Հանրաքվեի արդյունքները Հունաստանի իշխանությունների կողմից օգտագործվեց որպես փաստարկ (ավելի կոպիտ՝ որպես շանտաժ) եվրամիության հետ բանակցություններում, սակայն արդյունքում Աթենքն ստացավ ավելի կոշտ առաջարկ, քան այն որ մերժվել էր հանրաքվեով: Խնդիրն այն էր, որ քաղաքացիների առջև դրված էր այն հարցը. Արդյո՞ք պետք է ընդունվի եվրահանձնաժողովի,

³⁷ Մանրամասն տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/Референдумы_в_Швейцарии:

եվրոպական կենտրոնական բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ներկայացված համաձայնության պլանը (պարտքի վճարման կարգը, նոր վարկավորումը և տնտեսական միջոցառումների համալարը): Քվեարկողների 61, 31 տոկոսը իրենց պարտքը չվերադարձնելու առումով աջակցեցին իշխանությանը: Ստացվում է իրավիճակ, որ պետությունը կարող է հանրաքվեն, որպես ժողովրդին ի վերուստ տրված բարձրագույն իշխանության իրականացման կառուցակարգ, օգտագործել վերպետական կառույցների ընդունած իրավական ակտերը ներպետական իրավական ակտերին ստորադասելու նպատակով: Սա շատ վտանգավոր միտում է, որը կարող է փլուզել առանց այն էլ խարխուլ վիճակում գտնվող միջազգային իրավունքի համակարգը:

Հանրաքվեի արդյունքները կարող են պայմանավորված լինել նաև աշխարհաքաղաքական որոշակի իրողություններով, որի հետևանքով դրանք կյանքի չկոչվեն: Մասնավորապես 1991 թ. Մարտի 17-ին ԽՍՀՄ-ում անցկացվեց համամիութենական հանրաքվե, որին դրված էր հետևյալ հարցը. «Անհրաժեշտ համարում ե՞ք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության, որպես իրավահավասար ինքնիշխան հանրապետությունների նորացված դաշնության պահպանումը, որտեղ ամբողջությամբ կերաշխավորվեն ցանկացած ազգության պատկանող մարդու իրավունքներն ու ազատությունները»: Հանրաքվեին մասնակցեց ԽՍՀՄ քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 75,44 տոկոսը, որին կողմ քվեարկեց մասնակիցների 46,4 տոկոսը: Սակայն հանրաքվեի արդյունքները մնացին թղթի վրա, քանի որ նույն տարվա դեկտեմբեր ամսին արդեն ԽՍՀՄ-ը փլուզվեց³⁸: Նման պարագայում կարելի է եզրակացնել, որ իրավական առումով ԽՍՀՄ-ի փլուզումը օրինական հիմքեր չի ունեցել և չի արտահայտել ԽՍՀՄ ժողովրդի կամքը: Թերևս դա պատճառը, որ Ռուսաստանի Դաշնության, որպես ԽՍՀՄ-ի իրավահաջորդի, խորհրդարանում գեներացվում են քաղաքական գործընթացներ,

³⁸ St´u https://www.gazeta.ru/politics/2021/03/17_a_13514468.shtml

որոնք միտված են ԽՍՀՄ-ի վերականգնմանը:

Հետևությունն այն է, որ հանրաքվեի, որպես ժողովրդաիշխանության իրականացման անմիջական ձևի արդյունավետությունն ապահովելու նպատակով ներպետական օրենսդրության մեջ այդ ինստիտուտի իրավական ամրագրման համար անհրաժեշտ է համալիր կերպով հաշվի առնել աշխարհաքաղաքական հնարավոր իրողությունները, երկրում առկա ժողովրդավարական ավանդույթները, ինչպես նաև ժողովրդի իրավասուբյեկտության փաստացի մակարդակը:

ԳՈՒԽ 2. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԱԿԱՆ ԺՈՂՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

§ 1. Ընտրական համակարգի նշանակությունը ընտրության արդյունքների լեգիտիմությունը երաշխավորելու հարցում

Ընտրական համակարգի ընտրությունն ու իրացման պրակտիկան առանցքային ազդեցություն ունեն ժողովրդավարական հաստատությունների լեգիտիմությունը, դրանց նկատմամբ հանրային վստահությունը և այդ հաստատություններում ներկայացուցչականությունը երաշխավորելու տեսանկյունից: Պատճառն այն է, որ հենց ընտրական համակարգն է պայմանավորում այն կանոնները, որոնց հիման վրա կազմակերպվում են ընտրությունները և որոնց միջոցով ընտրողների ձայները փոխակերպվում են խորհրդարանում կամ այլ ընտրովի մարմիններում մանդատների:

Աշխարհում առկա են ընտրական համակարգերի բազմաթիվ տարատեսակներ: Ընդ որում՝ այդ բազմազանությունը վերաբերում է ինչպես օրենսդրությանը, այնպես էլ գոյություն ունեցող նորմերի իրացման պրակտիկային: Ընտրական համակարգերի ընտրությունն ու դրանց իրացման պրակտիկայի տարբերությունները պայմանավորված են տվյալ երկրի պատմությամբ, մշակույթով, ավանդույթներով, քաղաքական և իրավական համակարգի առանձնահատկություններով³⁹: Հարկ է նկատի ունենալ, որ շատ դեպքերում նույն կանոնների ու սկզբունքների վրա կառուցված ընտրական համակարգերը տարբեր երկրներում տարբերվող ազդեցություն են ունենում ընտրությունների արդյունքները կանխորոշելու, ուստի նաև՝ ներկայացուցչականության սկզբունքի ե-

³⁹ Այդ մասին տես, օրինակ՝ Electoral Systems and Democracy, ed. by Diamond L., Plattner F. M., The John Hopkins University Press. Baltimore, 2006:

րաշխավորման տեսանկյունից: Այդ առումով հատկանշական է, որ առանձին ընտրական համակարգերի պարագայում, նույնիսկ եթե ընտրություններին առնչվող իրավական նորմերը խստորեն պահպանվում են, շատ դեպքերում հաղթող կուսակցությունը քաղաքացիների շրջանում իր ունեցած իրական աջակցությունից ողջամտորեն չհիմնավորված շատ ավելի տեղեր է ստանում խորհրդարանում կամ այլ ընտրովի մարմիններում և հակառակը՝ առավել շատ քաղաքացիների աջակցությունը վայելող ուժերը պատշաճ մակարդակով չեն ներկայացվում ընտրովի մարմիններում: Այդ հանգամանքն արձանագրվել է ինչպես հետազոտական աշխատանքներում, այնպես էլ միջազգային տարատեսակ մարմինների փաստաթղթերում: Այդ առումով առանձնահատուկ ընդգծվում է, որ նշված հարցում օրինականության և լեգիտիմության միջև անհամապատասխանությունը խարխուլում է ժողովրդավարական գործընթացների նկատմամբ հանրային վստահությունը⁴⁰:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ընտրական համակարգի ընտրությունն ու իրացման պրակտիկան բացառիկ կարևորություն ունեն ներկայացուցչական ժողովրդաիշխանության երաշխավորման և պետության քաղաքական կառուցվածքի կանխորոշման տեսանկյունից, քանզի դրանով են մեծապես պայմանավորված խորհրդարանում ու տեղական ինքնակառավարման մարմիններում կուսակցությունների ներկայացվածության հնարավորությունները, նշված մարմիններում քաղաքական ուժերի միջև տեղերի բաշխման իրական պատկերը, ուստի նաև՝ ընդհանուր առմամբ քաղաքական համակարգի կառուցվածքը:

Այդ է պատճառը, որ ընտրական համակարգի ընտրության հիմքում պետք է ընկած լինի հանրային փոխհամաձայնությունը

⁴⁰ St' u, օրինակ՝ Report on Setting minimum standards for electoral systems in order to offer basis for free and fair elections // Committee on Political Affairs and Democracy, Parliamentary Assembly of the Council of Europe, Rapporteur: Mr Rik DAEMS, Belgium, ALDE, <https://pace.coe.int/en/files/28318/html>

(կոնսենսուսը), համերաշխությունը: Ավելին, ընտրական համակարգը պետք է ընտրվի և իրացվի այն տրամաբանությամբ, որպեսզի բացառվի էական անհամապատասխանությունը ընտրողների քաղաքական նախընտրությունների և ընտրվող մարմինների կազմերի միջև, քանզի այդ հանգամանքն ինքնին վկայում է ժողովրդավարության և լեգիտիմության պակասի ու դրանց էության ձևախեղման մասին:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ընտրական համակարգի ճիշտ ընտրությունն ու իրացումը բացառիկ կարևորություն ունեն ժողովրդաիշխանության կայացման տեսանկյունից, որպիսի հարցերին կանդիդատանք աշխատության սույն գլխի շրջանակներում:

§ 2. Ընտրական համակարգերի առանձնահատկությունները ժամանակակից աշխարհում

Ընտրական համակարգ հասկացությունն ընկալվում է լայն և նեղ առումներով: Լայն առումով ընտրական համակարգը ենթադրում է ընտրությունների բոլոր ասպեկտները կանոնակարգող կանոնների ամբողջությունը՝ ընտրությունների ժամանակացույցը, ակտիվ և պասիվ ընտրական իրավունքի պայմանները, ձայները հաշվարկելու կարգը, նախընտրական քարոզչությանն ու ընտրությունների ֆինանսավորմանը առնչվող կարգավորումները և այլն: Նեղ առումով ընտրական համակարգը բնութագրում է քվեարկության մեթոդի, արդյունքների ամփոփման և դրանց հիման վրա ընտրվի մարմիններում ընտրված թեկնածուների որոշման ու տեղերի բաշխման եղանակների ամբողջությունը⁴¹:

Սույն հետազոտության շրջանակներում ընտրական համակարգերի առանձնահատկություններն ու դրանց զարգացման մարտահրավերները կդիտարկենք նեղ առումով ընտրական համակարգի և վերջինիս տարատեսակների դիտանկյունից: Ավելին,

⁴¹ St' u Борисов И., Головин А., Игнатов А. Выборы в мире: Избирательные системы, Санкт-Петербург, 2015, [http://www.roiip.ru/images/data/gallery/0_8617_lzbiratel_nie_sistemi_postranichno_\(2\).pdf](http://www.roiip.ru/images/data/gallery/0_8617_lzbiratel_nie_sistemi_postranichno_(2).pdf), էջ 9-17:

հաշվի առնելով այն հանգամանքը, որ գոյություն ունեցող բոլոր ընտրական համակարգերն էլ համապատասխանում են ընդունված չափանիշներին, սակայն տարբեր հասարակական համակարգերում դրանք միմյանցից տարբերվող արդյունքների են հանգեցնում, քննարկվող հարցերը կներկայացնենք գոյություն ունեցող միջազգային չափանիշների և պրակտիկայի համատեքստում՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավակարգավորումները որպես օրինակ հիմքում դնելով⁴²:

Նեղ առումով ընտրական համակարգերը, որպես կանոն, դասակարգվում են հետևյալ տարատեսակների՝ համամասնական, մեծամասնական և խառը՝ կախված այն հանգամանքից, թե ինչ համամասնությամբ են ընտրողների ձայները վերածվում մանդատների: Միևնույն ժամանակ, այս մոդելներից յուրաքանչյուրն ունի իր բազմաթիվ ենթատեսակները⁴³, որոնք ժամանակակից աշխարհում ձեռք են բերել նաև նոր առանձնահատկություններ:

Այսպես՝ գրականության մեջ ներկայացվում են ընտրական համակարգերի համատեքստում կիրառվող հետևյալ քվեարկության մեթոդները՝ 1. միանշանակ (cathegorical) քվեարկության մեթոդ, երբ ընտրողը պետք է հստակ նշի իր նախընտրությունը կոնկրետ թեկնածուին, կուսակցությանը կամ ցուցակին: Վերջինիս տարատեսակները հետևյալն են՝ ա. միամանդատ քվեարկություն (single-member ballot), երբ մի ընտրովի տեղի համար ընտրողն ունի մեկ ձայն, բ. մեկ չփոխանցվող ձայն (single non-transferable ballot), երբ անկախ ընտրովի մարմինների քանակից՝

⁴² Նկատի ունենալով այն, որ ընտրական համակարգերի համատեքստում քննարկման ենթակա հարցերի շրջանակը չափազանց լայն է և հարցերի ամբողջ փաթեթը հնարավոր չէ սպառել մեկ աշխատության շրջանակներում, սույն համատեքստում կառանձնացնենք և կանդորադառնանք մի քանի կոնկրետ հարցադրումների:

⁴³ St' u Using International Election Standards // Council of Europe Handbook for Civil Society Organizations, <https://rm.coe.int/16806c791a>, Борисов И., Головин А., Игнатов А. Выборы в мире: Избирательные системы, Санкт-Петербург, 2015, [http://www.roiip.ru/images/data/gallery/0_8617_izbiratelnie_sistemi_postranichno_\(2\).pdf](http://www.roiip.ru/images/data/gallery/0_8617_izbiratelnie_sistemi_postranichno_(2).pdf), էջ 9-17:

յուրաքանչյուր ընտրող ունի ընդամենը մեկ ձայն: Առավել շատ ձայներ ստացած թեկնածուներն ընտրվում են ընտրովի տեղերի քանակին համամասնորեն, գ. փակ ցուցակի միջոցով քվեարկություն (closed list), երբ ընտրողը պետք է քվեարկի մեկ ամբողջական ցուցակի համար: Այս համակարգի շրջանակներում թեկնածուները, որպես կանոն, ընտրվում են նույն հաջորդականությամբ, որով ներկայացված են ցուցակում, 2. “ordinal” voting methods, որոնց շրջանակներում ընտրողն առավել բարդ ընտրություն է կատարում: Օրինակ՝ ընտրողը կարող է դասակարգել կուսակցությունները՝ ըստ իր նախընտրությունների հերթականության կամ ընտրություն կատարել ոչ միայն բուն ցուցակների, այլ նաև ցուցակում ներկայացված թեկնածուների միջև: Այս համակարգի տարատեսակներն են, օրինակ՝ ա. գերադասելի քվե (preferential vote), երբ ընտրողը նշում է մեկ կամ ավելի թեկնածուների, որոնց ինքն է նախընտրում ներկայացված ցուցակից, բ. բացասական քվե (negative vote), երբ ընտրողը նշում է այն թեկնածուներին, ում համար չի ուզում քվեարկել, գ. կուտակային քվե (cumulative vote), երբ ընտրողն ունենում է ընտրովի տեղերի թվին համապատասխան ձայներ, և դրանք կարող է տրամադրել մեկ թեկնածուի: Առավել շատ ձայներ հավաքած թեկնածուներն ընտրվում են ընտրվող տեղերի քանակին համամասնորեն, դ. դասակարգված քվե (graduated or rank-ordered vote), երբ ընտրողը հնարավորություն ունի դասակարգելու թեկնածուներին իր նախընտրությունների հաջորդականությամբ: Ընտրողն ունի ձայների որոշակի քանակ, որը բաշխում է տարբեր թեկնածուների միջև: Որպես կանոն, թեկնածուների թիվը, ում համար ընտրողը կարող է քվեարկել, սահմանափակված է:

Վերը նշված մեթոդները հնարավորություն չեն տալիս քվեարկելու տարբեր ցուցակներից թեկնածուների օգտին: Մինչդեռ գոյություն ունեն քվեարկության՝ նման հնարավորություն տվող մեթոդներ: Օրինակ՝ պանաչաժ (panachage), երբ ընտրողը կարող է փոփոխել կուսակցության ցուցակը՝ դրանում ընդգրկելով այլ ցուցակներից թեկնածուների: Մեկ այլ մեթոդ է «դատարկ

ցուցակի» (blank list) մեթոդը, երբ ընտրողն ինքն է ձևավորում թեկնածուների ցուցակը, սակայն վերջիններիս անունները պետք է արդեն իսկ առկա լինեն այլ ցուցակներում: «Ամբողջապես բաց ցուցակի» մեթոդը (totally open list) ենթադրում է, որ ընտրողներն իրենք են ձևավորում ցուցակները՝ դրանցում ընդգրկելով ցանկացած անձի, որին կուզենային ընտրված տեսնել՝ անկախ նրանց՝ ընտրություններին մասնակցելու կամ չմասնակցելու հանգամանքից: «Սահմանափակ քվեի» մեթոդը (limited vote) ենթադրում է, որ ընտրողն ավելի քիչ ձայներ ունի, քան ընտրովի տեղերն են, և ընտրողն իրավունք չունի մեկ թեկնածուին տալ մեկից ավելի ձայն: «Պատահականության քվեի համակարգի» շրջանակներում (contingency vote system) ընտրողն ունի միայն մեկ ձայն: Նա դասակարգում է ընտրատեղամասում առաջադրված թեկնածուներին՝ ըստ իր նախընտրության հաջորդականության: Քվեարկության արդյունքները որոշելիս նրա ձայնը հաշվարկվում է այն թեկնածուի օգտին, ում համար վերջինս առաջինն է քվեարկել: Հետագայում նրա ձայնը կարող է փոխանցվել երկրորդ, երրորդ և մնացյալ թեկնածուներին: Քվեարկության այս մեթոդի նպատակն է հնարավորություն տալ ընտրողներին որակավորել իրենց ընտրությունը՝ կանխելով այն ձայների կորուստը, որոնք տրվել են ընտրված համարվելու համար արդեն իսկ բավարար ձայներ ունեցող կամ չընտրված թեկնածուներին:

Հարկ է նկատի ունենալ, որ քվեարկության նշված մեթոդներից շատերը կիրառելի են/փաստացի կիրառվում են ինչպես մեծամասնական, այնպես էլ համամասնական համակարգերի համատեքստում: Օրինակ՝ «պատահականության քվեի», «սահմանափակ քվեի»⁴⁴, «կուտակային քվեի» մեթոդները⁴⁵:

⁴⁴ Վերջինիս կիրառումը համամասնական համակարգի պայմաններում հազվադեպ հանդիպող երևույթ է: Այն կիրառվել է, օրինակ՝ Ֆինլանդիայում 1906-1935թթ.: Նշված մեթոդի կիրառումը շատ ավելի հաճախ է հանդիպում մեծամասնական համակարգի համատեքստում, օրինակ՝ Իսպանիայի Սենատի ընտրությունների դեպքում:

⁴⁵ Քվեարկության նշված մեթոդի կիրառումը համամասնական համակարգի պայմաններում հազվադեպ, սակայն փաստացի հանդիպող երևույթ է: Օրինակ՝ նշված մեթոդը կիրառվում է Շվեյցարիայում և Լյուքսեմբուրգում:

Վերը շարադրվածը բավարար է փաստելու, որ ընտրական համակարգերի դասակարգումը չի սահմանափակվում բացառապես «միանշանակ քվեի» մեթոդով (մեկ թեկնածուի, կուսակցության կամ ցուցակի օգտին տրվող մեկ չփոխանցվող ձայնի միջոցով) կամ «փակ ցուցակների» համակարգով իրականացվող քվեարկությամբ:

Ընտրական համակարգերն ու այդ համատեքստում կիրառվող քվեարկության մեթոդներն ունեն բազմաթիվ տարատեսակներ, որոնցից յուրաքանչյուրն էլ միջազգային պրակտիկայում ունի կիրառություն: Ավելին, այդ համակարգերն ընտրվում են ինչպես կոնկրետ պետության մշակույթի, ավանդույթների, իրավական և քաղաքական համակարգերի հաշվառմամբ, այնպես էլ իրենք են ազդեցություն ունենում քաղաքական համակարգի կառուցվածքը կանխորոշելու տեսանկյունից: Օրինակ «սահմանափակ քվեի» մեթոդը նպաստում է ընտրություններին փոքրամասնություն հանդիսացող կուսակցությունների մասնակցությանը և ընտրովի մարմիններում նրանց ներկայացվածությանը: Պատճառն այն է, որ ընտրություններին մասնակցող կուսակցությունը, որն ունի հաղթելու հավանականություն, հետաքրքրված չէ ներկայացնելու ընտրովի տեղերին համապատասխան թեկնածուներ, քանի որ այդ պարագայում ձայների ցրվածության պատճառով վերջինս չի կարող վստահ լինել ընդհանուր հաղթանակի մեջ: Դա է պատճառը, որ ստրատեգիական տեսանկյունից այս համակարգի պայմաններում արդյունավետ է ներկայացնել յուրաքանչյուր ընտրողին տրվող ձայների քանակին համապատասխան թեկնածուներ, որպեսզի բարձրանան մեծամասնություն ստանալու հնարավորությունները: Իսկ ներկայացված հանգամանքները հնարավորություն են տալիս փոքրամասնություն հանդիսացող կուսակցություններին մասնակցելու ընտրություններին և ներկայացված լինելու ընտրովի մարմիններում:

«Կուտակային քվեի» մեթոդն էլ, օրինակ, մեծամասնական համակարգի պայմաններում շեշտադրում է կատարում փոքրամասնություն հանդիսացող կուսակցությունների ներկայացվածությանը: Այս համակարգն առանձին դեպքերում կարող է հան-

գեցնել մեծամասնության պարտության, եթե վերջինիս թեկնածուներից մեկը ստանա շեշտակի շատ ձայներ: Այդ պատճառով երբեմն «կուտակային քվեի» համակարգը համադրվում է «սահմանափակ քվեի» մեթոդի հետ⁴⁶:

Համամասնական և մեծամասնական ընտրական համակարգերն իրենց հերթին հանգեցնում են միմյանցից տարբերվող նպատակների և կիրառվում են միմյանցից տարբերվող խնդիրներ լուծելու համար:

Գրականության մեջ շեշտադրվում է այն հանգամանքը, որ համամասնական համակարգը նպաստավոր է ուժեղ քաղաքական կուսակցությունների համար և հաճախ է հանգեցնում խորհրդարանում միակուսակցական մեծամասնությունների և միակուսակցական կառավարությունների ձևավորման: Արդյունքը կայուն կառավարության առկայությունն է, որն իրականացնում է հստակ և անզիջում քաղաքականություն (դա հաճախ ներկայացվում է որպես արդյունավետ կառավարելիություն – efficient governability): Առանցքային հարցն այստեղ այն է, որ հաղթող ուժի դոմինանտ կարգավիճակը լրջորեն վտանգում է փոքր կուսակցությունների ներկայացվածությունը խորհրդարանում, քաղաքական տեսակետների բազմազանությունը, հետևաբար նաև՝ ընտրովի մարմնի ներկայացուցչականությունը: Հետևաբար, կայուն կառավարությունն ու վերջինիս արդյունավետությունը ձեռք է բերվում փոքր կուսակցությունների հաշվին:

Ի տարբերություն վերը շարադրվածի՝ մեծամասնական ընտրական համակարգի պարագայում մեծանում է տարատեսակ քաղաքական հայացքների ներկայացվածությունը և ընտրովի մարմնի ներկայացուցչականությունը, ինչը, սակայն, տեղի է ունենում կառավարելիության մակարդակը ցածրացնելու հաշվին, քանի որ անհրաժեշտություն է առաջանում պահպանել տարբեր ուժերի միջև նախընտրական և հետընտրական փոխզիջումները:

⁴⁶ Ընտրական համակարգերի և վերջիններիս տարատեսակների առնչությամբ Տե՛ս նաև CDL-AD(2004)003, Report on Electoral Systems: Overview of Available Solutions and Selection Criteria // Adopted by the Venice Commission at its 57th Plenary Session (Venice, 12-13 December 2003):

Երկրների հիմնական մասը փորձում է համադրել ընտրական համակարգերը՝ կառավարելիության և ներկայացուցչականության միջև հավասարակշռություն գտնելու նպատակով⁴⁷:

Հարկ է նկատի ունենալ, որ տարատեսակ միջազգային խորհրդատվական մարմիններ, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վեներտիկի հանձնաժողով), արձանագրել են, որ պետությունները հայեցողության լայն շրջանակ ունեն ընտրական համակարգերի միջև ընտրություն կատարելու հարցում, եթե պահպանվում են հիշյալ բնագավառին առնչվող միջազգային չափանիշները:

Ընդ որում՝ ընտրական համակարգը պետք է որոշվի և ընտրվի բոլոր քաղաքական ուժերի լայն ներգրավմամբ և լայն ու բաց քննարկումների արդյունքում: Նշված համակարգի փոփոխությունը չպետք է խարխլի ընտրողների, քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության վստահությունը ընտրական գործընթացների նկատմամբ: Ընդ որում՝ յուրաքանչյուր ընտրական համակարգ էլ ունի իր առավելություններն ու թերությունները: Դա պայմանավորված է տարատեսակ հանգամանքներով, ինչպիսիք են կուսակցական համակարգը, ավանդույթները, տարածքային կառուցվածքը և այլն: Ուստի, ընտրական համակարգի ընտրության վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է նկատի ունենալ, թե որ համակարգը լավագույնս հնարավորություն կտա բավարար հավասարակշռություն ապահովելու ներկայացուցչականության և կառավարելիության չափանիշների միջև: Ընդ որում՝ այդ գործընթացում անհրաժեշտ է պատշաճ զգուշավորություն ցուցաբերել՝ խուսափելու ոչ միայն իշխող կուսակցության օգտին մանիպուլյացիաներից, այլ նույնիսկ մանիպուլյացիայի

⁴⁷ Այդ մասին տե՛ս նաև Report on Setting minimum standards for electoral systems in order to offer basis for free and fair elections // Committee on Political Affairs and Democracy, Parliamentary Assembly of the Council of Europe, Rapporteur: Mr Rik DAEMS, Belgium, ALDE, <https://pace.coe.int/en/files/28318/html>:

տպավորությունից⁴⁸:

Չափանիշներին համապատասխանող բոլոր ընտրական համակարգերն էլ ժողովրդավարական են իրենց բնույթով: Միևնույն ժամանակ, դրանցից յուրաքանչյուրի հետևանքները տարբերվում են երկրից երկիր: Ավելին, ընտրական համակարգերը կարող են ունենալ տարբեր, նույնիսկ միմյանցից լիովին տարբերվող քաղաքական նպատակներ: Մի ընտրական համակարգը կարող է կենտրոնանալ խորհրդարանում կուսակցությունների արդար ներկայացվածության վրա, մինչդեռ մյուս ընտրական համակարգի նպատակը կարող է լինել կուսակցական համակարգի մասնատվածությունը բացառելը և խորհրդարանում մի կուսակցության իշխող մեծամասնություն ձևավորելը: Մի ընտրական համակարգը կարող է նպաստել ընտրողների և իրենց ընտրատարածքի ներկայացուցիչների միջև սերտ հարաբերությունների ձևավորմանը, մինչդեռ մյուսի պարագայում կուսակցությունների համար կարող է հեշտանալ կանանց, փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավումը խորհրդարանում՝ փակ ցուցակներ օգտագործելու արդյունքում:

Որոշ երկրներ կիրառում են խառը ընտրական համակարգեր՝ միաժամանակ մի քանի քաղաքական նպատակներ լուծելու համար: Կան երկրներ էլ, որոնք առաջնահերթ են համարում այն հանգամանքը, որ ընտրական համակարգը չափազանց դժվար չլինի ընտրողների և վարչակազմի կողմից հասկանալու և գործարկելու տեսանկյունից: Ավելին, ընտրական համակարգի համարժեքությունը գնահատվում է այն հանգամանքից ելնելով, թե արդյոք վերջինս երաշխավորում է արդարություն՝ նկատի ունե-

⁴⁸ Տե՛ս CDL-AD(2016)019 Armenia – Joint Opinion on the draft electoral code as of 18 April 2016 (para. 27), CDL-AD(2014)003 Joint Opinion on the draft Law amending the electoral legislation of Moldova (para. 21 and 25, CDL-AD(2012)012 Joint Opinion on the Act on the Elections of Members of Parliament of Hungary (para. 21), CDL-AD(2011)043 - Joint opinion on the draft election code of Georgia (para. 22), CDL-AD(2011)037 Venice Commission and OSCE/ODIHR Joint opinion on the draft law on election of people’s deputies of Ukraine (para. 22) (CDL-PI (2019)001 Compilation of Venice Commission Opinions and Reports concerning Electoral Systems // European Commission for Democracy through Law (Venice Commission), Strasbourg, 18 March 2019):

նալով տեղական պայմանները և խնդիրները: Մասնավորապես, պետք է ապահովվի ցուցակների կազմման թափանցիկությունը և այլն⁴⁹:

Ուստի, մեր կարծիքով, ընտրական համակարգերի միջև ընտրություն կատարելիս և ընտրական համակարգերը բարեփոխելիս առաջին հերթին անհրաժեշտ է հաշվի առնել այն խնդիրները, որոնք առկա են կոնկրետ պետությունում, և այն նպատակը, որին ուղղվելու է ընտրական համակարգի ընտրությունը: Ընդ որում, ինչպես հուշում են քննարկվող բնագավառին առնչվող միջազգային չափանիշները, այդ նպատակը չի կարող հանգել սոսկ իշխող քաղաքական ուժի/ուժերի համար ընտրությունների գործընթացում առավել նպաստավոր միջավայր ստեղծելու հանգամանքին: Քննարկվող նպատակները պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին և ուղղված լինեն իրավական ու քաղաքական համակարգերում առկա խնդիրների՝ իրավաչափ մեթոդաբանությամբ լուծմանը:

Այդ առումով Վենետիկի հանձնաժողովն արձանագրել է, որ ընտրական և քաղաքական կուսակցություններին առնչվող օրենսդրության ցանկացած հաջողված փոփոխություն պետք է կառուցված լինի առնվազն հետևյալ երեք բաղադրատարրերի վրա՝ 1. միջազգային պարտավորություններին և չափանիշներին համապատասխանող հստակ և համապարփակ օրենսդրություն, 2. լայն կոնսենսուսի արդյունքում օրենսդրության ընդունում՝ բոլոր համապատասխան շահառուների հետ ընդարձակ հանրային խորհրդակցությունների արդյունքում, 3. քաղաքական հանձնառություն՝ ամբողջությամբ և բարեխղճորեն իրացնելու այդ օրենսդրությունը⁵⁰:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ արձանագրենք, որ ընտրական համակարգերն ու դրանց տարատեսակները բազմազան են:

⁴⁹ St`u CDL-AD (2007)046 - Opinion on the Electoral Law of the United Kingdom (para. 52):

⁵⁰ St`u CDL-PI (2021)006, Joint urgent opinion on amendments to the Electoral Code and related legislation, Armenia // European Commission for Democracy through Law (Venice Commission), OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR), Strasbourg, Warsaw, 21 April 2021:

Դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, կոնկրետ նպատակների տեսանկյունից՝ առավելություններն ու թերությունները: Ակնհայտ է, որ այդ տարատեսակներից յուրաքանչյուրն ուղղված է կոնկրետ խնդիրների լուծմանն ու նպատակների իրացմանը: Ընդ որում՝ մի նպատակի տեսանկյունից կոնկրետ համակարգի արդյունավետությունը պարտադիր չէ, որ երաշխավորի մեկ այլ նպատակի տեսանկյունից վերջինիս օգտակարությունը:

Ավելին, կարևոր է նկատի ունենալ, որ ընտրական համակարգի ընտրությունը մեծապես ազդում է կոնկրետ պետության քաղաքական համակարգի, ընտրովի մարմիններում քաղաքական ուժերի ներկայացվածության հնարավորությունների վրա: Միևնույն ժամանակ, այդ ազդեցությունը միակողմանի չէ, և կոնկրետ պետությունում առկա իրավական և քաղաքական համակարգը, մշակույթն ու ավանդույթները իրենց հերթին առանցքային դերակատարություն են ունենում այն արդյունքը կանխորոշելու հարցում, որին հանգեցնում է որդեգրված ընտրական համակարգը:

§ 3. Ընտրական համակարգի ընտրությունը պայմանավորող գործոնները

Նախորդ պարագրաֆների շրջանակներում ներկայացված վերլուծությունը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ ներկայացուցչական ժողովրդաիշխանության երաշխավորման տեսանկյունից ընտրական համակարգի ընտրության/փոփոխության ընթացքում անհրաժեշտ է նկատի ունենալ մի քանի առանցքային հանգամանք.

✓ Նույն կանոնների ու սկզբունքների վրա կառուցված ընտրական համակարգերը տարբեր երկրներում տարբերվող ազդեցություն են ունենում ընտրությունների արդյունքները կանխորոշելու, ուստի նաև՝ ներկայացուցչականության սկզբունքի երաշխավորման տեսանկյունից: Հետևաբար, առաջնահերթը հիշյալ համատեքստում ոչ թե գոյություն ունեցող այս կամ այն ընտրական համակարգի մեխանիկական արտատպումն է, այլ ընտրական համակարգի նախատեսումը՝ կոնկրետ պետության պատ-

մութունը, իրավական, քաղաքական համակարգերն ու մշակույթը, ավանդույթները հաշվի առնելու արդյունքում:

✓ Առանքային է այնպիսի ընտրական համակարգի նախատեսումը, որը կարող է երաշխավորել համապատասխան իրավակարգավորումների գրագիտության, ընտրությունների օրինականության և արդյունքների լեգիտիմության միջև պատշաճ հավասարակշռություն այն տեսանկյունից, որ ընտրովի մարմիններում թեկնածուների/քաղաքական ուժերի միջև տեղերի բաշխման պատկերը համարժեք լինի ընտրողների շրջանում նրանց վայելած իրական աջակցությանը: Այլ կերպ՝ ընտրական համակարգը պետք է ընտրվի և իրացվի այն տրամաբանությամբ, որպեսզի ընտրական գործընթացների օրինականության և ընտրվող մարմինների լեգիտիմության միջև չառաջանա անջրպետ, և ընտրովի մարմինների կազմը, դրանցում ներկայացված քաղաքական ուժերն ու անձինք ներկայացված լինեն՝ քաղաքացիների կողմից վայելած աջակցությանը համապատասխան:

✓ Ընտրական համակարգի ընտրությունն ու փոփոխությունը պետք է լինի քաղաքական ուժերի և հանրության միջև փոխհամաձայնության (կոնսենսուսի) արդյունք:

✓ Քաղաքական իշխանությունն ու բոլոր քաղաքական ուժերը պետք է բարեխղճորեն իրացնեն ընտրական օրենսդրությունը:

§ 4. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրության նպատակով կիրառվող ընտրական համակարգն ու դրա ազդեցությունը խորհրդարանի կայունության ու ներկայացուցչականության երաշխավորման տեսանկյունից

ՀՀ Սահմանադրության 89 հոդվածի համաձայն՝

«1. Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից:

2. Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

3. Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն

խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով»:

2015թ. սահմանադրական բարեփոխումներից հետո ընտրական օրենսդրությունը նախատեսել էր համամասնական ընտրակարգով Ազգային ժողովի ընտրության այնպիսի մոդել, որը ենթադրում էր «կուսակցական փակ ցուցակներից» փաստացի հրաժարում: Մասնավորապես, «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 83 հոդվածի համաձայն՝ ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն (կուսակցությունների դաշինք) առաջադրում էր թեկնածուների մեկ համապետական ընտրական ցուցակ, որը կարող էր բաղկացած լինել երկու մասից, և մեկական տարածքային ընտրական ցուցակ՝ յուրաքանչյուր ընտրական տարածքի համար: Կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) իր համապետական ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկված թեկնածուներից կազմում էր տարածքային ընտրական ցուցակներ: Ընդ որում՝ նշված տարածքային ցուցակները էական դերակատարություն ունեին թեկնածուների միջև մանդատների բաշխման տեսանկյունից, ինչի արդյունքում ընտրական համակարգի այս մոդելը ենթադրում էր փաստացի հրաժարում «փակ ցուցակների» միջոցով քվեարկությունից: Այդ առումով «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում էր, որ առաջին հերթին մանդատները տրամադրվում են տարածքային ընտրական ցուցակով ընտրված պատգամավորներին: Ընտրական տարածքում կուսակցությանը հասանելիք մանդատները ստանում էին տվյալ ընտրական տարածքին հասանելիք մանդատների թվին հավասար թվով այն թեկնածուները, որոնք ստացել էին առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ: Կողմ

քվեարկված քվեաթերթիկների հավասարության դեպքում մանդատը տրվում էր վիճակահանությամբ: Եթե կուսակցության տվյալ ընտրական տարածքի ցուցակում չկային բավարար թվով թեկնածուներ, ապա թափուր մանդատները փոխանցվում էին համապետական ընտրական ցուցակի առաջին մասին: Երկրորդ հերթին մանդատները նույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով տրամադրվում էին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Երրորդ հերթին մանդատները տրամադրվում էին կուսակցության համապետական ընտրական ցուցակի առաջին մասի թեկնածուներին՝ ըստ հերթականության: Եթե դրա արդյունքում կուսակցության բոլոր մանդատները բաժին էին հասնում նույն սեռի ներկայացուցիչներին, ապա վերջին թեկնածուն իր մանդատը զիջում էր համապետական ընտրական ցուցակի առաջին մասի՝ չներկայացված սեռի նվազագույն համարով թեկնածուին, եթե կար: Եթե կուսակցության համապետական ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկված թեկնածուների թիվը փոքր էր հասանելիք մանդատների թվից, ապա համապատասխան մանդատները մնում էին թափուր:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում 2021թ. -ին կատարվեցին փոփոխություններ, որոնք հայեցակարգային առումով փոխեցին ընտրական համակարգի նախկինում ընտրված մոդելը: Մասնավորապես, Օրենսգրքի 83 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն (կուսակցությունների դաշինք) այժմ արդեն առաջադրում է թեկնածուների մեկ ընտրական ցուցակ, որը կարող է բաղկացած լինել երկու մասից: Կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը կազմվում է դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ներկայացրած ընտրական ցուցակից: Ընդ որում՝ ընտրական ցուցակը կարող է ունենալ երկրորդ մաս, որում, նույն հոդվածի 6-րդ մասին համապատասխան, կարող են ընդգրկվել ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամաս-

նությունների ներկայացուցիչներ: Ընտրական ցուցակի երկրորդ մասում ընդգրկված ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորի թեկնածուն կարող է ընդգրկվել նաև ընտրական ցուցակի առաջին մասում⁵¹:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք արձանագրել, որ Ազգային ժողովի ընտրություններն այժմ անց են կացվում համամասնական ընտրակարգով՝ այսպես կոչված, «փակ ցուցակների» օգտագործման միջոցով:

Հավելենք նաև, որ ի կատարումն կայուն խորհրդարանական մեծամասնության սահմանադրական գաղափարի՝ «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 96 հոդվածը նախատեսել էր, որ եթե որևէ կուսակցություն նույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերի հերթական կիրառման արդյունքում ստացել է 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 54 տոկոսից պակաս, ապա այդ կուսակցությունը ստանում է այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որ արդյունքում այդ կուսակցության մանդատների քանակը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս, քան 54 տոկոսը: Եթե որևէ կուսակցություն նույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերի հերթական կիրառման արդյունքում ստացել է 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի 2/3-ից ավելին, ապա մյուս կուսակցությունները ստանում են այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ (ԼՄ), որ արդյունքում նրանց մանդատների ընդհանուր թիվը լինի Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի 1/3-ից ոչ պակաս: Յուրաքանչյուր կուսակցությանը հասանելիք լրացուցիչ մանդատների թիվը որոշվում է հետևյալ կերպ. այդ կուսակցության ստացած մանդատների թիվը բազմապատկվում է ԼՄ թվով, ստացված թիվը բաժանվում է լրացուցիչ մանդատներ ստացող կուսակցությունների՝ մինչև լրացուցիչ մանդատներ տալը ստացված մանդատների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք տվյալ կուսակցությանը հասանե-

⁵¹ «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 83 հոդվածի 5-րդ մաս:

լիք լրացուցիչ մանդատների թվերն են: Մնացած մանդատները կուսակցության միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Մնացորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է այն կուսակցությանը, որի մանդատների թիվն ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ:

Ընտրական օրենսդրության հետագա փոփոխությունների արդյունքում («ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում 07. 05. 2021թ. -ին կատարված փոփոխությունների համատեքստում) նշված հոդվածը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 96. Մեծամասնության լրացուցիչ մանդատները

Եթե որևէ կուսակցություն սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերի հերթական կիրառման արդյունքով ստացել է սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 52 տոկոսից պակաս, ապա այդ կուսակցությունը ստանում է այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որոնց արդյունքով այդ կուսակցության մանդատների քանակը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս, քան 52 տոկոս»:

Անդրադառնալով Ազգային ժողովի ընտրությունների համատեքստում կիրառվող ընտրական համակարգին, ակնհայտ է, որ Հայաստանում խորհրդարանի կազմավորման տեսանկյունից առանցքային դերակատարություն է վերապահվել համամասնական ընտրական համակարգին: Ընդ որում՝ այդ դերակատարությունը բացառիկ է:

Նկատի ունենալով այն, որ ընտրական համակարգը էական ազդեցություն է ունենում պետության քաղաքական կառուցվածքի վրա և կանխորոշում է խորհրդարանում կուսակցությունների ներկայացվածության հնարավորությունները, աշխատության սույն պարագրաֆի շրջանակներում կվերլուծենք Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանի կազմավորման համար ընտրված

ընտրական համակարգի հետևանքով արձանագրված արդյունքները, քաղաքական համակարգի վրա դրա ունեցած ազդեցությունը և ընտրական համակարգերի առումով զարգացման հետագա հեռանկարները:

Նշենք, որ ընտրական համակարգի նման մոդելը միշտ չէ բնորոշ եղել Հայաստանի Հանրապետությանը:

Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Ազգային ժողովի ընտրությունները տեղի են ունեցել 1995թ. հուլիսի 5-ին: Ազգային ժողովը բաղկացած է եղել 190 պատգամավորից, որոնցից 150-ն ընտրվել է մեծամասնական, 40-ը՝ համամասնական ընտրակարգով: Օրենքով սահմանված 5 տոկոսի սահմանագիծը հաղթահարել է 5 կուսակցություն, որոնց միջև տեղերը բաշխվել են հետևյալ կերպ. «Հանրապետություն» միավորում՝ 50 տոկոս (20 պատգամավոր), «Շամիրամ»՝ 20 տոկոս (8 պատգամավոր), ՀԿԿ՝ 15 տոկոս (6 պատգամավոր), ԱԺՄ՝ 7,5 տոկոս (3 պատգամավոր), ԱԻՄ՝ 7,5 տոկոս (3 պատգամավոր): Ազգային ժողովում ստեղծվել է նաև «Բարեփոխումներ» պատգամավորական խումբը (31 պատգամավոր): 21 պատգամավոր ընդգրկված չէր որևէ խմբակցության կամ պատգամավորական խմբի կազմում: Հետագայում ձևավորվել է «Երկրապահ» պատգամավորական խումբը (17 պատգամավոր):

Հայաստանի Հանրապետության երկրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները տեղի են ունեցել 1999թ. մայիսի 30-ին: Խորհրդարանը բաղկացած է եղել 131 պատգամավորից, որոնցից 75-ն ընտրվել են մեծամասնական և 56-ը համամասնական ընտրակարգով: Ըստ ընտրությունների արդյունքների՝ օրենքով սահմանված հինգ տոկոսի սահմանագիծը հաղթահարել են 6 կուսակցություն և դաշինք, որոնց միջև տեղերը բաշխվել են հետևյալ կերպ. «Միասնություն» դաշինք՝ 41,69 տոկոս (29 պատգամավոր), ՀԿԿ՝ 12,09 տոկոս (8 պատգամավոր), «Իրավունք և միաբանություն» դաշինք՝ 7,96 տոկոս (6 պատգամավոր), ՀՅԴ՝ 7,86 տոկոս (5 պատգամավոր), «Օրինաց երկիր» կուսակցություն՝ 5,28 տոկոս (4 պատգամավոր), ԱԺՄ՝ 5,17 տոկոս (4 պատգամավոր): Ազգային ժողովի 129 պատգամավորներից կուսակ-

ցական էին 76-ը, անկուսակցական՝ 53-ը:

ՀՀ երրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները տեղի են ունեցել 2003թ. մայիսի 25-ին: Պատգամավորների թիվն ու ընտրակարգը չեն փոփոխվել նախորդ գումարման ԱԺ ընտրություններից հետո: Ըստ ընտրությունների արդյունքի՝ օրենքով սահմանված հինգ տոկոսի սահմանագիծը հաղթահարել են 6 կուսակցություն և դաշինք՝ հետևյալ համամասնությամբ. Հայաստանի հանրապետական կուսակցություն՝ 23,66 տոկոս (23 պատգամավոր), «Արդարություն» դաշինք՝ 13,71 տոկոս (14 պատգամավոր), «Օրինաց երկիր» կուսակցություն՝ 12,60 տոկոս (12 պատգամավոր), Հայ հեղափոխական դաշնակցություն՝ 11,45 տոկոս (11 պատգամավոր), «Ազգային միաբանություն»՝ 8,91 տոկոս (9 պատգամավոր), Միավորված աշխատանքային կուսակցություն՝ 5,67 տոկոս (6 պատգամավոր):

2007թ. մայիսի 12-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության չորրորդ գումարման Ազգային ժողովի ընտրություններն անց են կացվել 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո: Ըստ այդմ՝ խորհրդարանի 131 պատգամավորից 90-ն ընտրվել է համամասնական և 41-ը մեծամասնական ընտրակարգով: ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողովում ստեղծվել է պատգամավորական 5 խմբակցություն՝ «Հայաստանի հանրապետական կուսակցություն» (64 պատգամավոր), «Բարգավաճ Հայաստան» (25 պատգամավոր), «Հայ հեղափոխական դաշնակցություն» (16 պատգամավոր), «Օրինաց երկիր» (8 պատգամավոր), «Ժառանգություն» (7 պատգամավոր): Այս խմբակցությունները ստեղծվել են 2007թ. հունիսի 7-ին: Դրանցում չի ընդգրկվել 11 պատգամավոր:

2012թ. մայիսի 6-ին կայացած հինգերորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում ևս խորհրդարանի 131 պատգամավորից 90-ն ընտրվել է համամասնական և 41-ը մեծամասնական ընտրակարգով: Հայաստանի Հանրապետության հինգերորդ գումարման Ազգային ժողովում ստեղծվել է պատգամավորական 6 խմբակցություն՝ «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն (69 պատգամավոր), «Բարգա-

վաճ Հայաստան» խմբակցություն (37 պատգամավոր), «Հայ ազգային կոնգրես» խմբակցություն (7 պատգամավոր), «Օրինաց երկիր» խմբակցություն (6 պատգամավոր), «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցություն (5 պատգամավոր), «Ժառանգություն» խմբակցություն (5 պատգամավոր): Դրանցում չի ընդգրկվել 2 պատգամավոր:

2017թ. ապրիլի 2-ին տեղի ունեցած վեցերորդ գումարման Ազգային ժողովի ընտրություններն իրականացվել են 2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում փոփոխված սահմանադրական կարգավորումների և 25.05.2016թ. ընդունված «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի հիման վրա: Ըստ այդմ ընտրվել է Ազգային ժողովի 105 պատգամավոր՝ բոլորը համամասնական ընտրակարգով⁵²: Ընտրությունների արդյունքներով խորհրդարան է անցել քաղաքական չորս ուժ՝ երկու կուսակցություն և կուսակցությունների երկու դաշինք՝ հետևյալ համամասնությամբ. Հայաստանի հանրապետական կուսակցություն՝ 771 հազար 247 ձայն կամ 49.12 տոկոս, «Ծառուկյան» կուսակցությունների դաշինք՝ 428 հազար 965 ձայն կամ 27.32 տոկոս, «Ելք» կուսակցությունների դաշինք՝ 122 հազար 49 ձայն կամ 7.77 տոկոս, «Հայ Յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն՝ 103 հազար 173 ձայն կամ 6.57 տոկոս: 105 պատգամավորներից 18-ը կանայք էին: Խորհրդարան էր անցել ազգային փոքրամասնությունների 4 ներկայացուցիչ՝ ռուսական, ասորական, եզդիական և քրդական համայնքներից:

2018թ. դեկտեմբերի 9-ին կայացած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների արդյունքում ձևավորվել է յոթերորդ գումարման Ազգային ժողովը՝ բաղկացած 132 պատգամավորից, որոնք բոլորն ընտրվել են նույն՝ համամասնական ընտրակար-

⁵² Այս ընտրությունների ընթացքում կուսակցություններն ու դաշինքները, գործող օրենսդրության համաձայն, դեռևս ներկայացնում էին նաև տարածքային կամ այսպես կոչված, «ռեյտինգային» ցուցակներ:

գով⁵³: Ընտրություններին մասնակցել է 11 քաղաքական ուժ՝ 9 կուսակցություն և 2 դաշինք: Ընտրությունների արդյունքում «Իմ քայլը» դաշինքը ստացել է 88 մանդատ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 10, «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը՝ 7 մանդատ: «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 96-րդ հոդվածի⁵⁴ համաձայն՝ «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունների 10 և 7 մանդատներին համապատասխանաբար ավելացել են 16 և 11 լրացուցիչ մանդատներ: Արդյունքում յոթերորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների թիվը դարձել է 132: «Իմ քայլը» դաշինքը ստացել է 88 մանդատ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 26 մանդատ, իսկ «Լուսավոր Հայաստանը»՝ 18: 132 պատգամավորներից 32-ը կանայք էին: Ազգային փոքրամասնությունների 4 ներկայացուցիչներ (ռուս, եզդի, ասորի, քուրդ) խորհրդարան են անցել «Իմ քայլը» դաշինքի համապետական ընտրական ցուցակով⁵⁵:

20. 06. 2021թ. արտահերթ ընտրությունների միջոցով ձևավորված ութերորդ գումարման Ազգային ժողովը բաղկացած է համամասնական ընտրակարգով ընտրված 107 պատգամավորից: Աժ նշված ընտրություններն արդեն կազմակերպվել են առանց տարածքային ընտրական ցուցակների՝ «փակ ցուցակների» օգտագործմամբ քվեարկության միջոցով: Խորհրդարանում ներկայացված է երեք քաղաքական ուժ, որոնց միջև ընտրությունների արդյունքում մանդատները բաշխվել էին հետևյալ կերպ. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 71 պատգամավոր, «Հայաստան» դաշինք՝ 29 պատգամավոր, «Պատիվ ու-

⁵³ Այս ընտրությունների ընթացքում ևս կուսակցություններն ու դաշինքները, գործող օրենսդրության համաձայն, դեռևս ներկայացնում էին տարածքային կամ այսպես կոչված, «ռեյտինգային» ցուցակներ:

⁵⁴ Եթե որևէ կուսակցություն ստացել է մանդատների ընդհանուր թվի 2/3-ից ավելին, ապա մյուս կուսակցություններն ստանում են այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որ արդյունքում նրանց մանդատների ընդհանուր թիվը լինի Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի 1/3-ից ոչ պակաս:

⁵⁵ Տե՛ս <http://parliament.am/parliament.php?id=parliament&lang=arm>:

նեն» դաշինք՝ 7 պատգամավոր⁵⁶: Այս պահին խորհրդարանում առկա է խմբակցություններում չընդգրկված մեկ պատգամավոր, ով ի սկզբանե ընդգրկված է եղել «Պատիվ ունեն» խմբակցությունում⁵⁷:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ձևավորման պատմությունն ու ընտրությունների արդյունքում ձևավորված խորհրդարանական կազմերը հիմք են տալիս եզրակացնելու, որ անկախության սկզբնական փուլում գերակշռել է մեծամասնական ընտրակարգով ընտրվող պատգամավորների թիվը: Վերջինս տարիների ընթացքում աստիճանաբար նվազել է, պատգամավորների մեծամասնությունը սկսել է ընտրվել համամասնական ընտրակարգով, իսկ 2015թ. սահմանադրական բարեփոխումներից հետո Ազգային ժողովի բոլոր պատգամավորներն են ընտրվում համամասնական ընտրական համակարգի միջոցով: Այդ հանգամանքն ազդել է նաև խորհրդարանում քաղաքական ուժերի ներկայացվածության համամասնության վրա: Եթե մինչև 2015թ. -ի սահմանադրական բարեփոխումները խորհրդարանում ներկայացված են եղել միջինում 5-6 կուսակցություն կամ դաշինք, ինչպես նաև որոշակի թվով անկախ պատգամավորներ, ապա նշված փոփոխություններից հետո խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի թիվը տատանվում է 3-4-ի միջև, իսկ որպես անկախ պատգամավոր ընտրվելու հնարավորությունները բացակայում են, քանի որ ընտրությունները կազմակերպվում են բացառապես համամասնական ընտրակարգով՝ կուսակցությունների կամ վերջիններիս դաշինքների ցուցակների միջոցով⁵⁸: Մինևույն ժամանակ, ի տարբերություն նախկինում առկա մանդատների համամասնության, երբ մեծամասնություն ունեցող ուժին պատկանող մանդատների թիվը թեև ավելի մեծ էր այլ ու-

⁵⁶ Տե՛ս <https://www.elections.am/Elections/Parliamentary>:

⁵⁷ Ազգային ժողովի ձևավորման պատմությունն ու ընտրությունների արդյունքում ձևավորված խորհրդարանական կազմերը ավելի մանրամասն Տե՛ս <http://parliament.am/deputies.php?sel=factions&lang=arm>:

⁵⁸ Մինևույն ժամանակ, ՀՀ օրենսդրությունը նախատեսում է խմբակցությունից դուրս գալու հնարավորություն, ինչին առավել մանրամասն կանդիդատներն աշխատանքի հետագա շարադրանքի ընթացքում:

ժերին պատկանող մանդատների թվից, բայց ոչ շեշտակի տարբերությամբ՝ նշված փոփոխությունից հետո կայուն խորհրդարանական մեծամասնության գաղափարը հանգեցրել է այնպիսի իրավիճակի, երբ նշված մեծամասնությունն ունեցող քաղաքական ուժը շեշտակի առումով մնացյալ ուժերից տարբերվող շատ մանդատներ է ունենում խորհրդարանում:

Քննարկվող փոփոխությունների արդյունավետությունը գնահատելու նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է անդրադառնալ այն հանգամանքին, թե ինչպիսի տրամաբանություն է ընկած եղել ընտրակարգին առնչվող այդ փոփոխության հիմքում:

2015թ. սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կիրառվող ընտրական համակարգի և դրա հետագա զարգացման հեռանկարների առնչությամբ արձանագրվել է հետևյալը՝ «Գործող խառը ընտրական համակարգը չունի հստակ ուղղվածություն և քաղաքական փոխզիջումների արդյունք է, մի կողմից, մեծամասնական, մյուս կողմից՝ համամասնական ընտրակարգերի կողմնակից քաղաքական ուժերի միջև: Կուսակցական կարծի ցուցակները կուսակցությունների ղեկավարներին փաստացի վերապահում են իրենց ցուցակի պատգամավորների ընտրության հարցը, իսկ ընտրողները որոշակի առումով օտարվում են նախընտրած թեկնածուների ընտրության հարցում վճռորոշ ազդեցություն ունենալուց: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կայուն ընտրական համակարգ ապահովելու համար դրա հիմնական գծերը պետք է ամրագրվեն հենց Սահմանադրությամբ, իսկ կոնկրետ կանոնակարգումները՝ օրգանական /սահմանադրական/ օրենքով: Դա, մասնավորապես, հնարավորություն կտա, որպեսզի ժամանակի ընթացքում ընտրական համակարգը լիովին դրսևորի երկբևեռ քաղաքական համակարգը խթանելու իր ներուժը: Խորհրդարանի ընտրական համակարգի սահմանադրական ամրագրումը լայնորեն կիրառվում է Եվրոպական միության ինչպես հին (Բելգիա, Նիդեռլանդներ, Լյուքսեմբուրգ, Դանիա, Շվեդիա, Նորվեգիա, Իսլանդիա, Իռլանդիա, Ավստրիա, Իսպանիա, Պորտուգալիա), այնպես էլ նոր անդամ երկրներում (Էստոնիա, Լատ-

վիա, Չեխիա): Ընտրական համակարգի բարեփոխումները պետք է անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեն ու խթան հանդիսանան կուսակցությունների կայացման ու ժողովրդավարացման, կայուն քաղաքական համակարգի ամրապնդման համար: Կուսակցությունների խոշորացման և կուսակցական համակարգի կայունության համար անհրաժեշտ է նախատեսել առանձին արգելապատնեշներ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար»: Ավելին, արձանագրվել է, որ խորհրդարանի քաղաքական դերի բարձրացումը կնպաստի կուսակցությունների կողմից իրենց բուն գործառույթների իրականացմանը և երկրում աստիճանաբար երկբևեռ դասական քաղաքական համակարգի ձևավորմանը: Ընդ որում՝ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի գերանձնավորվածությունն ու գերկենտրոնացվածությունը դիտարկվել են որպես հաղթահարման անհրաժեշտություն ունեցող կարևորագույն խնդիրներ⁵⁹: Ակնհայտ է, որ քաղաքական համակարգի գերանձնավորվածության հիմքում ընկած է նաև կուսակցական համակարգի գերանձնավորման հանգամանքը և հակառակը:

Նշված հայեցակարգային մոտեցումներին համապատասխան՝ ՀՀ Սահմանադրությունը 06. 12. 2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում նախատեսեց կայուն խորհրդարանական մեծամասնության գաղափարն ու Ազգային ժողովի ընտրությունները համամասնական ընտրակարգով իրականացնելու առնչությամբ կարգավորումները: Այդ գաղափարներն իրենց հետագա մանրամասն կանոնակարգումը ստացան «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում⁶⁰: Ընդ որում՝ ինչպես արդեն նշեցինք, եթե Օրենսգրքի նախնական տար-

⁵⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ // Մշակվել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>:

⁶⁰ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 25 մայիսի 2016թ. -ին:

բերական ամրագրել էր համամասնական ընտրական համակարգ՝ այսպես կոչված, ռեյտինգային քվեարկության մեթոդի օգտագործմամբ, ապա 01.04.2022թ. -ին «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքով վերացվեց «ռեյտինգային քվեարկության մեթոդը» և համամասնական ընտրությունների համար նախատեսվեց փակ ցուցակների միջոցով պարզ քվեարկության համակարգ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ համատեքստում առաջին հերթին կվերլուծենք այն հանգամանքը, թե որոնք էին Աժ ընտրական համակարգին առնչվող՝ սահմանադրական բարեփոխումների հիմքում ընկած տրամաբանությունն ու նպատակները, և որքանով են դրանք պահպանվել ՀՀ ընտրական օրենսդրության հետագա փոփոխությունների համատեքստում:

Առաջին հերթին նշենք, որ, մեր կարծիքով, քննարկվող հարցադրման առումով սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային հիմնադրույթներն էին կայուն քաղաքական համակարգի ամրապնդումը, կուսակցությունների կայացումն ու ժողովրդավարացումը, կուսակցական համակարգի կայունության երաշխավորումը: Մինչդեռ ***երկրևեռ քաղաքական համակարգի խթանումն ու կուսակցությունների խոչորացումը*** Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով նախատեսված՝ այդ նպատակներին հասնելու միջոցներն էին:

Երկկուսակցական համակարգն այնպիսի համակարգ է, որտեղ երկու հիմնական քաղաքական կուսակցություններ են պայքարում պետական իշխանության համար և կանխորոշում նշված իշխանության շրջանակներում իրականացվող քաղաքականությունը: Տարբեր երկրներում քննարկվող հասկացությունը տարբեր իմաստներով է գործածվում: Օրինակ՝ Միացյալ Նահանգներում երկկուսակցական համակարգը բնութագրում է այն իրավիճակը, երբ բոլոր կամ գրեթե բոլոր ընտրովի պաշտոնյաները ներկայացնում են երկու հիմնական կուսակցություններից մեկը, իսկ երրորդ կուսակցությունների ներկայացուցիչները հազվադեպ են ման-

դատներ ունենում նույնիսկ օրենսդիր մարմնում⁶¹: Ի տարբերություն վերը շարադրվածի՝ Մեծ Բրիտանիայում երկկուսակցական համակարգը ենթադրում է այնպիսի համակարգ, որի շրջանակներում երկու մեծ կուսակցությունները դոմինանտ դերակատարություն ունեն ընտրությունների ընթացքում, բայց որտեղ կան նաև կենսունակ երրորդ կուսակցություններ, որոնք հաղթում են ընտրություններում, մանդատներ ստանում պառլամենտում և ազդեցություն ունենում պետության քաղաքականության վրա⁶²:

Հատկանշական է, որ թեև ԱՄՆ-ն մշտապես դիտարկվել է որպես երկկուսակցական համակարգի ամենահայտնի օրինակներից մեկը, Հիմնադիր հայրերն ի սկզբանե դեմ էին նման համակարգի ձևավորմանը: Միևնույն ժամանակ, վերջիններիս գաղափարներն ու ելույթների տեքստերը⁶³ ուսումնասիրելով՝ հանգում ենք այն եզրակացության, որ նրանք դեմ էին ոչ թե ինքնին երկկուսակցական համակարգի ձևավորմանը, այլ ընդհանուր առմամբ երկիրը մասերի և կուսակցությունների բաժանելուն:

Հետաքրքիր է, որ երկկուսակցական համակարգն այժմ հաճախ է քննադատվում Միացյալ Նահանգներում: Վերջինիս քննադատներն այն համարում են Ամերիկյան կազմաքանդող համակարգ: Նրանց կարծիքով, դեմոկրատներն ու հանրապետականները մասնակցում են մահացու մրցաշարի, իսկ ամերիկացի ժողովուրդը պարզապես հայտնվել է այդ ամենի մեջտեղում: Ավելին, նրանց համոզմամբ, այս երկակիությունը հիմարության աս-

⁶¹ ԱՄՆ Սենատում և Ներկայացուցիչների պալատում տեղերի բացարձակ մեծամասնությունը մշտապես զբաղեցրել են հանրապետականները և դեմոկրատները (Տե՛ս <http://www.senate.gov/history/partydiv.htm>, <http://history.house.gov/Institution/Party-Divisions/Party-Divisions/>):

⁶² 1951թ. ընտրություններին բրիտանացիների 97 տոկոսը քվեարկել էր կոնսերվատիվ կամ լեյբորիստական կուսակցությունների օգտին: 2010թ. մայիսի ընտրություններին այդ տոկոսն իջել էր մինչև 65-ը, և հիմնական կուսակցություններից որևէ մեկը մեծամասնություն չէր ստացել Համայնքների պալատում (առավել մանրամասն Տե՛ս <http://www.nationalreview.com/article/417744/uk-two-party-system-has-become-thing-past-michael-barone>):

⁶³ Տե՛ս Carson McGrath. The Problem with our Bipartisan System, Jan 8, 2016 (<http://theodysseyonline.com/umass/problem-with-bipartisan-system/188839>):

տիճանի է վերածել ամերիկյան քաղաքական դեբատը, քանի որ որևէ հարցի վերաբերյալ չկա ռացիոնալ քննարկում, իսկ խնդիրները չեն կարող լուծվել առանց նման քննարկման⁶⁴:

Քաղաքագիտության մեջ լայնորեն տարածված է այն գաղափարը, որ նախագահական համակարգերում երկկուսակցական ժողովրդավարությունն առավել կայուն է, քան բազմակուսակցական ժողովրդավարությունը: Մինչդեռ խորհրդարանական համակարգերի համատեքստում նույնիսկ բազմակուսակցական համակարգը կարող է նպաստել կայուն կառավարման համակարգի արմատավորմանը, օրինակ՝ կոալիցիաների ձևավորման միջոցով⁶⁵:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ այս թեմայով քննարկման նպատակն ու էությունը, որպես կանոն, պատշաճ չեն ընկալվում, և սահմանափակվում են սոսկ երկկուսակցական և բազմակուսակցական համակարգերի միջև պարզ ընտրություն կատարելու հանգամանքը դիտարկելով: Մեր կարծիքով, սակայն, հիշյալ համատեքստում առանցքային է/պետք է լինի կայուն և ներկայացուցչական քաղաքական համակարգ ու իշխանություն ունենալու գաղափարը: Իսկ երկկուսակցական կամ բազմակուսակցական համակարգերի միջև ընտրությունն ընդամենը միջոց է նշված նպատակին հասնելու տեսանկյունից:

Հետևաբար, մեր կարծիքով, կայուն ժողովրդավարության տեսանկյունից էական է ոչ թե պետությունում առկա կուսակցությունների փաստացի թիվը, այլ քաղաքական բազմազանության իրական մակարդակը: Ակնհայտ է, որ գոյություն չունեն կայուն ժողովրդավարություն և կայուն քաղաքական համակարգ ձևավորելու միանշանակ և բացարձակ մեխանիզմներ: Ավելին, այդ նպատակներին հասնելու միջոցները բազմազան են և պայմանավորված են տարատեսակ հանգամանքներով, որոնք պետք է պատ-

⁶⁴ St' u Coblenz M., The Two-party System is Destroying America, January 28, 2016 (առավել մանրամասն St' u <http://thehill.com/blogs/congress-blog/politics/267222-the-two-party-system-isdestroying-america>):

⁶⁵ St' u Mainwaring S., Presidentialism, Multiparty Systems, and Democracy: the Difficult Equation, September 1990 (առավել մանրամասն St' u <https://www3.nd.edu/~kellogg/publications/workingpapers/WPS/144.pdf>):

շաճ ուշադրության արժանանան քննարկվող հարցին լուծումներ գտնելու ընթացքում:

Այդ մասին է վկայում և այն հանգամանքը, որ նույն պատճառները հաճախ ներկայացվում են միմյանցից կոնցեպտուալ առումով տարբերվող տարատեսակ համակարգերը քննադատելու համատեքստում: Օրինակ՝ ԱՄՆ և Հայաստանյան քաղաքական համակարգերի քննադատության դիտանկյունից հաճախ ներկայացվում են նույն պատճառները⁶⁶:

Նեոկաբար, ակնհայտ է, որ առաջարկվող առանձին լուծումներ կարող են ընդունելի լինել Հայաստանի համար, բայց արդյունավետ չլինել Միացյալ Նահանգների կամ այլ համակարգերի տեսանկյունից և հակառակը: Դա պայմանավորված է բազմաթիվ իրավական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական և այլ գործոններով, որոնց անդրադարձել ենք աշխատության սույն գլխի տարբեր հատվածներում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ արձանագրենք, որ քաղաքական համակարգերի կայացման, տարատեսակ համակարգերի միջև ընտրություն կատարելու առնչությամբ ներկայացված չափանիշները վերաբերելի են նաև Հայաստանյան համատեքստին: Այդ առումով կարծում ենք, որ թեև 2015թ. սահմանադրական բարեփոխումների գործընթացում երկբևեռ համակարգի ձևավորման հիմնական նպատակը քաղաքական համակարգի ամրապնդումը, կուսակցությունների կայացումն ու ժողովրդավարացումը, կուսակցական համակարգի կայունության երաշխավորումն էր, սակայն ակնհայտ է, որ ինչպես տարբեր տարիներին Հայաստանում առկա կուսակցությունների թիվը, այնպես էլ երկբևեռ համակարգի ձևավորման փորձերը ինքնին չեն հանգեցրել ինչպես *իրական քաղաքական* բազմազանության, այնպես էլ *քաղաքական և կուսակցական համակարգերի կայունության*: Ուստի այս փուլում առանցքային ենք համարում խնդիրների բացահայտման և դրանց

⁶⁶ Առավել մանրամասն St' u Manasyan A. The Two-Party Political System and Perspectives of Its Development in the Republic of Armenia // Studia Politologiczne (Political Science Studies), N 44, published by the Institute of Political Science of Warsaw University, Warsaw, 2017, էջ 300-306:

համար լուծումների ամրագրման մեթոդաբանության փոփոխությունն ու վերափնաստավորումը:

Հայաստանյան կուսակցական համակարգին բնորոշ թերությունները մշտապես են արձանագրվել մասնագիտական գրականության շրջանակներում: Այդ առումով ընդգծվել է, որ Հայաստանի քաղաքական դաշտը կուսակցությունների առատության և բազմազանության պակաս չի զգում: Որոշ հեղինակների կարծիքով, դա թեև արտաքուստ պայմանավորված է ընտրություններին մասնակցելու ցանկությամբ, սակայն այդ հանգամանքը մասամբ բացատրվում է նաև հայերի՝ անհատական նախաձեռնության, անձնական պատվախնդրության և անարխիայի որոշ տարրերի հանդեպ ունեցած հակվածությամբ: Միևնույն ժամանակ, շեշտադրվում է, որ Հայաստանում կուսակցությունների թիվը բնավ ուղիղ համեմատական չէ նրանց որակական հատկանիշների առկայությանը: Քաղաքական կյանքում իրական դերակատարություն ունեցող կուսակցությունների թիվը չափազանց քիչ է, կուսակցությունների մեծ մասի նույնիսկ անվանումն է անժամոթ հասարակությանը: Ավելին, այդ կուսակցությունների ծրագրերն ու կանոնադրությունը բավարար են փաստելու, որ նրանց հիմնական գաղափարներն ու նպատակները նույնական են: Գրականության մեջ հայկական կուսակցությունների մեծամասնությունը դասվում է Դյուվերժեի կողմից առանձնացված կադրային կուսակցությունների շարքին, երբ ընտրությունների ֆինանսավորումն իրականացվում է կոնկրետ խումբ անձանց կողմից, այդ կուսակցությունները սոցիալական ամուր բազա չունեն, կուսակցության անդամների և համակիրների աճը կամ նվազումը պայմանավորված է սոսկ ակտիվ անդամներով և նրանց գործունեությամբ և այլն⁶⁷:

Հիշյալ համատեքստում հարց է առաջանում այն մասին, թե արդյոք 2015թ. սահմանադրական բարեփոխումներից հետո

⁶⁷ Տե՛ս Մխիթարյան Ս. Քաղաքական ինստիտուտների ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում // «21-րդ Դար», թիվ 1 (15), 2007, <https://cyberleninka.ru/article/n/FORMIROV%D0%90NIE-POLITICHESKIKH-INSTITUTOV-V-RESPUBLIKE-%D0%90RMENIYA-68/viewer>

հնարավոր է եղել լուծել Հայաստանյան քաղաքական և կուսակցական համակարգերին բնորոշ նշված խնդիրները: Կարծում ենք, որ վերջիններս՝ քաղաքական և կուսակցական համակարգերի ու ընտրական պայքարի գերանձնավորում, կուսակցական համակարգի անկայունություն, ծրագրային առանձնահատկությունների և տարբերությունների հիման վրա ընտրական պայքարի բացակայություն և այլն, Հայաստանյան իրականությանը շարունակում են բնորոշ լինել նաև նշված փոփոխություններից հետո: Ընդ որում՝ այն հիմնական տարբերությամբ, որ կայուն խորհրդարանական մեծամասնության պայմաններում քաղաքական ուժերից մեկը մշտապես ձեռք է բերում որակյալ մեծամասնություն: Այդ հանգամանքը թեև կարևոր դերակատարություն կարող է ունենալ պետական իշխանության կայունության տեսանկյունից, սակայն պատշաճ մեթոդաբանությամբ կուսակցությունների և կուսակցական համակարգի զարգացումը չապահովելու պարագայում վերջինս կարող է դառնալ քաղաքական բազմազանությունը խոչընդոտելու և միակուսակցական համակարգ ձևավորելու ճանապարհ: Իսկ այդ հանգամանքը վտանգավոր է այն պայմաններում, երբ կուսակցություններն ու կուսակցական համակարգը ոչ միայն զարգացած չեն, այլև պետությունը չունի պատշաճ մեթոդաբանությամբ վերջիններիս զարգացումն ապահովելու հստակ ռազմավարություն և համակարգ:

Ուստի առաջին հանգամանքը, որն անհրաժեշտ է նկատի ունենալ հիշյալ համատեքստում, այն է, որ կուսակցությունների խոչորացումն ու խորհրդարանում սոսկ մի քանի խոշոր քաղաքական ուժերի ներկայացվածությունը կարող են լինել քաղաքական համակարգի կայունացման ու ժողովրդավարացման միջոց սոսկ այն պայմաններում, երբ այդ նպատակով իրացվում են նաև կուսակցությունների և կուսակցական համակարգի կայացման, ինչպես նաև կուսակցական ժողովրդավարության զարգացման պատշաճ կառուցակարգեր:

Ավելին, 2015թ. սահմանադրական բարեփոխումների, դրանց հիման վրա ընդունված օրենսդրության, վերջինիս հետագա զարգացումների և այդ ամենի արդյունքում ձևավորված քա-

ղաքական ու իրավական իրականության վերլուծությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ խորհրդարանի և կառավարության կայունության գաղափարը գոյություն ունեցող իրավակարգավորումների և քաղաքական ու իրավական մշակույթի համատեքստում պատշաճ չի հավասարակշռվել ներկայացուցչականության երաշխավորման գաղափարին: Այդ ամենը հանգեցրել է պետական իշխանության «կառավարելիության» և «կայունության» գաղափարների ֆետիշացման, ինչը Հայաստանյան իրականության պայմաններում քաղաքական բազմազանությունը խոչընդոտելու և փաստացի միակուսակցական համակարգ ձևավորելու տեսանկյունից կարող է հանգեցնել վտանգավոր հետևանքների: Վենետիկի հանձնաժողովը ևս նշված հարցի առնչությամբ արձանագրել է, որ պատմական պատճառներով կայուն մեծամասնության Հայաստանյան սահմանադրական սկզբունքը չափազանց ուժեղ շեշտադրում է կատարում կառավարության կայունությանը՝ ի համեմատություն համամասնության⁶⁸:

Ավելին, նման իրողության պայմաններում առկա է նաև կառավարության, քաղաքական և կուսակցական համակարգերի կայունության գաղափարը զուտ կոնկրետ պահին իշխող քաղաքական ուժի քաղաքական ներկայացվածության շարունակականությունն ու վերջինիս վերարտադրման հնարավորությունները երաշխավորելու միջոցի վերածելու հավանականությունը, ինչը ևս պետք է արժանանա պատշաճ ուշադրության և բացառվի բոլոր իրավական և քաղաքական գործընթացների համատեքստում:

Կարծում ենք նաև, որ ընտրական գործող օրենսդրությունը որոշակիորեն շեղվել է 2015թ. սահմանադրական բարեփոխումների հիմքում ընկած հայեցակարգային հիմնադրույթներից: Իսկ այդ հանգամանքը ենթադրում է, որ անկախ հայեցակարգային լուծումների նկատմամբ տարբեր մասնագիտական տեսակետներից, այդ փուլում բացահայտված խնդիրների, դրանց լուծման

⁶⁸ St'e u CDL-PI(2021)006, Joint urgent opinion on amendments to the Electoral Code and related legislation, Armenia // European Commission for Democracy through Law (Venice Commission), OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR), Strasbourg, Warsaw, 21 April 2021:

համար առաջ քաշված եղանակների միջև այլևս չկա ամբողջականություն և որոշ դեպքերում նաև՝ տրամաբանական կապ: Օրինակ՝ 2015թ. սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի հիմքում ընկած կարևոր գաղափարներից մեկը կուսակցական կարծի ցուցակներից հրաժարումն էր, քանի որ այդ համակարգը կուսակցությունների ղեկավարներին փաստացի վերապահում է իրենց ցուցակի պատգամավորների ընտրության հարցը, իսկ ընտրողները որոշակի առումով օտարվում են նախընտրած թեկնածուների ընտրության հարցում վճռորոշ ազդեցություն ունենալուց: Մինչդեռ, ինչպես արդեն նշեցինք, ընտրական օրենսդրության ընթացիկ զարգացումները հանգեցրել են նման «փակ ցուցակների» համակարգին վերադարձի:

Կարծում ենք, որ անկախ նշված հայեցակարգով ու դրա հիման վրա կատարված փոփոխություններով առաջարկված լուծումների նկատմամբ վերաբերմունքից, ինչպես նաև այն հանգամանքից, որ միջազգային խորհրդատվական մարմինների արձագանքն ինչպես ի սկզբանե կատարված, այնպես էլ հետագայում առաջարկված փոփոխությունների առնչությամբ ընդհանուր առմամբ բացասական չէր, սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով առաջարկվող լուծումներն ամբողջական էին սոսկ վերջիններիս միջև ընկած տրամաբանական կապերի և բոլոր լուծումների համաժամանակյա իրացման համատեքստում: Դրանց բացակայության պայմաններում խախտվում են փոփոխությունների հիմքում ընկած ամբողջ տրամաբանությունն ու ենթադրվող արդյունքների ամբողջականությունը:

Խնդրահարույց ենք համարում նաև այն հանգամանքը, որ թեև գործող իրավակարգավորումների համաձայն՝ ԱԺ ընտրությունները կազմակերպվում են բացառապես համամասնական ընտրակարգով՝ կուսակցությունների կամ վերջիններիս դաշինքների «փակ» ցուցակների միջոցով, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը նախատեսում է պատգամավորի՝ խմբակցության կազմից դուրս գալու հնարավորութ

յուն⁶⁹: Կարծում ենք, սակայն, որ «փակ ցուցակների» միջոցով կազմակերպվող ընտրությունների պարագայում այդ կանոնակարգումները կարող են վտանգել պառլամենտական կայունությունն ու ժողովրդի ազատ կամաարտահայտմամբ ձևավորված քաղաքական հավասարակշռությունը:

Այդ առումով հիշատակման են արժանի ՀՀ սահմանադրական դատարանի՝ 30 հունիսի 2009թ. ՍԴՈ-810 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանը մասնավորապես նշել է. «... Ներկայացուցչական ազատ մանդատի էությունն այն է, որ պատգամավորները ներկայացնում են ոչ թե ու ոչ միայն իրենց ընտրողներին, այլ ընդհանրական սուբյեկտ՝ ժողովրդին, ում կամքը գերակա է տեղական ընտրագանգվածի կամքի նկատմամբ:

Միաժամանակ, միջազգային պրակտիկայում առկա է մեկ այլ ինստիտուտ, որը՝ առնչվելով հրամայական մանդատի ինստիտուտին, այնուամենայնիվ, տարբեր իրավական բովանդակություն ունի: Դա մանդատի գործողության դադարեցումն է կուսակցական պատկանելության փոփոխության հետևանքով: Այս ինստիտուտը վերաբերում է համամասնական ընտրական համակարգին և տարբեր դրսևորումներ ունի՝ կապված բուն ընտրական համակարգի առանձնահատկությունների հետ: Այն երկրներում, որտեղ գործում է մեծամասնական-համամասնական խառն ընտրական համակարգ ու որոնցում առկա է կայուն և զարգացած քաղաքական կառուցակարգ, ազատ մանդատի սկզբունքը տարածվում է բոլոր պատգամավորների վրա և կուսակցական պատկանելության փոփոխությունը նման խնդիր չի հարուցում: Խնդիրն առկա է այն պարագայում, երբ պատգամավորության թեկնածուն ընտրական քվեաթերթիկում ներկայացված չէ, և ընտրողը նրա վերաբերյալ որևէ դիրքորոշում չի արտահայտել»: Միևնույն ժամանակ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Միջազգային սահմանադրաիրավական պրակտիկան

⁶⁹ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 3 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ, 9-րդ հոդվածի 4-րդ մաս:

վկայում է, որ ընտրական օրենսդրությամբ նախատեսված համամասնական ընտրակարգը կարող է լինել նաև այնպիսին, որ ընտրողը ձայնը տալիս է որևէ քաղաքական ուժի՝ նրա քաղաքական կողմնորոշումների ու հանրությանը ներկայացրած ծրագրային մոտեցումների հիման վրա՝ առանձին դիրքորոշում չարտահայտելով կուսակցության համամասնական ընտրական ցուցակներում ներկայացված անձանց վերաբերյալ: **Նման պարագայում քաղաքական ուժն է ժողովրդի կողմից պատվիրակված քաղաքական իշխանության կրողը՝ առանձին կամ քաղաքական կուլիցիա կազմելու ճանապարհով:** Նման ընտրակարգում ժողովրդի վստահությունը ոչ թե անձի, այլ քաղաքական ուժի ու նրա կողմից ներկայացված ծրագրային մոտեցումների նկատմամբ է: Այդ վստահությամբ է պայմանավորված նաև ընտրությունների ու դրա արդյունքում ձևավորվող իշխանության լեգիտիմությունը: Քաղաքական մշակույթն այն մակարդակին պետք է լինի, որ ընտրողը կարողանա կողմնորոշվել հենց նման ծրագրային մոտեցումներով: Նման ընտրակարգի պայմաններում համամասնական կարգով թեկնածու են գրանցվում կուսակցությունները կամ նրանց դաշինքները, որոնք նախընտրական քարոզչությունը վարում են այնպիսի ծրագրային մոտեցումների հիման վրա, որոնք ընտրողին պետք է կողմնորոշեն օրենսդիր պետաիշխանական գործառույթը տվյալ կուսակցությանը վստահելու կամ չվստահելու հարցում: Դրանով է նաև որոշվում քաղաքական ուժի իրական տեղն ու դերն օրենսդիր իշխանության համակարգում: . . .

Միջազգային պրակտիկայի վերլուծությունը վկայում է նաև, որ այնպիսի ընտրական համակարգերի պարագայում, ինչպիսին առկա է Հայաստանում, համամասնական ընտրակարգով մանդատը ստանալուց հետո իրենց կուսակցությունները լքելու կամ կուսակցական պատկանելությունը փոխելու հանգամանքը պառլամենտական կայունության և ընտրողների կատարած ընտրությանը հավատարիմ մնալու տեսանկյունից դառնում է ժամանակակից ժողովրդավարությունների առջև ծառայած լուրջ հիմնախնդիր: Նման պրակտիկան հանգեցնում է նրան, որ ընտրողների կայացրած որոշումը հաճախ զանգվածաբար փոփոխութ-

յան է ենթարկվում: Այդ խնդրի լուծման եղանակների ընտրությունը, բնականաբար, մեծապես պայմանավորված է ընտրական համակարգերի առանձնահատկություններով: ...»: Շարունակելով հարցին առնչվող իրավական վերլուծությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրեց, որ «Տարբեր երկրների պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ բոլոր դեպքերում խորհրդարանական խմբակցությունները լքելու փորձերը գլխավորապես հրահրվում են ընթացիկ քաղաքական նպատակներ հետապնդելով՝ փոխելով ընտրողների իրական կամաարտահայտման պատկերը: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ երկրի քաղաքական կառուցակարգերի ամրապնդման, քաղաքական կուսակցությունների կայացման, քաղաքական հանդուրժողականության մթնոլորտի ապահովման, քաղաքական պատասխանատվության երաշխավորման համար առանձնապես համակարգային վերափոխումների փուլում անհրաժեշտ է «հակադասալքային» դրույթների ամրագրումն օրենսդրության մեջ: **Ու հատկապես վերաբերում է այն երկրներին, որտեղ համասանական ընտրակարգով ընտրություններում ընտրողներին չի ներկայացվում կուսակցության կողմից առաջադրվող թեկնածուների ցուցակը, որպեսզի ընտրողները դիրքորոշում արտահայտեն ցուցակում ընդգրկված անձանց վերաբերյալ:** Ընդ որում, միայն այն ընտրական համակարգի դեպքում կարող է կիրառվել «դասալքության» կանխման իրավական կարգավորումը, երբ պատգամավորն ընտրվել է ոչ թե նրա վերաբերյալ ընտրողի կարծիքը հաշվի առնելու հիման վրա, այլ զուտ կուսակցության ծրագրին հավանություն տալու արդյունքում, այսինքն՝ երբ շեշտադրումը կատարվում է քաղաքական պատասխանատվության և դրա ապահովման կառուցակարգերի վրա:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության ցանկացած փոփոխություն, որն ընթացիկ շահեր է հետապնդում և փոխում է ժողովրդի ազատ կամաարտահայտմամբ ձևավորված քաղաքական հավասարակշռությունն օրենսդիր մարմնում, անհամատեղելի է ժողովրդաիշխանության հիմնարար սկզբունքների հետ և իրավա-

չափ համարվել չի կարող: ...»:

Արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրեց, որ Հայաստանի Հանրապետությունում առկա ընտրակարգի շրջանակներում⁷⁰, երբ պատգամավորը ցանկանում է դուրս գալ խորհրդարանական խմբակցությունից, դա կարող է անել մանդատը կամավոր վայր դնելուց հետո միայն: Պատճառն այն է, որ հակառակը կնպաստի առանց ընտրողների կամաարտահայտության (կամ դրան հակառակ) **խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությանը, ինչը չի բխում իրավական պետության և ժողովրդաիշխանության սահմանադրական հիմնարար սկզբունքներից:**

Կերը շարադրվածը նկատի ունենալով՝ ՀՀ սահմանադրական դատարանը «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի՝ «Պատգամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին» դրույթը՝ քվեաթերթիկներում որպես ընտրական ցուցակի թեկնածուներ չնշված պատգամավորների առնչությամբ, ճանաչեց ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 7-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այնքանով, որքանով այն նպաստում է Ազգային ժողովում ժողովրդի ազատ կամաարտահայտմամբ ձևավորված քաղաքական հավասարակշռության փոփոխությանը:

Կարծում ենք, որ ի տարբերություն համամասնական այնպիսի ընտրական համակարգի, երբ ընտրողը կարող է էական դերակատարություն ունենալ ցուցակում ներկայացված թեկնածուների դասակարգման, այս կամ այն թեկնածուի ընտրության հարցում⁷¹, «վիակ ցուցակների» միջոցով ընտրությունների կազմակերպման պայմաններում կուսակցության/դաշինքի կողմից ներկայացված

⁷⁰ Երբ պատգամավորը մանդատն ստանում է կուսակցությանը տված ծայրերի շնորհիվ, նշված չի եղել քվեաթերթիկում, նրա վերաբերյալ ընտրողը որևէ կամաարտահայտություն չի դրսևորել:

⁷¹ Որոշակի առումով այդպիսի համակարգ կարելի է համարել տարածքային կամ այսպես կոչված, «ռեյտինգային» ցուցակների առկայությամբ քվեարկությունը, որն ի սկզբանե որդեգրել էր «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը:

ցուցակով ընտրված պատգամավորի կողմից խմբակցությունից դուրս գալը կարող է հանգեցնել խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության և այնպիսի իրավիճակի, երբ անկախ ժողովրդի կամքից՝ փոխվում է վերջինիս ազատ կամարտահայտմամբ ձևավորված քաղաքական հավասարակշռությունն օրենսդիր մարմնում: Իսկ այդ իրավիճակը չի բխում իրավական պետության և ժողովրդաիշխանության սահմանադրական հիմնարար սկզբունքներից:

Անփոփելիով վերը շարադրվածը՝ արձանագրենք, որ, մեր կարծիքով, երկբևեռ քաղաքական համակարգի ձևավորմանն ուղղված փոփոխությունները չեն ծառայել դրանց հիմքում ընկած հիմնական նպատակներին: Ավելին, լուծումների մի մասը աստիճանաբար շեղվել է այն հայեցակարգային հիմնադրույթներից ու տրամաբանությունից, որն ի սկզբանե դրված է եղել դրանց հիմքում: Ակնհայտ է նաև, որ սահմանադրական ու օրենսդրական փոփոխություններին համահունչ չեն ներդրվել ու գործարկվել կուսակցությունների կայացման և կուսակցական ժողովրդավարության երաշխավորմանն ուղղված բավարար, ամբողջական և պատշաճ կառուցակարգեր: Արդյունքում քննարկվող համակարգային փոփոխությունները չեն ծառայել իրենց հիմքում ընկած հիմնական գաղափարին ու նպատակին: Ավելին, մեր հանրապետությունում առկա քաղաքական իրողության պայմաններում դրանք մեծացրել են միաբևեռ համակարգի ձևավորման վտանգը և չեն հանգեցրել քաղաքական համակարգի իրական կայունության: Կարծում ենք, որ ձևավորված համակարգը չի երաշխավորել խորհրդարանի և կառավարության «կայունության և կառավարելիության» ու խորհրդարանի «ներկայացուցչականության» միջև պատշաճ հավասարակշռություն:

Սույն գլխի շրջանակներում կատարված ամբողջ վերլուծությունը հուշում է, որ բոլոր ընտրական համակարգերն էլ որպես այդպիսին ընդունելի են, և վերջիններիս ընտրության ընթացքում, այլ հանգամանքների թվում, անհրաժեշտ է նկատի ունենալ այն նպատակը, որը պայմանավորում է ընտրական համակարգի ընտրությունը: Այդ տեսանկյունից գտնում ենք, որ Հայաստանյան

իրավական ու քաղաքական մշակույթի և քաղաքական իրողությունների այս փուլում քննարկված նպատակներից որևէ մեկի ֆետիշացումը կամ գերադասումը ոչ միայն չի ծառայելու իր հիմքում ընկած խնդիրների կարգավորմանը, այլև հանգեցնելու է այդ նպատակների էությունը պայմանավորող տրամաբանության ձևախեղման: Ուստի, մեր կարծիքով, հիշյալ համատեքստում առանցքային է կայունության ու ներկայացուցչականության գաղափարների միջև պատշաճ հավասարակշռություն երաշխավորող համակարգի արմատավորումն ու զարգացումը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ ընտրական համակարգի զարգացման, դրա արդյունքում՝ նաև կուսակցական ու քաղաքական համակարգերի կայացման տեսանկյունից առաջնահերթ նշանակություն ունեն ներքոհիշյալ հանգամանքներն ու դրանց պատշաճ համադրումն ու հավասարակշռումը.

✓ Անհրաժեշտ է արմատավորել այնպիսի համակարգ, որը կարող է երաշխավորել խորհրդարանի (արդյունքում նաև՝ կառավարության) «արդյունավետ կառավարելիության», «կայունության» և «ներկայացուցչականության» գաղափարների միջև պատշաճ հավասարակշռություն՝ ստեղծելով կուսակցական համակարգի կայացման համար անհրաժեշտ նախադրյալներ:

✓ Առանցքային նշանակություն ունի այնպիսի ընտրական համակարգի ներդրումն ու կատարելագործումը, որը կարող է երաշխավորել ընտրությունների օրինականության և արդյունքների լեգիտիմության միջև պատշաճ հավասարակշռություն այն տեսանկյունից, որ խորհրդարանում քաղաքական ուժերի միջև տեղերի բաշխման պատկերը համարժեք լինի ընտրողների շրջանում նրանց վայելած իրական աջակցությանը: Հակառակ պարագայում, ինչպես նշել ենք աշխատանքի ամբողջ բովանդակության շրջանակներում, անխուսափելի է դառնալու ներկայացուցչական ժողովրդաիշխանության էության ձևախեղումն ու ընտրությունների նկատմամբ հանրային վստահության մակարդակի ընդհանուր անկումը:

✓ Հայաստանյան մշակույթն ու ավանդույթները հաշվի առ-

նելով՝ կարևորում ենք այնպիսի համակարգի արմատավորումը, որը կարող է երաշխավորել տարբեր տարածաշրջաններից Ազգային ժողովում պատգամավորների հնարավորինս համաչափ ներկայացվածությունը:

✓ Կարծում ենք, որ Ազգային ժողովի ընտրությունների կազմակերպումը բացառապես «փակ ցուցակների» միջոցով համամասնական ընտրակարգի հիման վրա չի համապատասխանում աշխատանքի շրջանակներում ներկայացված գաղափարների հիմքում ընկած տրամաբանությանը: Մինևույն ժամանակ, կուսակցական համակարգի կայացման տեսանկյունից կարևորում ենք համամասնական ընտրական համակարգի առկայությունն ու էական դերակատարությունը: Ուստի, կարծում ենք, որ Ազգային ժողովի կազմավորման նպատակով կիրառվող ընտրական համակարգի առումով կարող են կիրառելի լինել հետևյալ երկու հիմնական մոդելները՝ 1. ամբողջապես համամասնական ընտրական համակարգի վրա հիմնված ընտրություն՝ «փակ ցուցակների» բացառմամբ և նախընտրած թեկնածուների ընտրության հարցում ընտրողների վճռորոշ ազդեցությունը երաշխավորող տարատեսակ մեթոդների հնարավոր կիրառմամբ, օրինակ՝ գերադասելի, բացասական քվեի կամ այլ համանման մեթոդների կիրառում⁷², 2. համամասնական և մեծամասնական ընտրական համակարգերի համադրում՝ համամասնական ընտրական համակարգով ընտրվող պատգամավորների առավել մեծ թիվ նախատեսելով:

✓ Չափազանց կարևոր է ընտրական այնպիսի կանոնների ամրագրումը, որոնք կարող են նպաստել կուսակցությունների խոշորացմանն ու կուսակցական համակարգի կայացմանը՝ մինևույն ժամանակ չհանգեցնելով քաղաքական բազմազանության իսպառ վերացման: Այդ տեսանկյունից առանցքային է, օրինակ՝ ընտրվելու համար անհրաժեշտ այնպիսի ընտրական շեմի

⁷² Նման համակարգի առկայությունն է որպես քաղաքական և կուսակցական համակարգերի կայունացման միջոց դիտարկվել նաև 2015թ. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում:

նախատեսումը, որը կարող է երաշխավորել արդարացի ներկայացվածության և կառավարության կայունության միջև պատշաճ հավասարակշռություն: Ընդ որում՝ այդ հարցի առնչությամբ որոշում կայացնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ պետությունում առկա քաղաքական և ինստիտուցիոնալ ամբողջ համատեքստը:

Նշենք, որ 2021թ. -ին ՀՀ Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում փոփոխվեցին ընտրվելու համար անհրաժեշտ ընտրական շեմերը: Մասնավորապես, Ընտրական օրենսգրքի 95 հոդվածի 4-րդ մասը նախատեսեց, որ Ազգային ժողովի մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անձնությունների թվի գումարի՝ կուսակցության դեպքում՝ 4 տոկոս, մինչև երեք կուսակցություններից կազմված կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 8 տոկոս, իսկ 4 և ավելի կուսակցություններից կազմված դաշինքի դեպքում՝ 10 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ⁷³: Կարծում ենք, որ կուսակցությունների դաշինքների համար ընտրական շեմի բարձրացումն ու նման անհամաչափ բարձր շեմի նախատեսումը կարող է լուրջ վտանգներ ստեղծել խորհրդարանի կայունության ու ներկայացուցչականության գաղափարները հավասարակշռելու տեսանկյունից: Վեներտիկի հանձնաժողովը ևս այդ առումով արձանագրել է, որ կուսակցությունների դաշինքների համար ընտրական նման բարձր շեմի նախատեսումը հիմնավորված չէ և առաջարկել է վերանայել նշված որոշումը⁷⁴:

Կուսակցությունների/դաշինքների ընտրական ցուցակներում ընդգրկվող թեկնածուների նվազագույն թիվը ևս պետք է նախա-

⁷³ Մինչ նշված փոփոխությունները շեմը հետևյալն էր՝ կուսակցության դեպքում՝ 5, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 7 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ:

⁷⁴ Տե՛ս CDL-PI (2021)006, Joint urgent opinion on amendments to the Electoral Code and related legislation, Armenia // European Commission for Democracy through Law (Venice Commission), OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR), Strasbourg, Warsaw, 21 April 2021:

տեսվի այն տրամաբանությամբ, որպեսզի մի կողմից նպաստի կուսակցական համակարգի հզորացմանն ու կայունացմանը, իսկ մյուս կողմից խոչընդոտ չդառնա քաղաքական բազմազանության երաշխավորման տեսանկյունից:

✓ Նշված բոլոր փոփոխությունները կատարելիս և մոդելների միջև ընտրություն կատարելիս պետք է նկատի ունենալ կուսակցական համակարգի կայունության երաշխավորման և ժողովրդավարացման համար անհրաժեշտ կառուցակարգերի ներդրմանն ու շարունակական զարգացման բացառիկ դերակատարությունը: Ավելին, հարկ է նկատի ունենալ, որ առանց նշյալ կառուցակարգերի գործադրման, ընտրական համակարգի որևէ փոփոխություն չի ծառայելու իր հիմնական նպատակին:

✓ Ցանկացած համակարգային փոփոխություն, այդ թվում ընտրական համակարգի փոփոխություններ կատարելուց առաջ/դրա ընթացքում անհրաժեշտ է պատշաճ մեթոդաբանությամբ նախապատրաստել, իրազեկել հանրությանը, վերապատրաստել համապատասխան գործընթացների տեսանկյունից պատասխանատու սուբյեկտներին:

**§ 5. Տեղական ինքնակառավարման մարմինների
ընտրության նպատակով կիրառվող ընտրական
համակարգի դերը ընտրությունների օրինականությունն
ու արդյունքների լեգիտիմությունը
հավասարակշռելու տեսանկյունից**

Աշխատանքի շրջանակներում ներկայացված արժեքները, չափանիշներն ու սկզբունքներն անհրաժեշտ է նկատի ունենալ նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների առունձով ընտրական համակարգը նախատեսելիս ու գործարկելիս:

«Սահմանադրության 181 հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը սահմանվում է Ընտրական օրենսգրքով: Համաձայն «ՎՎ Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օ-

րենքի՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անց են կացվում մեծամասնական կամ համամասնական ընտրակարգով: Օրենսգրքի 104. 1 հոդվածը նախատեսում է, որ մինչև 4000 ընտրող ունեցող համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններն անցկացվում են մեծամասնական ընտրակարգով: 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում համայնքի ավագանու ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով: Նշված փոփոխությունները կատարվել են 07.05.2021թ. -ին: Մինչ այդ համամասնական ընտրական համակարգով էին ընտրվում սոսկ Երևան, Վանաձոր և Գյումրի համայնքների ավագանիները: Ընդ որում՝ քննարկվող փոփոխությունները տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին վերաբերելի մասով ուժի մեջ են մտել 26.06.2021թ. -ին՝ համաձայն 07.05.21 ՀՕ-202-Ն օրենքի 104-րդ հոդվածի 3-րդ մասի:

Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 141 հոդվածի 3-րդ մասի՝ ավագանու անդամների մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի՝ կուսակցության դեպքում՝ 4, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 6 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ:

Նույն օրենսգրքի 142. 2 հոդվածին համապատասխան՝ «1. Համայնքի ղեկավարի ընտրությունն անցկացվում է նորընտիր ավագանու առաջին նիստի ընթացքում: Առաջին նիստն անընդհատ է, բացառությամբ ընդմիջման ու հանգստի համար նախատեսված ժամանակի, մինչև համայնքի ղեկավարի ընտրությունը:

2. Եթե համայնքի ավագանու ընտրության արդյունքով ընտրությանը մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքից) մեկն ստանում է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձն օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասում նշված կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը հրաժարվում է կամ ավագանու ընտրությունների արդյունքով որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) չի ստանում ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա համայնքի ղեկավարն ընտրվում է բաց քվեարկության միջոցով:

4. Ավագանու խմբակցությունները կարող են իրենց կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում տեղ զբաղեցրած անձին առաջադրել որպես համայնքի ղեկավարի թեկնածու, իսկ եթե նա հրաժարվում է, ապա խմբակցությունը կարող է առաջադրել տվյալ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուների ցուցակի համապատասխանաբար հաջորդ այն անձին, որը համաձայն է առաջադրվել որպես թեկնածու:

5. Քվեարկությունն անցկացվում է քվեաթերթիկների միջոցով, որոնցում ընդգրկվում են առաջադրված բոլոր թեկնածուները:

6. Ավագանու յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

7. Եթե առաջադրվել է մեկից ավելի թեկնածու, ապա համայնքի ղեկավար է ընտրվում այն թեկնածուն, որն ստանում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Եթե առաջադրված թեկնածուներից որևէ մեկը չի ստանում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, ապա առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների միջև անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ: Եթե հավասար ձայների պատճառով հնարավոր չէ պարզել առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուներին, ապա երկրորդ փուլին մասնակցում են նաև հավասար ձայներ ստացած մյուս թեկնածուները: Երկրորդ փուլում համայնքի ղեկավար է ընտրվում առավելագույն ձայներ ստացած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է լրացուցիչ քվեարկություն՝ քվեաթերթիկում ընդգրկելով միայն հավասար ձայներ ստացած անձանց:

Լրացուցիչ քվեարկության արդյունքով ձայների հավասարության դեպքում առավելությունը տրվում է տարիքով ավագին:

Քվեարկության երկրորդ փուլն ու լրացուցիչ քվեարկությունն անցկացվում են անմիջապես հիմնական քվեարկության արդյունքները հրապարակելուց հետո:

8. Եթե առաջադրվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրվում է համայնքի ղեկավար, եթե նրա օգտին կողմ քվեարկած ձայներն ավելի են դեմ քվեարկած ձայների թվից և ավելի են ավագանու անդամների ընդհանուր թվի 40 տոկոսից:»:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ այն հանգամանքին, թե արդյոք ՏԻՄ ընտրական համակարգի նշված փոփոխությունները ծառայել են ներկայացուցչական ժողովրդաիշխանության կառուցակարգերի զարգացմանը և թե ինչ դերակատարություն են ունեցել/կարող են ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման համակարգի կատարելագործման տեսանկյունից:

Առաջին հերթին արձանագրենք, որ ՏԻՄ ընտրությունների պարագայում էլ առաջնահերթ նշանակություն ունի այն հանգամանքը, որ տարբեր քաղաքական ուժերի կամ թեկնածուների միջև մանդատների բաշխման պատկերը պետք է համապատասխանի ընտրողների կողմից նրանց ցուցաբերվող աջակցության իրական մակարդակին: Հակառակ պարագայում անխուսափելի է ընտրությունների օրինականության ու արդյունքների լեգիտիմության միջև անհամապատասխանությունը, ինչն, իր հերթին, հանգեցնելու է ժողովրդավարական գործընթացների նկատմամբ հանրային վստահության անկման և ներկայացուցչական ժողովրդաիշխանության էության ձևախեղման: Ավելին, տեղական ինքնակառավարման մարմինների պարագայում առանցքային նշանակություն ունի նաև այնպիսի համակարգի արմատավորումը, որը կարող է երաշխավորել նշված մարմինների կողմից տեղական ինքնակառավարման սահմանադրական առաքելության պատշաճ իրականացումը՝ սեփական պատասխանատվությամբ համայնքային նշանակության հարցերը ինքնուրույն լուծելու միջոցով:

ՀՀ ընտրական օրենսդրությունում կատարված փոփոխությունների արդյունքում Հայաստանում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընդհանուր պատկերը վկայում է, որ առանձին համայնքներում ընտրությունների արդյունքների և տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման համատեքստում առաջ են եկել առանձին խնդիրներ: Օրինակ՝ Վանաձորում 2021թ. դեկտեմբերի 5-ին կայացած ՏԻՄ ընտրություններին մասնակցած 10 քաղաքական ուժերից 5-ը հաղթահարել են անցողիկ շեմը՝ «Մամիկոն Ասլանյան» դաշինքը՝ 12814 ձայն, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ 8294 ձայն, «Հայաստանի աշխատավորական սոցիալիստական» կուսակցությունը՝ 4810 ձայն, «Հայրենիք» կուսակցությունը՝ 1484 ձայն և «Ապրելու երկիր» կուսակցությունը՝ 1420 ձայն: Ավագանու մանդատները համապատասխանաբար բաշխվել են հետևյալ կերպ՝ «Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինք՝ 15 մանդատ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 9 մանդատ, «Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն»՝ 5 մանդատ, «Հայրենիք» կուսակցություն՝ 2 մանդատ, «Ապրելու երկիր» կուսակցություն՝ 2 մանդատ⁷⁵:

Նկատի ունենալով այն, որ ընտրությանը մասնակցած քաղաքական ուժերից ոչ մեկը ավագանու անդամների տեղերի 50%-ից ավելին չէր ստացել, համայնքի ղեկավարի ընտրությունը պետք է անցկացվեր քվեարկության միջոցով: Վանաձոր համայնքի նորընտիր ավագանու անդրանիկ նիստը պետք է տեղի ունենար 2021թ. դեկտեմբերի 17-ին, համայնքի ղեկավարի պաշտոնում առաջադրվելու էր դաշինքի առաջնորդ Մամիկոն Ասլանյանը: Սակայն դեկտեմբերի 15-ին Մամիկոն Ասլանյանը ձերբակալվեց, իսկ 16-ին կալանավորվեց⁷⁶:

⁷⁵ Տվյալները ներկայացված են՝ ըստ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջի (<https://www.elections.am/Elections/LocalProportional/27760>):

⁷⁶ Տե՛ս <https://www.azatutyun.am/a/31595675.html>, <https://hetq.am/hy/article/141312>:

01. 04. 2022թ. -ին «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 102-րդ հոդվածը լրացվեց հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Եթե օրենքով միավորված համայնքի ավագանու առաջին նիստն ավագանու լիազորությունները ստանձնելու պահից քսան օրվա ընթացքում չի գումարվում, կամ սույն օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով այդ ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, ապա Հայաստանի Հանրապետության վարչապետը նշանակում է համայնքի ղեկավարի պաշտոնակատար մինչև օրենքով սահմանված կարգով նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումը:»:

Արդյունքում 2022թ. մայիսին Վանաձոր համայնքում վարչապետի կողմից նշանակվեց համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

Փարաքար համայնքում 2021թ. դեկտեմբերի 5-ին անցկացված ընտրությունների արդյունքում «Ապրելու երկիր» կուսակցությունը ստացել է 4637 ձայն (10 մանդատ), «Դավիթ Մինասյան» կուսակցությունների դաշինքը՝ 2227 ձայն (5 մանդատ), իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ 2609 ձայն (6 մանդատ)⁷⁷: «Ապրելու երկիր» կուսակցությունը 10 ձայնով Վոլոդյա Գրիգորյանին ընտրել էր համայնքի ղեկավար: Դրանից հետո ավագանու մնացած 11 անդամները («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը և «Դավիթ Մինասյան» դաշինքը) 11 ձայնով համայնքապետ էին ընտրել Դավիթ Մինասյանին, ով «Դավիթ Մինասյան» դաշինքի թեկնածուն էր: Հարցի առնչությամբ առաջացած վեճի լուծման նպատակով «Դավիթ Մինասյան» դաշինքը դիմել էր դատարան՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար ընտրելու մասին» 20. 12. 2021թ. թիվ 1 որոշումն անվավեր ճանաչե-

⁷⁷ Տվյալները ներկայացված են՝ ըստ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջի (<https://www.elections.am/Elections/LocalProportional/27755>):

լու, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով: ՀՀ վարչական դատարանը նշված պահանջը բավարարել էր: Արդյունքում Փարաքարում համայնքի ղեկավար էր ընտրվել Դավիթ Մինասյանը, ով ներկայացնում է ընտրություններում փաստացի ամենաքիչ ձայները հավաքած քաղաքական ուժը: Ինչ վերաբերում է «Ապրելու երկիր» խմբակցությանը, ապա վերջինս ներկայացնող ավագանու 10 անդամները մանդատները վայր են դրել⁷⁸:

Վեդիում ևս 2021 թվականի ղեկտեմբերի 5-ին անցկացվել էին ՏԻՄ ընտրություններ: «Իմ հզոր համայնք» կուսակցության օգտին քվեարկել էր 8666 ընտրող (12 մանդատ), «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին՝ 7690 ընտրող (11 մանդատ), «Հանրապետություն» կուսակցության օգտին՝ 3299 ընտրող (4 մանդատ)⁷⁹: Ընտրություններին մասնակցած որևէ քաղաքական ուժ չէր կարողացել հավաքել ավագանու անդամների տեղերի 50%-ից ավելին: Արդյունքում, առանց մյուս քաղաքական ուժերի աջակցության, այդ ուժերից որևէ մեկը չէր կարող ընտրել համայնքի ղեկավար: Դեկտեմբերի 16-ին ավագանու «Հանրապետություն» և «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունների անդամները ինքնաբացարկ են հայտնել և հրաժարվել են մանդատներից⁸⁰: Արդյունքում կառավարությունը, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 128-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 69-րդ հոդվածներին համապատասխան, որոշեց վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու լիազորությունները և նշանակել ավագանու արտահերթ

⁷⁸ Տե՛ս <https://www.azatutyun.am/a/31647665.html>:

⁷⁹ Տվյալները ներկայացված են՝ ըստ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջի (<https://www.elections.am/Elections/LocalProportional/27773>):

⁸⁰ Տե՛ս <https://yerevan.today/all/society/100621/vedioum-aysor-tim-yntrouyounner-en>:

ընտրություններ⁸¹: Արտահերթ ընտրությունների արդյունքում արդեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացավ ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, և վերջինիս ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձն օրենքի ուժով դարձավ համայնքի ղեկավար⁸²:

Հարկ է նկատի ունենալ, որ նոր ընտրական համակարգի գործադրման քննարկվող ժամանակահատվածում տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական մասի ընտրություններն աչքի չեն ընկել նման խնդիրների առկայությամբ: Ներկայացված առանձին օրինակներն էլ նպատակ ունեն սոսկ հիմք ստեղծելու այն առանձին խնդիրների վերլուծության համար, որոնք առերևույթ առկա են հիշյալ բնագավառում: Ավելին, աշխատությունը նպատակ չունի վերլուծելու նշված իրավիճակների բոլոր մանրամասները: Հիշյալ համատեքստում հիմնական նպատակը ստեղծված իրավիճակի արդյունքում ի հայտ եկած առանցքային խնդիրների ներկայացումն ու չափանիշային լուծումների առաջադրումն է:

Կարծում ենք, որ հիմնական խնդիրը, որի մասին վկայում են ինչպես ներկայացված, այնպես էլ որոշ այլ համայնքներում ՏԻՄ ընտրությունների արդյունքները, այն է, որ թեև օրենսդրությամբ ամրագրված կարգավորումներն ինքնին պահպանվել են ընտրությունների գործընթացում, սակայն կողմնակի օբյեկտիվ դիտորդի մոտ նշված իրավիճակները կարող են այնպիսի առերևույթ տպավորություն ձևավորել, որ որոշ դեպքերում կոնկրետ ուժը քաղաքացիների շրջանում իր ունեցած իրական աջակցությունից ողջամտորեն չհիմնավորված մեծ ներկայացվածություն է ձեռք բերել ՏԻՄ մարմիններում (օրինակ՝ համայնքի ղեկավար է ընտրվել այն անձը, որին ներկայացնող քաղաքական ուժը չի ստացել քաղաքացիների մեծամասնության աջակցությունը)

⁸¹ Տե՛ս <https://www.e-gov.am/gov-decrees/item/37586/>, <https://hetq.am/hy/article/139716>:

⁸² Տե՛ս <https://www.elections.am/Elections/LocalProportional/27785>, <https://armeniasputnik.am/20220328/vedii-tim-ytrutjunnerum-haghtel-e-qpn-nakhnakan-ardjunqner-40245949.html>:

կան հակառակը՝ առավել շատ քաղաքացիների աջակցությունը վայելիղ ուժերը պատշաճ մակարդակով չեն ներկայացվել նշված մարմիններում: Իսկ դա կարող է հիմք հանդիսանալ այնպիսի իրավիճակի առաջացման, երբ ընտրությունների օրինականության և ընտրության արդյունքների լեգիտիմության միջև ձևավորվում է անջրպետ, ինչը խարխլում է ժողովրդավարական գործընթացների նկատմամբ հանրային վստահությունը:

Ուստի տվյալ պարագայում առաջ եկող հիմնական հարցադրումն այն է, թե արդյոք նշյալ ընտրական համակարգի ներդրումն ու գործարկումը արդարացված է Հայաստանյան ՏԻՄ ընտրությունների տեսանկյունից: Նշենք, որ քննարկվող ընտրական համակարգը միջազգային պրակտիկայում ընդունված և կիրառվող համակարգերից է: Միևնույն ժամանակ, ինչպես ընդգծեցինք, ընտրական համակարգի ընտրության հարցում առաջնահերթ նշանակություն ունի ոչ միայն վերջինիս տարածվածությունն ու այդ առումով առկա իրավակարգավորումների պահպանումը, այլ գործընթացի օրինականության և ընտրությունների արդյունքների լեգիտիմության հավասարակշռումը: Ավելին, կարևոր է, որպեսզի այդ գործընթացում ցուցաբերվի պատշաճ զգուշավորություն՝ խուսափելու ոչ միայն իշխող կուսակցության օգտին մանիպուլյացիաներից, այլ նույնիսկ մանիպուլյացիայի տպավորությունից⁸³:

ՏԻՄ ընտրությունների պարագայում կարևոր է նաև ընտրական համակարգի գործարկման համատեքստում կողմնակի օբյեկտիվ դիտորդի մոտ այնպիսի տպավորության ձևավորումը, որ ընտրություններն ու դրանց արդյունքները հնարավորություն են տալիս երաշխավորելու ՏԻՄ մարմինների կողմից տեղական **ինքնակառավարման սահմանադրական առաքելության** պատշաճ իրականացումը՝ **ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ** համայնքային նշանակության հարցերը լուծելու միջոցով:

⁸³ St' u CDL-AD (2016)019, Armenia – Joint Opinion on the draft electoral code as of 18 April 2016 (para. 27) // European Commission for Democracy through Law (Venice Commission), OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR), Strasbourg, Warsaw, 13 June 2016, [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2016\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2016)019-e):

Կարծում ենք, որ նշված ընտրական համակարգի միջոցով տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման արդեն իսկ առկա փորձը վկայում է, որ առանձին համայնքներում ընտրությունների արդյունքում ձևավորվել է այնպիսի իրավիճակ, որը կողմնակի օբյեկտիվ դիտորդի մոտ առերևույթ չի ձևավորում վերը նշված չափանիշներին համապատասխանող անհրաժեշտ տպավորությունը: Այդ տեսանկյունից կարևոր ենք համարում նշված չափանիշներին համապատասխան ընտրական համակարգի և վերջինիս գործարկման կատարելագործման ուղղությամբ շարունակական քայլերի ձեռնարկումը: Կարծում ենք, որ այդպիսի գործողությունների բացակայությունը կարող է լրջագույնս վտանգել ընտրությունների օրինականության և լեգիտիմության հավասարակշռությունն, արդյունքում նաև՝ ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահությունը:

Նշված ոլորտի կատարելագործմանն առնչվող ամբողջ գործընթացի շրջանակներում կարևոր ենք համարում հետևյալ սկզբունքների, արժեքների ու չափանիշների պահպանումը.

✓ Առանցքային նշանակություն ունի ՏԻՄ ընտրությունների համատեքստում այնպիսի ընտրական համակարգի ներդրումն ու կատարելագործումը, որը կարող է երաշխավորել ընտրությունների օրինականության և արդյունքների լեգիտիմության միջև պատշաճ հավասարակշռություն այն տեսանկյունից, որ տեղական ինքնակառավարման մարմիններում տարբեր ուժերի միջև տեղերի բաշխման պատկերը համարժեք լինի ընտրողների շրջանում նրանց վայելած իրական աջակցությանը: Հակառակ պարագայում անխուսափելի է ներկայացուցչական ժողովրդաիշխանության էության ձևախեղումն ու ընտրությունների նկատմամբ հանրային վստահության մակարդակի ընդհանուր անկումը:

✓ Կարծում ենք, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպումը բացառապես «փակ ցուցակների» միջոցով համամասնական ընտրակարգի հիման վրա չի համապատասխանում աշխատանքի շրջանակներում ներկայացված գաղափարների հիմքում ընկած տրամաբանությանը: Մինևույն ժամանակ, կուսակցական համակարգի կայաց-

ման տեսանկյունից համամասնական ընտրական համակարգի առկայությունն ու էական դերակատարությունը պատշաճ մեթոդաբանությամբ իրացվելու պայմաններում կարող են դրական հետևանքների հանգեցնել: Ուստի, կարծում ենք, որ եթե պահպանվի ՏԻՄ մարմինների կազմավորման նպատակով կիրառվող համամասնական ընտրական համակարգը, ապա այդ համատեքստում պետք է բացառվեն «փակ ընտրական ցուցակները» և ընտրողները պետք է վճռորոշ ազդեցություն ունենան նախընտրած թեկնածուների ընտրության հարցում:

✓ Չափազանց կարևոր է ընտրական այնպիսի կանոնների ամրագրումը, որոնք կարող են նպաստել կուսակցությունների խոշորացմանն ու կուսակցական համակարգի կայացմանը՝ միևնույն ժամանակ չհանգեցնելով քաղաքական բազմազանության իսպառ վերացման: Այդ տեսանկյունից առանցքային է, օրինակ՝ ընտրվելու համար անհրաժեշտ այնպիսի ընտրական շեմի նախատեսումը, որը կարող է երաշխավորել արդարացի ներկայացվածության և ՏԻՄ մարմինների կայունության միջև պատշաճ հավասարակշռություն: Ընդ որում՝ այդ հարցի առնչությամբ որոշում կայացնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ պետությունում առկա քաղաքական և ինստիտուցիոնալ ամբողջ համատեքստը: Այդ առումով ՀՀ ընտրական օրենսգրքի 141 հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ ավագանու անդամների մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անձշտությունների թվի գումարի՝ կուսակցության դեպքում՝ 4, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 6 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ:

✓ Նշված բոլոր փոփոխությունները կատարելիս և մոդելների միջև ընտրություն կատարելիս պետք է նկատի ունենալ կուսակցական համակարգի կայունության երաշխավորման և ժողովրդավարացման համար անհրաժեշտ կառուցակարգերի ներդրմանն ու շարունակական զարգացման բացառիկ դերակատարությունը: Ավելին, հարկ է նկատի ունենալ, որ առանց նշյալ

կառուցակարգերի գործադրման ընտրական համակարգի որևէ փոփոխություն չի ծառայելու իր հիմնական նպատակին:

✓ ՏԻՄ ընտրական համակարգի ընտրությունը/փոփոխությունը պետք է լինի քաղաքական ուժերի և հանրության միջև լայն փոխհամաձայնության (կոնսենսուսի) արդյունք: Ավելին, կոնկրետ ընտրական համակարգի ընտրության գործընթացում անհրաժեշտ է բացառել այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ այդ համակարգը վեր է ածվում սոսկ իշխող քաղաքական ուժի շարունակական վերարտադրության և տեղերում մեծամասնություն ձեռք բերելու մեխանիզմի:

✓ ՏԻՄ ընտրությունների պարագայում կարևոր է ընտրական համակարգի գործարկման համատեքստում կողմնակի օբյեկտիվ դիտորդի մոտ այնպիսի տպավորության ձևավորումը, որ ընտրություններն ու դրանց արդյունքները հնարավորություն են տալիս երաշխավորելու ՏԻՄ մարմինների կողմից տեղական **ինքնակառավարման** սահմանադրական առաքելության պատշաճ իրականացումը՝ **ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ** համայնքային նշանակության հարցերը լուծելու միջոցով:

✓ Ցանկացած համակարգային փոփոխություն, այդ թվում ընտրական համակարգի փոփոխություններ կատարելուց առաջ/դրա ընթացքում անհրաժեշտ է պատշաճ մեթոդաբանությամբ նախապատրաստել, իրազեկել հանրությանը, վերապատրաստել համապատասխան գործընթացների տեսանկյունից պատասխանատու սուբյեկտներին:

ԳԼՈՒԽ 3. ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԵՆՍԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

§ 1. Քաղաքական համակարգի գործնական խնդիրները արդի ժողովրդաիշխանության և ընտրական համակարգի իրացման գործընթացներում

Դիտարկման հարացույց և մեթոդ

Ցանկացած համակարգ կամ կառուցվածք (այդ թվում՝ սոցիալ-քաղաքական) դիտարկելիս և ուսումնասիրելիս մենք խնդիր ենք ունենում դրա օրինաչափությունների բացահայտման և խորքային խնդիրների որոշակիացման հետ, ինչը հանգեցնում է մեծաքանակ գործող եզրահանգումների դրա կայուն (ստատիկ) վիճակի վերաբերյալ և նույնչափ անորոշությունների, երբ փորձում ենք հասկանալ շարժընթացի (դինամիկայի) հնարավոր օրինաչափություններն ու խորքային խնդիրները:

Խնդիրն էլ ավելի է բարդանում, երբ համակարգի թե՛ դրսում, թե՛ ներսում զարգացումներն ընթանում են բարդության, համալիրության կանոններով և պարբերաբար արագացումներով:

XX դարի վերջի և XXI դարի սկզբի սոցիալ-քաղաքական, պետաիրավական, աշխարհաքաղաքական, բարոյահոգեբանական, արժեքանական և այլ սոցիալ-հոգեբանական համակարգերն ու կառուցվածքներն այլևս չեն զարգանում այն օրինաչափություններով, որ ունակ էին բացահայտել «դասական» և նույնիսկ «ոչ-դասական» գիտությունները միայն այն պատճառով, որ այդ գիտությունները հետազոտողին չէին տալիս մեթոդաբանական այն գործիքակազմը, որով հնարավոր կլիներ ուսումնասիրել գերփոխկապված, գերարագ փոխգործակցող գործոնների համալիրությունը, ինչը հանգեցնում է անկանխատեսելի փոփոխությունների և արագությունների կտրուկ աճի և հետևաբար՝ անորոշության քանակի ավելացման մարդու, հանրության, պետության, քաղաքականության հետ կապված հարաբերություններում:

Այլ կերպ ասած՝ ոչ համապատասխան գիտական մեթոդի ու

հարացույցի օգտագործման պարագայում դիտարկողի առջև բացվում է քառասյին զարգացումների պատկեր, որտեղ արտաքուստ վերանում են բոլոր օրինաչափությունները: Մինչդեռ էպիստեմալոգիայի (գիտաբանության) ընդերքում զարգացող «հետ-ոչ-դասական»⁸⁴ գիտության աչքերով նայելու պարագայում (օրինակ՝ համալիր համակարգերի տեսություն կամ սիներգետիկա) ամեն կառուցվածքային համալիրություն չէ, որ հեռանում է օրինաչափություններից: Կան նաև դեպի ավելի խորքային օրինաչափություններ ձևավորող կառուցվածքներ:

Այս բնագավառում, իհարկե, բոլոր հետազոտողները չեն, որ միակարծիք են սիներգետիկ մեթոդաբանության կիրառման նպատակահարմարության հետ, սակայն պետք է փաստել, որ արդի պետականագիտական և իրավագիտական շատ խնդիրներ դեռևս չեն ստանում գիտական հիմնավորված լուծումները: Դրա պատճառներից մեկը, կարծում ենք, դրանց հետազոտումն է դասական մեթոդներով, որոնք, իհարկե, անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար համալիր էություն ունեցող երևույթներն օբյեկտիվ հետազոտելու համար⁸⁵:

Սիներգետիկայի ճանաչողական մոտեցումների կիրառման նշանակությունն իրավաբանական գիտությունում ընդգծվում է իրավական ճանաչողության ճգնաժամի մեթոդաբանական լուծմամբ՝ հիմք ընդունելով մի քանի մոտեցումների սինթեզը: Իսկ սիներգետիկան, որ արևմտյան դոկտրինում ավելի շատ հայտնի է համալիրության տեսություն անվանմամբ, «սահմանում է իրավական տեսության այդ նոր հարացույցի համար անալոգիական

⁸⁴ Գիտությունների այսկերպ դասակարգման վերաբերյալ ավելի մանրամասն Տե՛ս՝ Моисеева И. Ю., Концепция самоорганизации в контексте постнеклассической парадигмы, Оренбургский государственный университет, Вестник, ОГУ, 11, 2005, էջ 83:

⁸⁵ Մանրամասն տե՛ս՝ Սիմոնյան Տ., Իրավունքի սիներգետիկայի հայեցակարգի զարգացման պատմաիրավական նախադրյալները, 2013 | Հոդված, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Շահեն Նիկոլայի Պետրոսյանի ծննդյան 100-ամյակին, ԵՊՀ հրատակչություն, Երևան, 2013, էջ 303-318:

հիմք»⁸⁶:

Ճշմարիտ է, որ սոցիալական, քաղաքական և «իրավական օրյեկտներն այսուհետ չեն կարող ուսումնասիրվել այլ գիտություններից, հասարակական զարգացումից մեկուսացված վիճակում»⁸⁷: Եվ ինչպես իրավագիտորեն նշում է Վենգերովը. «պետության և իրավունքի տեսությունը աստիճանաբար ներքաշել է նաև ինքնակամ, ինքնակազմակերպվող և պատահական գործընթացներ վերաբերյալ ձևավորող նոր գիտությունից՝ սիներգետիկայից եկող մեթոդաբանությունը: Այս մեթոդաբանական գաղափարները թույլ են տալիս ավելի լավ հասկանալ պետաիրավական ոլորտում, հատկապես՝ տեղական ինքնակառավարման մեջ դեմոկրատական սկզբունքների զարգացման մեջ և գործադիր իշխանության կառուցվածքում ինքնակառավարման և կառավարման գործընթացները: Հասարակական զարգացման մեջ պատահականության կառուցողական դերի նոր տվյալները առավել խորն են բացատրում հասարակության պետաիրավական կյանքում սուբյեկտիվ գործոնը, թույլ են տալիս պատճառ-հետևանքային կապերի հետ մեկտեղ հաշվի առնել նաև պատահական և հնարավոր կապերը»⁸⁸:

Մեթոդաբանական բազմակարծության պայմաններում այս նոր մեթոդաբանական մշակումները կարող են դիտարկվել որպես հիմնական, անկյունային ուղեմիջներ միջառարկայական երկխոսության համար:

Մյուս կողմից այս ոլորտում կարելի է նկատել նաև մեկ այլ կարևոր առաջընթաց քայլ: Այս հայեցակարգն՝ իր մեթոդաբանությամբ կարողանում է տեսանելի դարձնել ինքնակազմակերպվող համակարգում, այդ թվում՝ հասարակական ու քաղաքական համակարգում, մարդու դերը, ով, լինելով համալիր համակարգի

⁸⁶ St' u Ruhl. J. B., Complexity theory as a paradigm for the dynamical law-and-society system: A wake-up call for legal reductionism and the modern administrative state, Duke Law Journal, volume 45, 1996a, 849-928, էջ 906:

⁸⁷ St' u Керимов Д. А., Методология права, Предмет, Функции, Проблемы, Философии Права, Москва 2008, էջ 244:

⁸⁸ St' u Теория государства и права. Ч. 1. Теория государства/ Под ред. А. Б. Венгерова, Москва, 1996, էջ 18:

բաղկացուցիչ մասը և հնարավորություն ունենալով էմպիրիկ փորձը համատեղել տեսական վերլուծության արդյունքների հետ, կարող է անմիջականորեն ազդել այդ համակարգի, ինչպես նաև այդ համակարգից սնուցվող այլ համակարգերի զարգացումների և հնարավոր ճյուղավորումների (քիֆուրկացիաների)՝ անձնական, հասարակական, քաղաքական և այլ ընտրությունների վրա, քանի որ «սուբյեկտը ինքնակազմակերպվող իրականության որակապես որոշակիացված միջոցն է»⁸⁹:

Ընդհանրացնելով այս մեթոդաբանության կամ հայեցակարգի ամփոփ նկարագիրը՝ կարելի է նշել, որ այն բացում է պետաիրավական, սոցիալ-քաղաքական հետազոտությունների նոր հարացույց: Օնթոլոգիական (կեցութաբանական) իմաստով այն կարևոր և անհրաժեշտ է սոցիալ-իրավական «արտադրության» հիմքում ընկած նյութական գործընթացները ընդգծելու կամ ընդհանրապես՝ գիտակցելու համար, քանի որ այն թույլ է տալիս հասկանալ հավասարակշռությունից հեռու գտնվող ոչ գծային, դինամիկ համակարգերի ներքին և արտաքին համալիր գործընթացները և ձևավորվող երևույթի ձևավորման ու վարքագծի պատկերը և էությունը, ինչպիսի երևույթ էլ այն լինի՝ հասարակություն կամ հասարակական առանձին երևույթ. օրինակ՝ իրավունք կամ պետություն, քաղաքականություն կամ սոցիալական շարժընթաց, քաղաքական համակարգ կամ ընտրական համակարգ:

Էմպիրիկ իմաստով այն կարևոր է՝ ձևավորման հայեցակարգի, ինքնակազմակերպման և բարդ հարմարվողական համալիրների համար, որոնք կարող են օգտագործվել էմպիրիկ հետազոտության, համալիր տվյալների ամբողջության ուսումնասիրման և սոցիալ-իրավական բարեփոխումների ու ոլորտում նորարարությունների համար, իսկ էպիստեմոլոգիական կամ գիտաբանության իմաստով՝ իրավունքի տեսքը, պատկերը խնդրո առարկա դարձնելու, իրավականության գաղափարի ընդարձակման և նոր իրա-

⁸⁹ Ст'у Аршинов В. И., Синергетика времени // Синергетика времени, Москва, Репроникс, 2007, էջ 16:

վականության ձևավորման համար՝ մեր գիտական մտքում կառուցելով նոր մակարդակի մտածողություն: Սակայն այստեղ կարևորն այն է, որ *«կիզակետը ոչ այնքան հետազոտության ներքո գտնվող խնդրի համար փաստացի լուծումների հայտնաբերումն է, այլ դրա ակտիվությունը կամ գործունեության խնդրայնությունը և դրա խնդրահարույց տարածությունը հետազոտելն է»*⁹⁰:

Երբ մեթոդաբանական ավելի լայն գործիքակազմի օգնությամբ հետազոտական հայացքն ավելի լայն է լինում, ակնհայտ է դառնում, որ արդի քաղաքական համակարգն՝ իր իրացման գործընթացում, ավելացնում է հարցերի քանակը, որոնք չեն կարողանում արդյունավետորեն սպասարկել ժողովրդախիշխանության ժամանակակից թե՛ պահանջները և թե՛ կերպափոխումները: Արդյունքում խորանում է ժողովրդախիշխանության նկատմամբ անվստահությունն ու նիհիլիզմը:

Կարծում ենք՝ պատճառն այդքան էլ բարդ չէ: Գործող քաղաքական համակարգերն ավելի դանդաղ են զարգանում, քան այն միջավայրն ու սոցիալական կարիքները, որոնց սպասարկմանն այն պիտի ծառայեր: Ջարգացման արագությունների տարբերությունը հանգեցնում է ոչ միայն համակեցության կազմակերպման խնդիրների ավելացման, այլ նաև հիասթափեցման այդ նույն վարչաձևից, որով «աշխատում» է մարդկանց համակեցությունը: Եվ պատճառներ փնտրելու ու դրանց լուծմանն ուղղված քայլեր իրականացնելու փոխարեն, մենք նորից զբաղվում ենք հետևանքների վերացման, իսկ ավելի ճիշտ՝ հետևանքների կոսմետիկ փոփոխությունների կազմակերպման ինքնահամոզմամբ ու ինքնախաբեությամբ: Միգուցե, որովհետև այդպես ավելի հեշտ է, և քիչ ջանք է պահանջվում:

Այնուամենայնիվ, քաղաքական համակարգի առկա խնդիրներն ախտորոշելու համար մենք չենք խորշի բարդությունից և կփորձենք ավելի խորքային ախտորոշումներ անել, որպեսզի առաջարկվող լուծումներն արդյունավետ լինեն:

⁹⁰ Տե՛ս Jamie Murray, *Complexity Theory & Socio-Legal Studies*, Liverpool Law Rev (2008) 29:227–246, էջ 237:

Խորքային և համալիր ախտորոշումը շատ կարևոր է, քանի որ «ակնհայտ է, որ ժամանակակից հասարակությունները տարբերվում են մեր գրքերում գրված սոցիալական համակարգերի դասական հայեցակարգերից միայն մեկ յուրահատուկ առանձնահատկությամբ: Աշխարհում նարդկանց մեծ մասն ապրում է բաց հասարակություններում, որտեղ ազատ տեղեկատվության հոսքը ձևավորում է փոխկապվածության և փոխկախվածության ցանց: Փոփոխության ընթացքը արագացում է ապրում ընդհանուր փոխգործակցող կառուցվածքների ներքո տարբեր միջավայրերում գործող տարբեր գործոնների սիներգիայով: Հավաքելով ժամանակակից հասարակությունների մեծ նկարի բոլոր տարրերը՝ մենք դիտարկում ենք տարբեր սոցիալական կառուցվածքներ ու համակարգեր, որոնք ազդեցություն են գործում միմյանց վրա և գործում են սոցիալական կարգի և սոցիալական քառսի սահմանում այնքան ժամանակ, քանի դեռ չեն գտնում հարաբերական կայունություն ընտրությունների և շահերի հավասարակշռությունում»⁹¹:

Այս աճող անորոշության միջավայրում և խորքային համալիրությունում հարաբերական ճշտությամբ ախտորոշում իրականացնելու համար անհրաժեշտ է որոշակիացնել, թե ինչ գործնական խնդիրներ են առաջացել, առաջանում կամ հնարավոր է առաջանան քաղաքական համակարգում ժամանակակից ժողովրդաիշխանության և ընտրական համակարգի իրացման գործընթացներում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալական միջավայրի ու աշխարհաքաղաքական փոփոխությունները՝ զուգորդված տեխնոլոգիական փոփոխություններով, ավելի են բարդացնում օրինաչափությունների դուրսբերման հնարավորությունները:

Ուստի մեր քաղաքական համակարգի ու ժողովրդաիշխանության կենսագործման հետագա ուսումնասիրությունն ու հետա-

⁹¹ Տե՛ս Manasyan A., Simonyan T., Legal Symbolism and Constitutional Policy in Contemporary Reality of Changes, Studia Politologiczne (Political Science Studies), published by the Institute of Political Science of Warsaw University, Warsaw, 2021, Vol, 61, էջեր 152-185, էջ 161:

գոտությունը փորձել ենք իրականացնել հենց այս հարացույցով և դրանից բխող մեթոդաբանությամբ՝ նպատակ ունենալով առավել խորքային խնդիրներ ու օրինաչափություններ բացահայտել անկայուն և արագ փոփոխվող սոցիալական միջավայրերում, քանի որ դասական մեթոդաբանության կիրառման պարագայում դրանք կա՛մ չեն նկատվում, կա՛մ այլ բնութագրական հատկանիշներ են ստանում, ինչի արդյունքում խնդիրների ախտորոշումը սխալ ճանապարհով է գնում:

Էական ազդեցություն ունեցող գործոն-խնդիրներ

Այստեղ կօգտագործենք տեսամեթոդական նորագույն դիտարկման հնարավորությունները, սակայն չենք կենտրոնանա տեսական խնդիրների, այլ բացառապես գործնականում իրացվող և քաղաքական կյանքում նկատելի խնդիրների վրա, որոնք՝ անկախ իրենց փոքր կամ մեծ լինելու հանգամանքից, ունեն ամբողջ համակարգի վրա ազդեցություն գործելու ներուժ ու հնարավորություն:

Փորձենք որոշակիացնել նման գործնական խնդիրներից մի քանիսը, որոնք նկատելի են ոչ միայն զարգացող կամ ոչ հասուն ժողովրդավարություններում, օրինակ՝ Հայաստանում, արևելաեվրոպական, մերձավորարևելյան, ասիական, այլ նաև արդեն դրսևորվում են որոշակի առումներով արևմտաեվրոպական ու հյուսիսամերիկյան քաղաքական համակարգերում:

Իհարկե, հնարավոր է, որ առանձին պետություններում որոշ խնդիրներ առավել ակնառու լինեն, քան մյուսները, կամ առանձին խնդիրներ ընդհանրապես զգալի ազդեցություն չունենան կոնկրետ պետության քաղաքական համակարգի շարժընթացի վրա: Այնուամենայնիվ, ներքոնշյալ խնդիրների ընտրությունը պայմանավորված է բացառապես գործնականում առավելապես հանդիպող փոքր կամ մեծ քաղաքական ձգնաժամերով, որոնք մի կողմից օգնում են, որ քաղաքական համակարգի թերություններն ի հայտ գան, մյուս կողմից էլ կանխում են քաղաքական համակարգի հետագա զարգացումը, կամ առնվազն դրա համապա-

տասխանեցումը նրան, ինչ-որ սահմանադրական ու օրենսդրական մակարդակում այդ պետություններն ամրագրել են:

Ներկայացված խնդիրներից յուրաքանչյուրն առանձին համալիր ու խորը միջառարկայական հետազոտության թեմաներ են, սակայն այստեղ կներկայացնենք դրանք՝ որպես քաղաքական համակարգի վրա էական ազդեցություն ունեցող առանձին խնդիրներ՝ առանց խորանալու դրանց յուրահատկությունների բազմազանության մեջ:

Քաղաքական կուսակցությունների ձգնաժամ

Դեռևս նախորդ դարի կեսերին կուսակցություններն ու ժողովրդավարությունը միմյանց հետ անքակտելի միասնության մեջ էին դիտարկվում: Եվ դա տրամաբանական էր, քանի որ սոցիալ-քաղաքական կյանքն այն արագացումները չէր ունենում, ինչը որ կա այսօր: Անգամ համարվում էր, որ «*քաղաքական կուսակցությունները ստեղծել են ժողովրդավարությունը, իսկ ժամանակակից ժողովրդավարությունը աներևակայելի է առանց քաղաքական կուսակցությունների*»⁹²:

Պարադոքսալ է, որ կուսակցությունները, համարվելով ներկայացուցչական ժողովրդավարության հիմնական ինստիտուտները, ընկալվում են նաև որպես աստիճանաբար ավելի անկարող իրականացնելու այն գործառույթները, որոնք էական են ժողովրդավարության առողջ գործունեության համար: Այս երկու դրույթների միջև թվացյալ անհամատեղելիությունը և միաժամանակյա պնդումն առ այն, որ չնայած կուսակցությունները ներկայացուցչական ժողովրդավարության համար անհրաժեշտ ինստիտուտներ են, բայց ոչ արդյունավետ են կատարում իրենց ներկայացուցչական գործառույթները, վկայում են ժամանակակից ժողովրդավարության մեջ կուսակցությունների փոփոխվող դերի և հենց քաղաքական կուսակցությունների մասին պատկերացումների

⁹² St' u Schattschneider E.E., *Party Government*. New York: Holt, Rinehart and Winston, 1942, էջ 1:

փոփոխության մասին⁹³:

Այն, որ ընտրական գործընթացների հիմնական խաղացող կուսակցությունները թե՛ հասուն և թե՛ ոչ հասուն ժողովրդավարական համակարգերում գտնվում են ճգնաժամի մեջ, ակնհայտ է: Կուսակցական գաղափարախոսությունները չեն կարողանում մնալ կայուն զուտ նաև այն փաստի ուժով, որ մեկ միասնական քաղաքական գաղափարախոսություն չի կարողանում արդյունավետ լինել լուծումներ առաջարկելու առումով գերարագ փոփոխվող սոցիալական միջավայրում, որտեղ քաղաքական անկայունությունը դառնում է սովորական երևույթ, իսկ որոշումների կայացման աղբյուրը դառնում է ոչ թե *բոլոր ժամանակներում բացարձակ ճշմարտություն արտահայտող* գաղափարախոսությունը (լիբերալիզմ, պահպանողականություն, սոցիալիզմ, կոմունիզմ, անարխիզմ, նացիոնալիզմ և այլն), այլ ձկուն և գերադասարժեք քաղաքական նպատակահարմարությունը, որը, սակայն, պետք է խարսխված լինի ռազմավարական նշանակության քաղաքական սեփական առանցքի կամ ուղեծրի հետ, եթե, իհարկե, չի որդեգրում քաղաքական գործընթացներին տրվելու ինտերցիան՝ որպես գործունեության հիմնական կանոն:

Բնականաբար, կուսակցությունները, որոնք դանդաղ շարժվող և գաղափարներ դանդաղ գեներացնող կառույցներ են, մեծամասամբ չեն կարողանում ժամանակին և արդյունավետ արձագանքել կատարվող քաղաքական արագ փոփոխություններին: Այս ամենը հանգեցնում է նրան, կուսակցությունները կա՛մ կաղապարվում են *այժմ չգործող, բայց պատմական արդյունավետության կնիքը ստացած* գաղափարների շուրջ, կա՛մ նախընտրում են դառնալ գաղափարախոսություն ու առանցք չունեցող անկայուն համակարգ (առանց «իզմերի» կուսակցություններ), ինչ էլ տանում է նրան, որ «*հասարակության վստահությունը կուսակցական քաղաքականության նկատմամբ նվազում է, իսկ ընտրությունների աճող անկայունության հետևանքով ընտրությունների արդ-*

⁹³ St' u Ingrid van Biezen, *How Political Parties Shape Democracy*, UC Irvine: Center for the Study of Democracy. 2004, <https://escholarship.org/uc/item/17p1m0dx>

յունքները դառնում են անկանխատեսելի, ինչը թուլացնում է քաղաքական կարիերայի գրավչությունը»⁹⁴:

Քաղաքական համակարգի առանցքային կառույց կուսակցություններն իրենց ոչ հրապուրիչ լինելու պատճառով ստիպված ձևական-նորմատիվ կարգավորումներով են «սեփականաշնորհում» քաղաքականությունը՝ օրենսդրական մակարդակով քաղաքականությամբ զբաղվելը դարձնում միայն կուսակցությունների մենաշնորհը: Նման կերպ շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, աստիճանաբար սահմանափակվեց անկախ քաղաքական գործիչների մուտքն ակտիվ քաղաքականություն և հնարավոր դարձավ միայն կուսակցական խողովակների միջոցով:

Օրինակ՝ ընտրակարգերից աստիճանաբար հանվեց մեծամասնական ընտրակարգն ու թողնվեց միայն համամասնականը սկզբից սահմանադրական փոփոխությունների միջոցով վերացնելով մեծամասնական ընտրակարգը (2015), իսկ հետագայում արդեն Ընտրական օրենսգրքից ընդհանրապես հանելով մեծամասնական ընտրակարգերի վերջին մնացորդ համարվող՝ վարկանիշային ընտրակարգը⁹⁵:

Սակայն սա արհեստական խոչընդոտ լինելով հանդերձ, կարծում ենք՝ վնասել ու վնասելու է հենց կուսակցական համակարգերին ու կուսակցաշինությանը, որովհետև այսկերպ այն գաղափարական կառույցից վերածվում է քաղաքական ամբիցիաների կենսագործման ձևական, ժամանակավոր կառույցի, որը զրկվում է կայունության հատկանիշից և դառնում քաղաքական համակարգի գերարագ փոփոխվող գործընթացների կազմակերպման ու ուղղորդման հերթական հետևանքը և ոչ թե պատճառը:

Լյսիմքն՝ կուսակցությունը, գիջելով հանրությանն ու պետութ-

⁹⁴ St' u Tillie J.N., *Challenges to democratic representation*, Course on Political Sciences, Amsterdam Institute for Social Science Research (AISSR):

⁹⁵ Այս ընտրակարգով հնարավորություն էր տրվում առանձին քաղաքական գործիչներին, լինելով որևէ կուսակցության նախընտրական ցուցակում, անձամբ ընտրվել քաղաքացիներից, այլ ոչ թե անցնել խորհրդարան որպես կուսակցության ցուցակում գտնվող քաղաքական գործիչ:

լանը քաղաքական նպատակ, ուղեծիր և մարտավարական ճանապարհ տալու իր առաքելությունը, սոցիալական արագ փոփոխությունների մամլիչի տակ չմնալու համար դառնում է արհեստական, հարմարվողական կառույց՝ իր տակ քաղաքական համակարգը ձևափոխելու միջոցով (եթե իշխանություն է ձեռք բերում) սեփական գոյությունը պահպանելու համար՝ ի հաշիվ քաղաքական գաղափարախոսության, որի զարգացման ու առաջխաղացման համար ձևավորվել էր:

Ազգային պետությունների ինքնիշխանության թուլացում

Քաղաքական համակարգի վրա էական ազդեցություն ունեննակ արտաքին գործոնները, որոնք ոչ պակաս արագությամբ են ձևավորվում ու ազդում ներքին գործընթացների վրա: Ժամանակակից գլոբալացող աշխարհում պետությունները հիմնականում կամավոր ներգրավվում են միջազգային ինտեգրացիոն կառույցներում՝ ի դեմս տարածաշրջանային և համընդհանուր միջազգային կազմակերպությունների, ինչի արդյունքում սեփական ինքնիշխանությունից փոխանցում են այդ վերաբերական կազմակերպություններին:

Գլոբալիզացիան առանց համալիրության տեսության հարաբերակցի անհասկանալի գործընթացների պատկեր կլիներ: Դրա համար այն պետք է դիտարկել հենց փոխկախվածության կառուցակարգերի համատեքստում, որովհետև այն ոչ այլ ինչ է, քան «*աշխարհում տեղի ունեցող երևույթների միջև փոխկապվածությունների աճ*»⁹⁶, որի «*միտումը նախ և առաջ իր բնույթով ակնհայտորեն տնտեսական է*»⁹⁷:

Եթե այս իրավիճակը նոր չէ, ապա այսօր միջազգային տնտեսական համագործակցության բնագավառում ինտեգրացիոն գործընթացներն այնքան են խորացել և խորանում, որ

⁹⁶ Տե՛ս David Goldman, *Historical Aspects of Globalization and Law*, in Catherine Dauvergne (ed), *Juresprudence for an Interconnected Globe*, Aldershot, Ashgate, 2003, էջ 43:

⁹⁷ Տե՛ս Jean-Bernard Auby, *Globalization, Law and the State*, Oxford and Portland, Oregon, 2017, էջ 2:

տնտեսական գլոբալիզացիան էականորեն սկսել է սահմանափակել ազգային պետությունների՝ տնտեսական գործընթացներին միջամտելու հնարավորությունները (Առևտրի համաշխարհային կազմակերպություն, Եվրոպական միություն, Եվրասիական տնտեսական միություն և այլն): Եվ եթե մի քանի տասնամյակ առաջ սոցիալ-տնտեսական և ֆիսկալ քաղաքականությունն ավանդաբար համարվում էր ներքին քաղաքականության մշակման կարևոր ոլորտներից մեկը, ապա այսօր ազգային պետություններն աստիճանաբար կորցնում են այդ գործընթացների վրա էականորեն ազդելու հնարավորությունները՝ դրանց լծակները պարտադիր-կամավորության սկզբունքով զիջելով վերպետական կառույցներին:

Սրա օրինակը ոչ միայն միջազգային քաղաքական կազմակերպությունների որոշումների կատարման պարտադրանքն է ներպետական մակարդակում (Եվրոպական միության հանձնաժողով, Եվրասիական տնտեսական միության հանձնաժողով, Առևտրի համաշխարհային կազմակերպության Գլխավոր խորհուրդ և այլն), այլ նաև միջազգային դատական մարմինների որոշումների կատարման անխուսափելիությունը (Եվրոպական միության Արդարադատության դատարան, Եվրասիական տնտեսական միության դատարան, Առևտրի համաշխարհային կազմակերպության վեճերը լուծող մարմիններ և այլն):

Այս ամենին զուգահեռ այսօր ունենք իրավիճակ, երբ տնտեսական զարգացումները և սոցիալական քաղաքականությունը էականորեն ազդում են ընտրության արդյունքների վրա:

Ստացվում է, որ ընտրության արդյունքներն էականորեն պայմանավորվում են այնպիսի գործոններով, որոնց վրա քաղաքական իշխանությանն ազդեցությունն էականորեն նվազում է՝ հաշվի առնելով միջազգային ֆինանսատնտեսական ինտեգրացիոն գործընթացները: Սակայն ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերը հաղթանակի համար հանրության առջև նորից խոսում են այդ քաղաքականության վրա ազդելու իրենց հաստատակամության մասին: Գալով իշխանության՝ մեծամասամբ անում են այն, ինչ-որ նախորդ քաղաքական իշխանութ-

յունն է արել՝ ոչ էական տարբերություններով: Բնականաբար, մնում է մեղավորների փնտրելու գործընթաց, ասել է թե՛ քաղաքական արդարացումները պոպուլիզմի գործիքակազմի միջոցով, ինչը տանում է քաղաքականության նկատմամբ հանրային նիհիլիզմի աճին և շատ դեպքերում՝ պոպուլիզմի առաջնայնությանը:

Այսպիսով, զնալով աճում է այնպիսի արտաքին գործոնների ազդեցությունը ընտրության արդյունքների վրա, որոնք աստիճանաբար դուրս են գալիս ընտրության արդյունքների համար պայքարող ուժերի ազդեցությունից՝ նվազեցնելով այդ ուժերի դերն ու նշանակությունը: Մինչդեռ վերջիններս ավելի բարձր են սկսում խոսել այդ ամենի վրա իրենց արմատական ազդեցության վերաբերյալ:

Միգրացիոն հոսքեր

Գլոբալիզացիայի հետևանքների մեկը նաև միգրացիոն հոսքերի ավելացումն ու արագացումն է:

Ինչո՞ւ է միգրացիոն հոսքերը խնդիր ժողովրդափշխանության համար: Խնդիր է նախ այն պատճառով, որ զուտ պետություն լինելու համար անհրաժեշտ է մշտական բնակչություն⁹⁸, որը ինչ-որ առումով պետք է լինի կայուն բնակչություն, այսինքն՝ մարդկանց խումբ, ովքեր իրենց ներկան և ապագան, երբեմն՝ նաև անցյալը, կապում են տվյալ պետության և հանրության հետ, այլ ոչ թե այդտեղ գտնվում են ժամանակավորապես:

Նաև հիմնական խնդիրը հանգում է հենց «ժողովուրդ»՝ *demos*, երևույթին: Մարդկանց ազատ ու արագացող տեղաշարժերը, մեկ համայնքում, մեկ հասարակությունում մշտապես չհարելու փաստը, որն առաջանում է պատերազմների ու սոցիալ-տնտեսական ճգնաժամերի, քաղաքական հուզումների և այլ պատճառներով հանգեցնում է մի հիմնական խնդրի: Սոցիալ-հոգեբանական համատեքստում հասարակությունն ու «ժողովուրդն»՝ ինքը, կայուն համակարգ չեն մնում, որպեսզի աշխատեցնեն ժո-

⁹⁸ Պետությունների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ Մոնտեվիդեոյի 1933թ-ի կոնվենցիա, հոդված 1:

ղովրդախիշխանության կառուցակարգերը:

Քաղաքական համակարգի կարևոր տարրերից է նաև «քաղաքական համայնքի»⁹⁹ առկայությունը: Սակայն եթե այդ demostր առկա չէ տվյալ պետության մեջ ապրող մարդկանց սրտում և հոգում, ապա ժողովրդավարությունն՝ ինքնին, դառնում է խնդրահարույց:

Դրանք ևս հարատև, բայց արագացող կերպափոխման մեջ են գտնվում, ինչը կրկին հանգեցնում է մի կողմից նիհիլիզմի, որովհետև կոնկրետ հասարակության հետ ապագայի ծրագրեր քիչ են կապվում, մյուս կողմից քաղաքականության կենցաղայնացմանը:

Այլ կերպ ասած՝ ժողովրդախիշխանության արդյունավետ և կայուն կենսագործման համար գնալով խնդրահարույց է դառնում՝ թե ով է «ժողովուրդ» կոչվածը, որը կարող է և պետք է իշխանություն իրականացնի:

Քաղաքականության կենցաղայնացումը

Տեղեկատվական տեխնոլոգիաների, սոցիալական ցանցերի ազդեցության աճին զուգահեռ քաղաքականության պոպուլիարիզացիա է տեղի ունենում, ինչն ազդում է քաղաքացիների քննադատական տրամադրությունների աճին և երբեմն ավելի բարձրաձայն ու անթաքույց դրսևորմանը:

Ընդհանուր առմամբ, քաղաքացիների հետաքրքրության աճը քաղաքականության նկատմամբ դրական երևույթ է, սակայն, երբ այն դրսևորվում է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված սոցիալական ցանցերի ներգրավման պայմաններում, քննադատությունը վերածվում է ոչ այնքան կառուցողական կամ օբյեկտիվ քննադատության, որի արդյունքում զատվում են քաղաքական դերակատարների լավ ու վատ հատկությունները, դրական ու բացասական դրակները, այլ մեկ այլ միտում է զարգանում:

Սոցիալական ցանցերի անկարգավորվածության պայմաններ-

⁹⁹ Ավելի մանրամասն St' u Easton, D., *A Systems Analysis of Political Life*. New York: Wiley, 1965:

րում զարգանում է անորակ քաղաքական նյութի տարածման և ցանկացած քաղաքական երևույթի նկատմամբ ոչ մասնագիտական, երբեմն՝ ոչ տրամաբանական, սակայն հուզական վերաբերմունքն ու դրա անթաքույց արտահայտումը: Սա ուղղակիորեն սնուցում է անպատասխանատվության զգացումը, որը զուգորդվում է քաղաքական քննադատության անսահման հնարավորությունների հետ և վերաճում ցինիզմի, բացահայտ վիրավորանքի ու երբեմն՝ ատելության ակնհայտ դրսևորումների:

Անշուշտ, ժողովրդավարական վերահսկողության և հաշվետվողականության գաղափարը ենթադրում է, որ քաղաքացիները պետք է քննադատաբար վերաբերվեն իրենց ղեկավարներին ու քաղաքական առաջնորդներին, ինչն ավելացնում է վերջիններիս պատասխանատվությունը հանրության և իրենց աշխատանքի առջև: Այնուամենայնիվ, երբ քննադատությունը վերածվում է ցինիզմի, քաղաքական համակարգը, ժողովրդավարությունը, քաղաքական իշխանության և ընդդիմության լեգիտիմությունը տուժում է¹⁰⁰: Ավելին, քաղաքականությամբ զբաղվելն է դառնում ոչ այնքան գայթակղիչ զբաղմունք, և փոխանակ սոկրատեսյան «բարձրագույն առաքինության դրսևորման», արիստոտելյան «մարդկանց երջանիկ դարձնելու արվեստի» աշխատանքի որակներ ձեռքբերելուց, հանրության աչքին դառնում է անձի անհատական, հանրային լեգիտիմության կորցնելու ամենակարճ ճանապարհը: Արդյունքում նման աշխատանքով զբաղվել ցանկացող անձանց շրջանակը ունակ, մասնագիտական որակներ ունեցող, հանրային նվիրումի պատրաստ և առաքինի որակներ ունեցող անձանից դուրս է գալիս՝ սահմանափակվելով հանրային կյանքի այլ բնագավառում իր տեղը չգտած, մասնագիտական աշխատանքում հաջողություններ չունեցած, այլ աշխատանք չգտած անձանցով:

Այս ամենն ակնառու ձևով արտահայտվեց հատկապես հետխորհրդային երկրներում, որտեղ անկայության տարիներին արագ ձևով ու երբեմն՝ պատահաբար ձևավորվեցին օլիգարխիկ տնտեսական ու քաղաքական կառուցվածքներ: Սրա արդյուն-

¹⁰⁰ St' u Tillie J.N., *Challenges to democratic representation*, Course on Political Sceineces, Amsterdam Institute for Social Science Research (AISSR):

քում տեղի ունեցավ ԽՍՀՄ վերջին տասնամյակներում ձևավորված հանրության էլիտայի (ընտրանու) կերպափոխում՝ խորհրդային կուսակցականից ու գիտամանկավարժականից դեպի օլիգարխիկ: Արդյունքում հանրության մոտ ձևավորվեց, իսկ հետագայում առանձին պետություններում հեղափոխական շարժումների ձևով (Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Ղրղզստան, Հայաստան և այլն) արտահայտվեց ատելություն ոչ միայն օլիգարխիկ էլիտայի, այլ նաև ցանկացած տեսակի էլիտայի նկատմամբ, այդ թվում՝ գիտելիքով ու սեփական աշխատանքի շնորհիվ հանրային միջին գիտակցությունից բարձրացած անձանց նկատմամբ:

Սա գործնականում մեծ ազդեցություն ունեցավ քաղաքական համակարգերի վրա, քանի որ քաղաքականությունից աստիճանաբար հեռանում են ցանկացած տեսակի էլիտաները (ֆինանսապես, գիտելիքով, մասնագիտական արհեստավարժությամբ և այլն) և փոխարինվում են նորերով, որոնք դեռ չեն հասցրել հմտանալ նվազագույն քաղաքական պրակտիկայի ու մշակույթի մեջ:

Քաղաքականության կենցաղայնության այս միտումներին ակտիվ ձևով նպաստում են ժամանակակից զանգվածային լրատվության միջոցները:

Ստացվում է, որ տեխնոլոգիաների զարգացմամբ, տեղեկատվության հասանելիության և քաղաքական համակարգի մատչելիության աճով պայմանավորված քաղաքականությամբ հետաքրքրվող անձանց թվի աճին զուգահեռ նվազում է քաղաքական երկխոսության որակն ու արդյունավետությունը՝ նպաստելով քաղաքական համակարգից որակյալ կադրերի արտահոսքին:

Հանրային կարծիք ձևավորողներ և հասարակական կազմակերպություններ

XX դարի կեսերից կրթության և հանրային գիտակցության արագ զարգացման, սոցիալական շարժումների ակտիվացման, քաղաքական կուսակցությունների մենաշնորհի աճին զուգահեռ, ձևավորվեցին և աստիճանաբար ազդեցիկ դարձան հանրության առանձին խմբերի շահերը որոշակիացնող և կազմակերպված

ծնով պաշտպանող միավորները, որոնք, չլինելով քաղաքական կազմակերպություններ, հետագայում պիտի դառնային քաղաքականապես շատ ազդեցիկ:

Ի սկզբանե կար ընկալում, որ լավ կրթված ու իրենց ազատ համարող քաղաքացիներն ավելի պակաս հետաքրքրված կլինեն քաղաքական կուսակցություններին ընդհանուր քաղաքական մանդատ տալուց և կփորձեն, ոչ թե հինգ կամ չորս տարին մեկ վստահություն արտահայտելով այս կամ այն ուժի նկատմամբ վերահսկել նրանց գործունեությանը, այլ դա կանեն ընթացիկ ռեժիմում՝ հասարակական կազմակերպությունների և հանրային շահը արտահայտող ոչ պետական այլ կառույցների միջոցով, որոնք իրենց միասնության մեջ քաղաքական համակարգի ազդեցիկ գործոններ կդառնան: Անկախ նրանից, որ այս ակնկալիքը ոչ բոլոր հանրություններում և ոչ ամբողջական է արդարացվել, սակայն պետք է նշել, որ որոշակի առումով նման կազմակերպություններն իրենց առաքելությունը կատարել և կատարում են:

Կազմակերպելով, համակարգելով, արտահայտելով ու պաշտպանելով, օրինակ՝ փոքրամասնություն կազմող մարդկանց առանձին խմբերի (կանանց, երեխաների, ազգային, կրոնական, սեռական փոքրամասնությունների և այլն) շահերը, զբաղվելով շրջակա միջավայրի և այլ հանրային շահերի պաշտպանությամբ՝ նման միավորները դարձել են հանրային կարծիք ձևավորողներ կամ առնվազն այդ կարծիքի վրա էական ազդեցություն ունեցողներ:

Նման գործառույթի իրականացմանն են նաև նպաստում առանձին անհատներ՝ գիտնականներ, փորձագետներ, մշակույթի և արվեստի գործիչներ, ովքեր իրենց հեղինակությամբ ոչ պակաս ազդեցություն են ունենում պետության ներսում և դրսում տեղի ունեցող քաղաքական և սոցիալական իրադարձությունների վրա՝ այդպիսով քաղաքական համակարգի առաջընթաց կամ հետընթաց զարգացման էական գործոններից մեկը:

Կարևոր խնդիրներից մեկը, որ դրսևորվել է արդի հասարակություններում, հատկապես ոչ զարգացած ժողովրդախիշխանական ունեցող ավանդույթներով այն է, որ հասարակական կազմա-

կերպությունները, օգտագործելով հանրային կարծիքի վրա ունեցած իրենց ազդեցությունը, դառնում են կա՛մ քաղաքական կուսակցությունների կցորդներ, քաղաքական շահ արտահայտող՝ մշտական (արհեստական կազմակերպություններ, երբեմն դրսից սնուցվող ակամա կամ գիտակցող գործակալներ), կա՛մ ժամանակավոր (լոբբինգի արդյունք) հիմունքներով և կա՛մ էլ դառնում են քվազի-կուսակցություններ: Այս վերջին տարբերակն արտահայտվում է հատկապես անցումային հասարակություններում, որտեղ իշխանավոխական գործընթացների արդյունքում հասարակական կազմակերպություններն ու հանրային կարծիք ձևավորող անձինք դառնում են նոր քաղաքական իշխանության սնուցման կադրային բազա:

Լինում են դեպքեր նաև, որ հատկապես արագ իշխանավոխությունների կամ հեղափոխությունների արդյունքում նման կազմակերպություններում որոշում ընդունողները կամ առավել ակտիվ դերակատարներն անմիջապես ընտրվում կամ նշանակվում են քաղաքական պաշտոններում (օրինակ՝ Հայաստանում 2018-19թթ--ին):

Հանրային կարծիք ձևավորող անձինք և հասարակական կազմակերպություններն ակտիվ քվազի-քաղաքական գործունեության արդյունքում աստիճանաբար մաքրում են սահմանը քաղաքական կազմակերպությունների և իրենց միջև՝ դառնալով ոչ այնքան հանրային շահ կամ կոնկրետ խմբի իրավունք սպասարկող ու պաշտպանող միավորներ, որքան քաղաքական շահ հետապնդող և նպատակահարմարությամբ որոշումներ կայացնող միավորներ:

Մեդիա և քաղաքական անորակ տեղեկատվության ավելացում

Թե՛ զարգացած արևմտյան և թե՛ զարգացող ժողովրդավարություններում զանգվածային լրատվության միջոցները կազմում են քաղաքական համակարգի ամենից ազդեցիկ գործոններից մեկը: Սակայն եթե նախկինում դրանք խիստ կազմակերպված, էթիկական ու մասնագիտական կանոններով կանոնակարգված, եր-

բեմն արտոնագրված լրագրողական աշխատանք էին իրենցից ներկայացնում, ինչը ենթադրում էր քաղաքական տեղեկատվության տրամադրման որակական չափանիշներին բավարարող մշակված աշխատանք, ապա արդի սոցիալ-քաղաքական միջավայրում գերիշխող են դարձել ազատ տեղեկատվական կայքերը, լայն տարածում ունեցող հայտնի անձանց գրառումները, բլոգները և այլն, որոնք չեն ենթարկվում վերոնշյալ գրեթե ոչ մի կանոնակարգման, իսկ տեղեկատվության տարածման բնագավառում շատ ավելի անկաշկանդ են իրենց զգում, քան նվազագույն գրագիտություն ունեցող լրագրողը:

Չկենտրոնանալով խնդրի դրական ու բացասական կողմերի վրա՝ նշենք միայն, որ առանց արտոնագրման ինստիտուտի կամ չկանոնակարգված լրատվականների ու ազդեցությամբ դրանց հավասարեցվող օգտատերերի քանակի աճը և նրանց կողմից հանրային միջավայր ներարկվող տեղեկատվության քանակի շարունակական թռիչքածն աճը ավելացնում են հանրային կյանքի՝ միջավայրի քառսի զգացողությունը:

Ավելին. հանդիսատեսի վերածելով հանրությանը, ժողովրդավարության պայմաններում լրատվամիջոցները քաղաքական գործիչներին տալիս են «թատերական բեմ», որը նրանց հնարավորություն է տալիս շփվել իրենց պոտենցիալ ընտրողների հետ և ելույթ ունենալ նրանց համար, միայն նրանց համար՝ անգամ եթե այդ ելույթը երբեմն հակասում է ազգային կամ պետական շահին, սակայն անհրաժեշտ է *ձայներ հավաքելու համար*:

Ի պատասխան ընտրությունների արդյունքների անընդհատ աճող անորոշության՝ քաղաքական գործիչներն ավելի հաճախ են հայտնվում *խաղային* շոուններում և տեղեկատվական-զվարձալի ծրագրերում: Ավելի շատ շեշտադրելով իրենց քաղաքական ոճի և ինքնաներկայացման եղանակների, քան իրական խնդիրները լուծելու մեթոդների և ճանապարհների վրա՝ նրանք հիմնականում նպաստում են քաղաքականության նկատմամբ հանրային ցինիզմի և նիհիլիզմի աճին:

Այլ կերպ ասած՝ գանգվածային լրատվության միջոցների ազատականացումը, տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով

սոցիալական ցանցերի միջոցով քաղաքական տեղեկատվության կայծակնային տարածումը, դրական կողմերից գատ, սնուցում են մի կողմից հանրային ցինիզմի ու նիհիլիզմի, իսկ մյուս կողմից քաղաքական պոպուլիզմի աճին:

Պոպուլիզմ

Պոպուլիզմը սոցիալ-բարոյական հարթությունում բնորոշելիս հանդիպում ենք լայն տարածում ստացած հետևյալ տարբերակի հետ. «պոպուլիզմն իր հիմքում քաղաքականության ձև է, որը հիմնվում է կոռումպացված էլիտայի և բարոյապես առաքինի ժողովրդի համադրման վրա»¹⁰¹: Պոպուլիզմի հետազոտությունը կապված է ոչ թե այն որոշման կայացման հետ, թե նման բարոյական դատողությունները ճիշտ են, թե սխալ, այլ «այն բանի գիտակցման հետ, թե երբ քաղաքականության այդ ձևը գերակայող է դառնում, ինչու է այն ստանում հանրային աջակցություն, ինչպես է այն ազդում քաղաքական իշխանության գոյություն ունեցող կոնֆիգուրացիաների և քաղաքական ինստիտուտների ու քաղաքականության վրա»¹⁰²:

Քաղաքականության կենցաղայնացումը պայմանավորում է և ինքն էլ պայմանավորվում է քաղաքական պոպուլիզմի աճով: Կերոնշյալ բոլոր գործոններն այս կամ այն չափով ազդում են դրա վրա, իսկ քաղաքական գործիչները, կուսակցությունները, տուրք տալով ժողովրդական լայն զանգվածների ձայնն ամեն գնով նվաճելու ցանկությանը, նախապատվությունը տալիս են ոչ թե մասնագիտական, խնդիր լուծող, արժեք ավելացնող քաղաքական խոսքին, այլ հուզական-զգայական և զանգվածների *քիմքը շոյող* հայտարարություններին, որոնք անկախ նրանից, թե հնարավոր է կենսագործել, թե ոչ՝ դառնում են քաղաքական ընտրությունների մրցավազքի անբաժանելի մասը:

¹⁰¹ St' u Cas Mudde, *Populist Radical Right Parties in Europe* (Cambridge: Cambridge University Press, 2007), էջ 23:

¹⁰² St' u Bonikowski B., *Three Lessons of Contemporary Populism in Europe and the United States*, The Brown Journal of World Affairs, Fall/Winter, Volume XXIII, Issues I, 2016, էջ 10:

Պոպուլիզմի աճի պարարտ միջավայրի համար կարևոր է նաև սոցիալական փոփոխության տեմպը, քանի որ «պոպուլիզմը շատ ավելի է արձագանքում այն ընտրողների մոտ, ովքեր հիասթափություն են ապրում՝ պայմանավորված արագ սոցիալական փոփոխություններով»¹⁰³:

Արդյունքում, ընտրապայքարը կազմակերպվում և իրականացվում է ոչ թե խնդիրների լուծման ռազմավարությունների, մարտավարությունների ու գործողությունների ծրագրերի շուրջ, այլ ընտրողներին ավելի լավ հաճոյանալու, ավելի շատ ոչ իրական խոստումներ տալու և ավելի շատ հաճախ մոլորացնելու շուրջ:

Մի կողմից պոպուլիզմն ունակ է դառնում վերացնել քաղաքականությամբ զբաղվելու մենաշնորհը մի խումբ անձանց կողմից, սակայն մյուս կողմից այն ստվերում է ողջախոհության, մասնագիտական աշխատանքի, գիտելիքահեն քաղաքականության բոլոր դրսևորումները՝ ճանապարհ հարթելով հուզական պետականության գերակայությանը, որն ընթանում է կա՛մ իներցիայով, կա՛մ պատահականությամբ: Սրան զուգորդելով արագ փոփոխվող սոցիալական միջավայրը՝ ժողովրդահիշխանությունը կորցնում է սոցիալական համակարգի ինքնակազմակերպման արդյունավետությունը:

Կյանքի վերաիմաստավորում. հեդոնիզմ

Կապիտալիստական հասարակարգի հարակից ազդեցություններից մեկը սպառողական հանրության ձևավորումն է ու սպասարկումը՝ ավելացող սպառողական կարիքներով ու հոգեբանական կախվածությամբ:

Ջանգվածային մշակույթը կապիտալիստական աշխարհում շուկայի կարիքների համար գովազդով և զանգվածային մշակույթով քարոզվում է հեդոնիստական գաղափարախոսության ծայրահեղական դրսևորում, համաձայն որի կյանքի իմաստը, բարիքի աղբյուրը հաճույքն է (*hēdonē*), երջանկության (*eudaimonia*)

¹⁰³ St' u Bonikowski B., էջ 21-22:

պահանջմունքի բավարարումը¹⁰⁴: Իսկ հաճույքի ու երջանկության պահանջմունքը բավարարելու ուղիղ ճանապարհը նյութական աշխարհի բարիքներն են, որոնք հիմնականում արտադրվում են կապիտալի սեփականատերերի կողմից, որոնք էլ իրենց հերթին ազդում են ժողովրդաիշխանական կառուցակարգերով ու պոպուլիզմի օգնությամբ քաղաքական իշխանության ձևավորման ու կենսագործման վրա:

Արմատներ ունենալով հին հնդկական մշակույթի, անտիկ փիլիսոփայության (Արիստոփայես, Էպիկուր), կրոնական գաղափարախոսությունների (Քրիստոնեության առաջարկ՝ Դրախտ (եղեմական այգի, հավերժական կյանք, երջանկություն), Իսլամի առաջարկ՝ Ջաննաթ (վայելքի այգի, հավերժական երջանկություն) և այլն) մեջ¹⁰⁵ հեղոնիզմը դարձել է ժամանակակից, արագ փոփոխվող սոցիալական միջավայրում անհատական կողմնորոշման ամենահեշտ և հարմար ուղենիշը: Քանի որ կյանքը կարճ է, մարտահրավերներն անորոշ ու շատ, իսկ աշխարհն արագ է փոխվում թե՛ արժեքային, թե՛ բարոյական և թե՛ այլ սոցիալական կոորդինատներում, մարդու համար անհատական աշխարհընկալման հիմքում ավելի հարմար է լինում դնել այս կյանքում հիմա, անձնական երջանկությունն ու նյութական բարիքների շարունակական աճից օգտվելը:

Բացառիկ զուգադիպությամբ մարդու իրավունքների գաղափարախոսությունը, որն, ի սկզբանե և իր հիմքում լինելով մարդակենտրոն և կոչված լինելով պաշտպանելու բարձրագույն արժեք համարվող արժանապատվությունը, արագ փոփոխվող սոցիալական միջավայրում հարմարեցվում է շուկայի պահանջմունքների և նեղացվում միայն հեղոնիստական նեղ ընկալումների շուրջ: Այդպես «հանրային կարգ և անհատական երջանկություն» հավասարակշռության հաշվին աստիճանաբար ճանապարհ է հարթում դեպի անհատական հաճույքի և երջանկության նժարի

¹⁰⁴ Մանրամասն Տե՛ս Daniel Michael Weijers, *Hedonism and Happiness in Theory and Practice*, Victoria University of Wellington, 2012:

¹⁰⁵ Մանրամասն Տե՛ս Ole Martin Moen, *Hedonism Before Bentham*, UCL Bentham Project, *Journal of Bentham Studies*, Vol. 17, 2015:

ժամրություն:

Ավելացող նյութական բարիքների և էլ ավելի արագ ավելացող անհատական պահանջմունքների բանակի աշխարհում բարոյական ու արժեքային կողմնորոշիչները չեն հասցնում «ընկալել և արտահայտել» առկա միջավայրը, կյանքին տալ նոր իմաստ, հորիզոն ու առաքելություն, իրավունքը լցնել նոր բովանդակությամբ, իսկ այդ բացը արագորեն լրացվում է պարբերաբար արագացման ռեժիմում գտնվող սոցիալական փոփոխությունների և տեխնոլոգիապես հարստացող նեղ հեղոնիստական գաղափարների կողմից: Վերջինս էլ ժողովրդախոշտանության պայմաններում սնվում է պոպուլիզմով և սնուցում այն, ավելացնում է քաղաքականության կենցաղայնացումը և ինքն էլ ավելի ամրապնդվում դրանով, և այս ամենով հանդերձ՝ բացասականորեն է ազդում թե՛ ժողովրդախոշտանության և թե՛ քաղաքական համակարգի արդյունավետության վրա:

Ընտրություններ

Ժամանակակից հասուն կամ ոչ հասուն ժողովրդավարական հասարակություններում ամենատարածված գործողությունները, որոնցով քաղաքացիները ներգրավվում են ժողովրդախոշտանության բուն գործընթացներում, ընտրություններն են:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ կայացած ժողովրդավարություններում քաղաքացիների մեծամասնությունը շարունակաբար աջակցում է ժողովրդավարական վարչաձևի հիմնարար սկզբունքներին: Միևնույն ժամանակ, աջակցությունը ներկայացուցչական ժողովրդավարության հիմնական ինստիտուտների, մասնավորապես՝ պառլամենտ, քաղաքական կուսակցություններ և կառավարություն, նկատմամբ անշեղորեն անկում է ապրում պետությունների մեծամասնությունում¹⁰⁶: Դրան ավելանում է նաև ընտրություններին մասնակցող քաղաքացիների թվի նվազումը:

Այս միտումն ավելի է խորացնում քաղաքացիների վստա-

¹⁰⁶ Մանրամասն St`u Dalton, R. J., *Democratic Challenges, Democratic Choices*. Oxford: University Press, 2004:

հույսան պակասը ժողովրդաիշխանության արդեն իսկ գործող կամ ավանդական ինստիտուտների նկատմամբ և ավելացնում է այլ գործիքակազմով հանրային խնդիրները լուծելու ցանկությունը. օրինակ՝ քաղաքական բողոքներ, ցույցեր, անհնազանդության ակցիաներ, սպառնալիքներ, բռնություններ և այլն:

Մյուս կարևոր հարցը, որ առաջանում է ընտրությունների համատեքստում, ներկայացուցիչներին տրամադրվող մանդատի բնույթն է: Եթե քաղաքական ուժերը վերջին ժամանակաշրջանում ձևավորվում են հիմնականում նախորդ իշխանությունների քննադատության, սխալների մատնանշման և ընդհանրապես՝ խնդիրների վերաբերյալ պոպուլիստական հայտարարությունների արդյունքում, ապա արդյո՞ք ապագայում առաջացող խնդիրների լուծմամբ օժտված է նրանց տրված մանդատը, երբ դրանց վերաբերյալ «ժողովուրդ - ձևավորված քաղաքական իշխանություն» երկխոսություն չի եղել և հետևաբար նման հարցերի հետ առնչվելու իրավագործություն չի տրամադրվել: Սրան գումարվում են նաև արագ փոփոխվող միջավայրից բխող խնդիրները, որոնք նախկինում չեն հանդիպել, իսկ ձևավորված քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերը որևէ առնչություն չեն ունենում առկա արագ հերթափոխվող խնդիրների հետ:

Նման խնդիր գործնականում սուր դրվեց Հայաստանի Հանրապետությունում, օրինակ, երբ հեղափոխության արդյունքում իշխանության եկած քաղաքական ուժը 2021թ-ի արտահերթ ընտրություններում կրկին անգամ հավաքեց ամենամեծ քանակությամբ ձայները՝ կոնկրետ քաղաքական ծրագրով, որի բովանդակությունը պտտվում էր հիմնականում նախորդ իշխանությունների կոռուպցիոն կառուցակարգերի բացահայտման, «թալանվածը հետ բերելու» և պատասխանատուներին քրեական պատասխանատվության ենթարկելու շուրջ: Սակայն նույն քաղաքական ուժը, կոնկրետ ծրագրի համար ստանալով մանդատը, իրեն վերապահեց Արցախյան հիմնահարցում և դրա բանակցային գործընթացում արմատական փոփոխությունների գնալու գործառույթը, ինչի առնչությամբ մանդատ չէր ստացել: Հանրային միջավայրում սա առաջացրեց սուր արձագանք, որին միացան ոչ միայն հանրային

կարծիք ձևավորող անձինք, այլ նաև գործող պատգամավորներն ու Մարդու իրավունքների պաշտպանը:

Սա դասական օրինակ է այն կառուցակարգի, որ կարելի է ընտրություններում հաղթանակ տանել՝ ազդելով կոնկրետ պահին զգայուն հանրային հույզերի վրա, սակայն դրանից հետո՝ զբաղեցնելով քաղաքական պաշտոններ, հանրային քաղաքականությունը տանել այլ ուղղությամբ և շեշտը դնել այլ հարցերի լուծման վրա, որոնց հետ կապված հանրությունը մանդատ չի տվել ընտրությունների ժամանակ:

Արդյունքում առաջ է գալիս ընտրության ինստիտուտի նպատակահարմարության հարցն այն պայմաններում, երբ դրանց արդյունքում ձևավորված իշխանություններն ինքնանպատակ են դառնում (իշխանություն իշխանության համար) և խնդիրներ լուծելու փոխարեն ավելացնում են չլուծված խնդիրների քանակը: Այս ամենը նպաստում է իշխանության նկատմամբ հանրային ու ընտրողների վստահության նվազմանն ու, ընդհանրապես, ընտրության ինստիտուտի արդյունավետությունը կասկածի տակ դնելուն:

Տեխնոլոգիաներ և կամքի ազատություն

Տեխնոլոգիաների աճն արտահայտվում է ոչ միայն արդյունաբերական, համակարգչային, ֆինանսական, քաղաքական և այլ բնագավառներում, այլև XXI դարի ամենաազդեցիկ գործիքի կառավարման ոլորտում՝ տեղեկատվության: Եթե XIX-XX դարերում ֆինանսիստների մոտ ընդունված էր ասել, որ «տվեք մեզ փողի քանակը շուկայում որոշելու հնարավորությունը, և մեզ այլևս հետաքրքիր չի լինի, թե ովքեր են օրենք ընդունում», ապա այժմ սա վերաբերում է տեղեկատվությանը, որի հոսքերի նկատմամբ կառավարման գործիքների ավելի մեծ ծավալ ունեցողներին բոլորովին հետաքրքիր չի, թե ով է ձևական իմաստով զբաղեցնում որոշում ընդունողների աթոռները, որովհետև այս կամ այն կերպ նրանց կողմից ընդունվող որոշումներն արդեն իսկ ընդունված են, պարզապես գտնվում են տեխնոլոգիական խորքային ու համալիր ընթացակարգերով մշակման և ժողովրդավարական կառուցակարգերով բյուրեղացման փուլում:

Սա, իհարկե, հնարավոր դառնում է և պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից կենտրոնականը սոցիալական համակարգի ներսում զանազան կապերի և փոխկապակցվածության աճն է, այլ կերպ՝ ցանցային կառուցվածքների արագ ձևավորումը և այդ կառուցվածները պայմանավորող ու դրանցով էլ սնուցվող տեղեկատվության քանակի աճը և դրա փոխանցման դյուրացումը: Պատահական չէ, որ Ալվին Թոֆլերը արդի հասարակությունը համարում էր մարդկության զարգացման երրորդ՝ տեղեկատվական հասարակություն¹⁰⁷:

Սոցիալական այս իրականությունը, բնականաբար, իր ազդեցությունն է թողնում ինչպես իրավունքի ընկալման, դրա ձևավորվան և կիրառման վրա¹⁰⁸, այնպես էլ քաղաքական համակարգի և, մեծ հաշվով, ժողովրդաիշխանության աշխատանքի կազմակերպման վրա:

Պատահական չէ, որ նման պայմաններում հանրության անդամների կողմից կայացրած որոշումներն, ի տես, միգուցե, լինեն նրանց սեփական մտազործունեության արդյունքը, և նրանք համոզված լինեն դրանում, սակայն, մեծապես, պայմանավորված են լինում արդեն իսկ հարմար պահերին վախի, ատելության, սիրո, քաղաքական ու արտաքաղաքական անհրաժեշտ գործընթացների վերաբերյալ մտածված չափաբաժնով *մատուցած*, իսկ երբեմն՝ *սնուցված* տեղեկատվության արդյունքը: Այս ամենը պահանջում է խորքային տեխնոլոգիաներ և հաշվարկներ, ինչն այսօր դարձել է ցանկացած քաղաքական իշխանության, երբեմն նաև քաղաքական յուրաքանչյուր ուժի ժողովրդաիշխանության մասնակցության անքակտելի մարտավարությունը: Սա, իհարկե, հանգեցնում է կամքի ազատության հին, սակայն արդեն նորից առաջնային կարևորություն ձեռք բերած խնդրին:

¹⁰⁷ Մանրամասն Տե՛ս, Alvin Toffler, *The Third Way*, Random House Value Publishing, 1987:

¹⁰⁸ Տե՛ս Սիմոնյան Տ.Վ., *Ազատության փոփոխվող բովանդակությունը XXI դարի իրավունքի համալիրությունում*, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ամենամյա գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2017, էջ 29-41, էջ 30:

Եվ երբ ոչ ժողովրդավարական վարչաձևերի պայմաններում քաղաքական իշխանությունը օգտագործում է կամքի ազատությունն արտաքին լծակներով (երբեմն բռնության) ճնշելու, իշխող ուժի կամքին հարմարեցնելու մարտավարությունը, որպեսզի ստանա իրեն հարմար կայուն սոցիալական միջավայր, ապա ժողովրդաիշխանության պայմաններում քաղաքական ուժերի և, ընդհանուր առմամբ, քաղաքական համակարգի աշխատանքի ամբողջ ուղղությունը միտված է քաղաքացու (անհատական) և սոցիալական (հանրային) կամքի ձևավորման վրա ազդող գործոնների որսի ու դրանց վրա ազդեցություն ունենալու ճանապարհների մշակման վրա¹⁰⁹:

Խնդիրը տեխնոլոգիաների օգնությամբ կամքի իրական ազատության սահմանափակման լավ ու վատ կողմին անդրադարձնալը չէ, այլ այն՝ որպես փաստ, դիտարկելը, որն օգտագործվում է ժողովրդաիշխանության ճանապարհը որդեգրած գրեթե բոլոր քաղաքական համակարգերի կողմից: Սա, իհարկե, բարդեցնում է նաև աշխատանքը, երբ այս ամենը դիտարկվում է սոցիալ-քաղաքական շարժընթացի անորոշության պայմաններում, ինչն էլ սնուցվում է գործընթացների պարբերական արագացումներով, սակայն, բոլորովին, չպետք է խոչընդոտ հանդիսական հանրային շահի որոշակիացման ու ընդհանուր կամքի ձևավորման հույժ կարևոր կառուցակարգը հասկանալու գործում, առանց որի արդի ժողովրդաիշխանությունն ու քաղաքական համակարգերը դժվար, թե կարողանան հասնել իրենց հետապնդած նպատակներին:

Հնարավոր չէ սպառիչ կերպով թվարկել քաղաքական համակարգի գործնական խնդիրները, որ այսօր առկա են աշխարհի շատ հասարակություններում, որոնք փորձում են կյանքի կոչել կամ արդեն կոչել են ժողովրդաիշխանության իրենց կառուցա-

¹⁰⁹ Տե՛ս Simonyan T.V., *Controlled Reality and the Fiction of Freedom: Synergy Algorithms*, Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018, էջ 25-35:

կարգերը: Սակայն հնարավոր է առանձնացնել որոշ խնդիրներ կամ գործոններ, որոնց ազդեցությունն էական է առկա զարգացումների համատեքստում: Ներկայացված խնդիրները հենց նրանք են, որոնք որոշ չափով տեսանելի են և գնալով ավելի ազդեցիկ են դառնում թե՛ քաղաքական համակարգի կերպափոխումների և թե՛ ժողովրդախիշխանության վերափմաստավորման ու կերպափոխման համատեքստում:

Առանձնացված խնդիրները թույլ են տալիս եզրակացնելու, որ ժողովրդախիշխանության տեսական կենսագործունը քաղաքական համակարգի ներկա հնարավորություններով էականորեն տարբերվելու է գործնականից, որովհետև այդ հարակից ազդեցությունների պատճառով սկզբնապես ակնկալվող արդյունքից հնարավոր շեղումների չափաբաժինն այնքան է մեծանում, որ առաջանում է նույն ժողովրդախիշխանության և դրա կենսագործման համար անհրաժեշտ քաղաքական համակարգի նպատակահարմարության հիմնարար հարցը:

Նման պայմաններում շղթայական ձևով հարվածի տակ է հայտնվում առաքելությունն ու նպատակը՝ հանուն որի այդ ժողովրդախիշխանությունը կոչված է կենսագործվելու:

§ 2. Հանրային կամքի ձևավորումն ու հանրային շահի որոշակիացումը սոցիալ-քաղաքական շարժընթացի անորոշության պայմաններում

Արագ փոփոխությունների և բիֆուրկացիոն (ճյուղավորումների) գործընթացները սոցիալ-քաղաքական և պետաիրավական համակարգերում, որոնք ժամանակակից կյանքի սովորական որակներն են դարձել, հանրային շահի որոշակիացման և հանրային կամքի ձևավորման խնդիրները վեր հանելու և դրանք լուծելու որոշակի պատկերացում կազմելու համար՝ անհրաժեշտ են՝

- հասկանալ՝ արդյոք ժողովրդախիշխանությունը՝ որպես հանրային շահի որոշակիացման և հանրային կամքի ձևավորման կառուցակարգ, արդյունավետ միջոց է նման անկայուն միջավայրերում հանրային շահի որոշակիացման և հանրային կամքի ձևա-

վորման համար,

- դիտարկել հանրային կամքի ձևավորման խնդիրներն այդ միջավայրերում,
- դիտարկել հանրային շահի որոշակիացման խնդիրներն այդ միջավայրերում,
- սոցիալ-քաղաքական շարժընթացի անորոշության միջավայրում համադրել վերևում առանձնացված քաղաքական համակարգի գործնական խնդիրները ժողովրդաիշխանական կառուցակարգերի միջոցով հանրային շահի որոշակիացման ու հանրային կամքի ձևավորման խնդիրների հետ:

Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին՝ առանձին-առանձին:

Ժողովրդաիշխանությունը՝ որպես արդյունավետ միջոց

Ժողովրդաիշխանության սահմանումների, մեկնաբանությունների և կերպափոխումների բազմազանությունը նպատակային օգտագործելու համար անհրաժեշտ է հասկանալ՝ որն է նպատակը, հանուն որի դրանք կիրառվում են:

Սույն գլխի իմաստով նպատակը հանրային շահի որոշակիացման ու հանրային կամքի ձևավորման գործում հստակություն մտցնելն է այն միջավայրերում, որոնք հավասարակշռությունից դուրս զարգացումների մեջ են գտնվում, և որտեղ սոցիալ-քաղաքական շարժընթացի անորոշությունը շարունակաբար աճում է:

Հետևաբար, հաշվի առնելով քաղաքական համակարգի ժամանակակից գործնական խնդիրները և որպեսզի չկորչենք ժողովրդաիշխանության սահմանումների բազմազանության մեջ, իրական կյանքում իրական խնդիրները գործնականում լուծելու առաքելության համատեքստում դրա ամբողջ իմաստն ու էությունը կարելի է խտացնել մեկ կիրառական բանաձևի մեջ՝ **այն որոշումների կայացման միջոց է՝ կառուցակարգ, որը հանրային շահի սպասարկման նպատակով առավելագույնս ապահովում է հանրության ներուժի բացահայտման, զարգացման և օգտագործման միջոցով այդ նույն հանրության ինքնակազմակերպման և ինքնա-**

կառավարման արդյունավետությունը՝ հաշվի առնելով արտաքին և ներքին միջավայրի մի շարք գործոններ, դրանց շարժընթացը և փոխներազդեցությունը:

Հանրային կյանքի, մարդկանց համակեցության, քաղաքական իշխանության իրավական կառուցակարգերով իրացման պետության հիմնական իմաստն ու էությունը, մշտական ու չսպառվող նպատակը հանրային շահի սպասարկումն է, որը կարող է դրսևորվել որպես պետական և/կամ ազգային շահ: Այդ շահը, մի կողմից, սահմանում է յուրօրինակ նպատակ, հորիզոն, հանրային կյանքի ուղենիշ, որին պետք է ձգտել, մյուս կողմից, առաջարկում է ճանապարհ ու կառուցակարգ, որի միջոցով հնարավոր է այդ ուղեծրով ավելի արդյունավետ հասնել նշված հորիզոնին ու նպատակին: Եվ, սովորաբար, այն, ինչն առաջարկվում է, բավականին նեղ, հավասարակշռությունը հեշտորեն կորցնող և խոցելի ճանապարհ է լինում՝ հաշվի առնելով, որ առաջին իսկ պահից դա պետք է պայքարի ոչ միայն նպատակի, այլ նաև առանց դադարի ամենօրյա աշխատանքով արդարացնի հենց իր՝ ճանապարհի արդյունավետությունը՝ սահմանափակելով մարդկանց ազատությունը մի տեղ, որտեղ այն քառսի վերածվելու ներուժ ունի, և բացահայտի ու զորեղացնի մեկ այլ տեղ, որտեղ արժեքներ ու ճանապարհներ արարելու մարդկային մեծ ներուժ կա: Ժողովրդավարության այս խնդիրը կրկին ազատության քանակի կառավարման մեջ է՝ հանուն այդ նույն ազատության որակի աճի, ինչն ունակ է առավելագույնս սպասարկել հանրային շահը:

Ազատության տանող այս նեղ միջանցքը, մի կողմից, սեղմված է դաժանությամբ և ռեպրեսիաներով հատուկ բռնատիրական պետության նկատմամբ վախի, իսկ մյուս կողմից՝ պետության բացակայության ժամանակ ծագող անօրինության սարսափի միջև: Հենց այս նեղ միջանցքն է այն վայրը, որտեղ պետությունն ու հասարակությունը հավասարակշռում են միմյանց: Եվ այս հակադրությունը չի նկարագրում ինչ-որ հեղափոխական պահ. այն երկու ուժերի միջև մշտական, ամենօրյա պայքար է: Այս պայքարը օգտակար է երկու ուժերի համար էլ: Նեղ միջանցքում պետության և հասարակության ազատությունը ոչ միայն մրցակցում

են, այլև համագործակցում են: Այս համագործակցությունը պետությանը տալիս է ավելի մեծ հնարավորություն, որպեսզի այդպերպ հասարակությանը տա այն, ինչի կարիքը վերջինս ունի, իսկ հասարակության մոտ ավելի շատ հնարավորություններ են ծագում պետության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար: Ինչու՞ է սա հենց միջանցք, այլ ոչ պարզապես ազատությանը տանող դուռ: Միջանցք է, քանի որ ազատության ձեռքբերումը ընթացք է. անհրաժեշտ է անցնել երկար ճանապարհ նեղ միջանցքով, մինչև կհաջողվի վերահսկողություն տակ վերցնել բռնությունը, գրել օրենքներ և ապահովել դրանց կիրառումը, հետևել, որ պետությունը տրամադրում է սոցիալական ծառայություններ իր քաղաքացիներին: Ինչու՞ է այդ միջանցքը այդքան նեղ: Քանի որ դա հեշտ առաջադրանք չէ¹¹⁰:

Իսկ ի՞նչ առնչություն ունի ժողովրդաիշխանություն այս ամենին: Բանը նրանում է, որ ժողովրդաիշխանությունը այդ *«նեղ միջանցքով»* անցնելու արդյունավետ **միջոց** է, գործիք, յուրահատուկ մի կառուցակարգ, որի միջոցով բացահայտվում, զարգանում և օգտագործվում է հանրային ներուժն այնպես, որ դա ոչ միայն վնաս չտա ազատության որակի աճին (հակառակը՝ նպաստի դրան), այլ նաև սանձի ավելորդ քանակով ազատության աճը:

Այն նպատակ չէ, այլ նպատակին հասնելու համար միջոց: Նպատակ դարձնելու պարագայում ամբողջ հանրային կյանքի կազմակերպումն է դառնում ինքնանպատակ: Հանրությունը չի կարող իր ներուժը սպառել մի երևույթի վրա, որի առաքելությունն այդ նույն ներուժի հայտնաբերումը, զագացումն ու օգտագործումն է:

Ոչ ժողովրդավարական վարչաձևերի դեմ պայքարում շատ հեշտ է ժողովրդաիշխանությունը միջոցից վերածվում նպատակի, ինչի արդյունքում տուժում է ամբողջ հանրությունը, քանի որ անզամ հաջողությունից հետո այն պոպուլիստական ու հեղափոխական շարժումների կողմից ինքնանպատակ դարձած ժողովրդաիշխանությունը հյուժում է ամբողջ հանրությանը՝ զրկելով նրան

¹¹⁰ St´u Дарон Аджемоглу, Джеймс А. Робинсон, Узкий Коридор: Году дарства, Общества и Судьба Свободы, Москва, 2021, էջ 12,13:

ներուժի հայտնաբերման և օգտագործման ողջախոհությունից փոխարենը հանրային կյանքը լցնելով քաղաքական աղմուկով և ձախողումներով: Նման օրինակներ շատ են հատկապես քաղաքական ու սահմանադրական մշակույթի ցածր մակարդակ ունեցող հանրություններում, ինչպես, օրինակ, նախկին ԽՍՀՄ տարածքում, Արևելյան Եվրոպայում ձևավորված ժողովրդավարության և իշխանափոխությունների դեպքերը:

Ինչո՞ւ է հենց իրական ժողովրդաիշխանության կառուցակարգը առավելագույն **արդյունավետությամբ** ապահովում հանրության **ինքնակազմակերպումն ու ինքնակառավարումը**: Այս հարցը հստակ պատասխան չի կարող ունենալ, քանի որ մարդկության պատմության տարբեր ժամանակներում տարբեր վարչաձևեր տարբեր կերպ են այս գործառույթը կատարել (լավ կամ վատ), և միայն ոչ ժողովրդավարական վարչաձևերի (ավտորիտարիզմ, տոտալիտարիզմ) նույն խնդրի լուծման անարդյունավետությամբ պայմանավորված է, որ ժանրության բևեռը թեքվել է դեպի ժողովրդավարություն: Ժամանակակից աշխարհում էլ ժողովրդավարության վարչաձևի կողմից նույն խնդրի լուծման գործում առկա թերություններն էլ (պոպուլիզմ, չկշռադատված, ականջ շոյող խոսքեր, որոշումներ և այլն) շատերին հակում են հիասթափության և երբեմն նույնիսկ՝ այս գաղափարից հրաժարման:

Արդյունավետությունը նախ պայմանավորված է այն հանգամանքով, որ ժողովրդաիշխանության ներուժն ավելի մեծ է արտաքին և ներքին միջավայրի ազդեցության և ուշադրության արժանի գործոնները տեսնելու, բացահայտելու, դրանց շարժընթացն ու փոխներազդեցությունը հասկանալու տեսանկյունից: Մեծ է ներուժը, որովհետև դրանք *դիտարկող, հայտնաբերող «շահագրգիռ անքերը»* և *գարգացնող «շահագրգիռ ուժերը»* շատ ավելի շատ են, քան այլ վարչաձևերի պայմաններում:

Սակայն երբ այս գործոնների քանակը արագորեն աճում է, երբ փոխազդեցությունների ցանցային փոխկապվածությունը մեծանում է և դառնում շատ զգայուն, երբ կառուցվածքների ու համակարգերի շարժընթացը մտնում է պարբերաբար և երբեմն՝ ան-

կանխատեսելի արագացումների փուլեր, ժողովրդախիշխանության տրամադրած հնարավորություններն էլ են իրենց դրսևորում ոչ այնքան արդյունավետ կողմից:

Խնդիրն ավելի է սրվում, երբ քաղաքական համակարգը պատրաստ չի լինում կամ հասցրած չի լինում ձևավորել պատշաճ քաղաքական և սահմանադրական մշակույթ՝ մարտահրավերներին երբեմն ինտուիտիվ արձագանքելու համար:

Քաղաքական կամ սահմանադրական զարգացած մշակույթ չունեցող ժողովրդախիշխանության համար առավել վտանգավոր է դառնում արագացող փոփոխությունների պայմաններում հանրային շահի որոշակիացման և ընդհանուր կամքի ձևավորման մարտահրավերը: Վտանգավոր է, որովհետև անկայուն սոցիալ-քաղաքական միջավայրը շատ դեպքերում առաջին հարթություն է բերում այնպիսի հարցեր ու լուծումներ, որոնք որևէ առնչություն չունեն հանրային շահի կամ հանրային կամքի հետ, սակայն շատ հմտորեն կարողանում են ներկայանալ որպես այդպիսին՝ օգտվելով անկայուն և հավասարակշռությունից դուրս գտնվող միջավայրի տված հնարավորություններից՝ այդպես օգտագործելով ժողովրդախիշխանության տված հարթակները ի վնաս հենց դրա հետապնդած նպատակների:

Այս ամենին ավելանում է նաև քաղաքական համակարգի արդի խնդիրների բազմազանությունը՝ կուսակցական համակարգի ձգնաժամ, պոպուլիզմ, մեդիայի ապատեղեկատվություն, հեղոնիզմը, քաղաքականության կենցաղայնացում, տեխնոլոգիական հնարավորությունների՝ ի չարս օգտագործում և այլն: Բնական է, որ նման մարտահրավերներին դիմագրավող ժողովրդախիշխանությունն՝ իր *նեղ միջանցքով* անցնելիս ոչ միշտ կարողանա արդյունավետություն ցուցաբերել հանրային շահի որոշակիացման ու հանրային կամքի ձևավորման գործում: Սակայն, գործնականում այն երկրներում, որտեղ կայացած են ժողովրդախիշխանության ինստիտուցիոնալ բազան ու քաղաքական, իրավական, սահմանադրական մշակույթն ու ավանդույթները, արդյունավետության մակարդակը անհամեմատելիորեն աճում է, քան այն երկրներում, որոնք մեծ ջանքեր չեն գործադրում դրանց

կայացման համար:

Ուստի առաջին հարցի պատասխանն առ այն, թե արդյոք ժողովրդաիշխանությունը՝ որպես հանրային շահի որոշակիացման և հանրային կամքի ձևավորման կառուցակարգ, արդյունավետ միջոց է նման անկայուն միջավայրերում հանրային շահի որոշակիացման և հանրային կամքի ձևավորման համար, **այո է**: Սակայն այդ «այո»-ին հասնելու համար անհրաժեշտ են ինստիտուցիոնալ և մշակութային պայմաններ, առանց որոնց պատասխանը բացասական կդառնա:

Ամեն դեպքում, եթե ինչ-որ չափով գիտությունն ու պրակտիկան կարողացել են լուծումներ գտնել կայուն միջավայրում հանրային կամքի ու հանրային շահի հետ կախված խնդիրներում, նույնը չի վերաբերում անկայուն միջավայրերին: Այստեղ ի հայտ են գալիս շատ կարևոր հարցեր՝ ինչպե՞ս է ձևավորվում հանրային կամքն ու ինչպե՞ս է որոշակիանում հանրային շահը արագ փոփոխվող միջավայրերում, որտեղ ամեն ինչ է գտնվում փոփոխության մեջ, այդ թվում՝ արժեքներն ու մտածողությունը:

Հանրային կամք և միջավայրի անորոշություն

Ժողովրդաիշխանության առաջնային գործառույթներից մեկը հենց ընդհանուր կամ **հանրային կամքի** ձևավորումն է, իսկ հանրային կամքը չի նշանակում քաղաքացիների կամքի պարզապես թվաբանական գումարը կամ համամասնորեն կամքերի ձևավորում՝ միությունների տեսքով:

Սրա մասին դեռևս Ռուսոն է խոսել իր հայտնի աշխատությունում՝ տարանջատելով բոլորի կամքը ընդհանուր կամքից. «*Համընդհանուր կամքը միշտ արդարացի է և ձգտում է հասարակական բարօրության, բայց դրանից չի հետևում, որ ժողովրդի որոշումը մշտապես ճիշտ է: Միշտ էլ անձնական բարօրություն են ցանկանում, բայց միշտ չէ, որ պարզորոշ կերպով տեսնում են: Ժողովրդին կաշառել չի կարելի, բայց նրան կարելի է խաբել, և այն էլ միայն այն ժամանակ, երբ կարելի է մտածել, որ նա վատն է ուզում:*

Հաճախ մեծ տարբերություն է լինում բոլորի կամքի և հա-

մընդհանուր կամքի միջև: Վերջինս նկատի ունի միայն ընդհանուր շահերը, իսկ առաջինը, որն առանձին մարդկանց կամքի հանրագումարն է՝ մասնավոր շահեր, բայց վերցրեք այդ կամքերի հանրագումարից ծայրագույնները, որոնք փոխադարձաբար իրար ոչնչացնում են, և մնացորդը կլինի ընդհանուր կամք:

Այն ժամանակ, երբ որոշումն ընդունելու բավականաչափ գիտակից ժողովուրդ, և քաղաքացիներն իրար միջև որևէ հարաբերություններ չունենային, ապա մեծ թվով աննշան տարբերություններից կբխեր ընդհանուր կամքը, և որոշումը միշտ ճիշտ կլիներ: Բայց, երբ ի վնաս ասոցիացիայի ստեղծվում են կուսակցություններ և մասնակի ասոցիացիաներ, ապա դրանցից յուրաքանչյուրի կամքը ընդհանուր է դառնում իր անդամների և մասնավոր՝ պետության նկատմամբ, որ քվեարկողներն արդեն այնքան են, որքան որ ասոցիացիա կա, ոչ թե մարդ:

Տարբերությունները դառնում են պակաս բազմաքանակ և ավելի պակաս ընդհանուր արդյունք են տալիս: Վերջապես երբ այդ ասոցիացիաներից մեկն այնքան մեծ է, որ մյուսներից պարզվում է ավելի ուժեղ, ապա արդյունքը ոչ թե փոքր տարբերությունների հանրագումարն է, այլ միակ տարբերությունը, և այդ դեպքում ընդհանուր կամք գոյություն չունի, իսկ այն կարծիքը, որը հաղթում է, միմիայն անհատական կարծիք է»¹¹¹:

Ընդհանուր կամքի ձևավորման և արտահայտման գործում Ռուսոյի մտավախությունը հանգում էր պետության մակարդակում ընդունվող որոշումների սխալականությանը, եթե դրանք թեքվում էին ասոցիացիաների [կազմակերպությունների], կուսակցությունների գերակայությամբ ընդունված որոշումներին, որոնք մեծապես առաջնորդվում էին ոչ այնքան հանրային շահով, որքան խմբային, մասնավոր շահով: Արդյունքում ընդհանուր կամքի ձևավորման մեջ գերակայում էր հանրային միջավայրում գտնվող սուբյեկտների կամքի ավելի թվաբանական արտահայտություն, քան թե երկրաչափականը՝ որակականը, ինչն ավելի մեծ ներուժ ունի հանրային կամքն արտահայտելու գործում, քան

¹¹¹ Տե՛ս ժան Ժակ Ռուսո, *Հասարակական դաշինք*, Երևան, 2000, էջ 86-88:

առաջինը: Հետաքրքիր տրամաբանությամբ նման կազմակերպությունների քանակի աճը, մրցակցությամբ և այլ գործոններով պայմանավորված, նպաստում է, ըստ Ռուսոյի, ընդհանուր կամքի ավելի արդյունավետ ձևավորմանը, քանի որ փոքրացնում է մասնավոր շահի սպասարկման համար քաղաքական և այլ կազմակերպություններում կենտրոնացված ռեսուրսը:

Իհարկե, չափազանց դժվար է մաթեմատիկական ճշգրտությամբ վերհանել հանրային կամքը բոլոր դեպքերում, երբ պետությունը այս կամ այն եղանակով ցանկանում է բացահայտել հանրության իրական կարծիքը կոնկրետ հարցի վերաբերյալ, ինչը շատ դժվար է որոշակիանում ընտրությունների, քվեարկությունների և ժողովրդաիշխանության այլ կառուցակարգերով, հատկապես, երբ հանրությունն՝ ինքը, արագ փոփոխվող սոցիալ-արժեքային միջավայրերում շատ դժվար է կողմնորոշվում և կարիք ունի ուղղորդման, կամ նույն հասարակությունը քաղաքական մշակույթի բացակայության պայմաններում շատ հեշտ է տարվում պոպուլիստական, հեղոնիստական և տեղեկատվական տեխնոլոգիաների կողմից սնուցվող կառավարելի կենսիմաստով: Այդ ժամանակ է, որ պետական կառավարումը պետք է կարողանա ժամանակին ձևավորած լինել հանրային կարծիքի ձևավորման ինստիտուցիոնալ կառուցակարգեր, որպեսզի այն անկայուն միջավայրերում քառտիկ որոշումների չհանգեցնի: Սակայն այստեղ ևս առկա է խնդիր:

Հանրային կամքի համար այդքան կարևոր հիմք հանդիսացող հանրային կարծիքի մասին ժամանակին հետաքրքիր դիտարկումներ է արել գերմանացի փիլիսոփա և սոցիոլոգ Հուգո Կաթերմասը, ով գտնում էր, որ սոցիալ-պետական զանգվածային ժողովրդավարությունների սահմանադրական իրականության հետ սահմանադրական նորմերի հարաբերության պետաիրավական ու քաղաքագիտական վերլուծությունը ստիպված է կառչել հանրային կարծիքի հաստատունացված պատրանքից՝ միաժամանակ չկարողանալով անմիջապես պետության քաղաքացիների հանրության վարքում այն վեր հանել որպես իրական մեծությամբ:

յուն¹¹²: Դրանից բխող դժվարությունը բնորոշել է Լանդսիուսը: Մի կողմից, նա գրանցում է այն փաստը, «որ հանրային կարծիքի տեղը զբաղեցնում է անորոշ հակումն ըստ տրամադրության: Այն ամեն անգամ որոշակի միջոցառումների և իրադարձությունների ազդեցությամբ ուղղվում է այս կամ այն կողմ: Տրամադրությունից կախված՝ այդ հակվածությունը գործում է, ինչպես ճոճվող նավի վրա դեռ ու դեռ սահող բեռը»¹¹³: Մյուս կողմից, նա հիշեցնում է, որ սոցիալական պետության զանգվածային ժողովրդավարության սահմանադրական հաստատություններն ակնկալում են գործող հանրային կարծիք, քանի որ վերջինս դեռևս շարունակում է մնալ քաղաքական տիրապետության օրինականացման միակ ընդունված հիմքը. «Ժամանակակից պետությունը, որպես սեփական ճշմարտության սկզբունք, կանխադրում է ժողովրդի գերագույն իշխանությունը, իսկ վերջինս էլ իր հերթին պետք է լինի հանրային կարծիք: Առանց այս վերագրման, առանց հանրային կարծիքը բոլորի համար պարտադիր որոշումները համընդհանուր հեղինակության աղբյուր փոխարկելու, ժամանակակից ժողովրդավարությունը զրկված է սեփական ճշմարտության սուբստանցիայից»¹¹⁴:

Ստացվում է մի իրավիճակ, երբ ունենք բազմաթիվ անհայտներով հավասարում այն պարագայում, երբ ժողովրդաիշխանությունից ակնկալվում է հստակ որոշում՝ բարձր լեգիտիմությամբ և արդյունավետ լուծումներով, մինչդեռ դրանց համար չկան ոչ միայն կամքի ձևավորման համար ժամանակային ու ինստիտուցիոնալ միջավայրային հնարավորություններ, որովհետև ամեն ինչ գտնվում է արագացումներով կերպափոխումների մեջ, չկա ոչ միայն հստակ տարանջատում հանրային կամքի ու այդպիսի թվացող մարդկանց քանակական կամքի միջև, առավել ևս՝ հստակ պատկերացում, թե դրանք ինչ են, այլ նաև բացակայում են

¹¹² Տե՛ս Յուրգեն Հաբերմաս, Հանրության կառուցվածքային փոփոխությունը. Հետազոտություններ բուրժուական հասարակության կատեգորիայի շուրջ, Երևան, 2021, էջ 569:

¹¹³ Տե՛ս Landshut, Volkssouveränität und öffentliche Meinung, in Festschrift für Laun, Hamburg 1953, էջ 583:

¹¹⁴ Տե՛ս Landshut, էջ 586:

հանրային կարծիքի՝ որպես իրական մեծության, ձևավորման բավարար օբյեկտիվ ու սուբյեկտիվ կառուցակարգեր/հիմքեր:

Ճիշտ է՝ մաթեմատիկայում կան մի քանի անհայտով հավասարումների լուծման բանաձևեր, սակայն դրանք սոցիալական միջավայրում կիրառելու առումով դեռևս պահանջում են սոցիոլոգիայի, քաղաքագիտության, իրավագիտության և այլ սոցիալական գիտությունների բնագավառում տասնամյակների էպիստեմալոգիական աշխատանք, որպեսզի կարողանան մոտենալ բազմակի անհայտներով ծանրաբեռնված միջավայրում հանրային կամքի ձևավորման կիրառական կառուցակարգերին:

Ուստի մինչև այդ ցանկալի մակարդակին հասնելը, մնում է կառչած մնալ գործող մի բանաձևից, համաձայն որի կառուցվածքների ու համակարգերի, այդ թվում՝ հանրային կամքի ձևավորումը սոցիալ-քաղաքական շարժընթացի անորոշության պայմաններում խորացնում են քառսն ու անկազմակերպվածությունը հանրույթում՝ այդկերպ ընդգծելով ժողովրդաիշխանության ձախտողումներն ու թերացումները, եթե ժողովրդաիշխանությունն ինքը, հանդես չի գալիս որպես միջոց՝ ձևավորելով ինստիտուցիոնալ ժողովրդավարության անհրաժեշտ կառուցակարգեր:

Այլ կերպ ասած՝ ժողովրդաիշխանությունն՝ առանց ինստիտուցիոնալ կառուցակարգերի, որոնք ունակ են քիչ թե շատ կազմակերպել հանրային կարծիքն ու արտահայտել հանրային կամքը՝ այդկերպ ամորտիզացիոն ազդեցություն ունենալ տարերային զարգացումների միջավայրում, նպաստում է հասարակության կազմակերպվածության անկմանը՝ *արտադրելով* անկառավարելի քանակությամբ ազատություն, որը սպասարկում է ոչ թե հանրային շահը, այլ խմբայինն ու մասնավորը՝ դրանով իսկ *նեղ միջանցքի* հավասարակշռությունը թեքելով դեպի սոցիալական անկարգավորվածություն՝ քառս:

Սակայն, հանրային կամքի ներկայացված խնդիրները դեռևս միակը չեն:

Հանրային կամքը փոփոխվող միջավայրում շատ ավելի դժվար է համադրելի դառնում հանրային շահի հետ, հատկապես երբ հանրային շահի որոշակիացումը ևս էական ազդեցության է

ենթարկվում միջավայրի արագացող փոփոխություններից:

Հանրային շահ և միջավայրի անորոշություն

Հանրային շահի բնորոշման հարցում էլ միանշանակ մոտեցում չկա: Այսպես, մասնագիտական բառարաններում դրանք ներկայացվում են տարբեր կերպ՝ «Հանրության ընդհանուր բարօրություն, որը երաշխավորում է ճանաչում և պաշտպանություն»¹¹⁵, «հասարակության՝ որպես ամբողջության, համար լավագույնը», միևնույն ժամանակ, «դատավորի, կառավարող անհատի կամ մի խումբ մարդկանց, օրինակ, օրենսդիրների կողմից որոշակիացվող սուբյեկտիվ որոշում այն մասին, թե որն է բոլոր մարդկանց համար ընդհանուր բարիքը»¹¹⁶:

Թեև հանրային շահը շեշտադրում է ավելի լավ քաղաքական պրակտիկա ունենալը, այն ո՛չ կարող է սպառիչ ձևով սահմանվել, ո՛չ էլ ձեռք բերվել: Ինչպես ընդհանուր շահը, այնպես էլ հանրային շահը կարող է օգնել մեզ հասկանալ և որոնել ընդհանուր նպատակի քաղաքականություն: Բայց դա կարող է օգտակար լինել միայն այն դեպքում, եթե հանրային շահ վկայակոչողները դա անում են՝ հստակ հասկանալով գործնականում դրա կիրառական սահմանափակումները և անկեղծ գիտակցումով, որ ոչ մի նորմատիվ կատեգորիա չի կարող հաղթահարել իրական աշխարհում գործելու էմպիրիկ անորոշությունները և բարոյական ռիսկերը: Միշտ ճիշտ է հարցնել, թե ինչպես կարող է առաջանալ հանրային շահը: Բայց դա այն հարցը չէ, որին կարող են պատասխանել հասարակագետները, փիլիսոփաները կամ աստվածաբանները: Պատասխանը մշակվում է քաղաքական մրցակցության մղման մեջ: Ոչ թե ավելի լավ տեսությունը, այլ ավելի լավ պրակտիկան է դեղամիջոցն այն հիվանդությունների դեմ, որոնք բաժին են ընկ-

¹¹⁵ Տե՛ս Bryan A. Garner (ed.), Black's Law Dictionary. 7th ed., St. Paul, Minn.: West Publishing Co., 1979:

¹¹⁶ Տե՛ս Steven H. Gifis, Law Dictionary. 4th ed. New York: Barron's Educational Services, 1996:

նում քաղաքական մարմնին¹¹⁷:

Այսինքն՝ տեսականորեն հռչակված հանրային շահը, որն այս կամ այն կերպ ավելի մոտ է հանրության քաղաքական զգացմունքներին և լեգիտիմացնում է քաղաքական ուժերին, երբ վերջիններս խոսում են դրա մասին և ձգտում են դրան, որևէ կերպ գործնականում բյուրեղանալու հնարավորություն չունի զուտ միայն այն պատճառով, որ հանրային կյանքը, քաղաքական պրակտիկան և երբեմն նաև՝ արժեքային կողմնորոշիչներն ավելի արագ են զարգանում, քան մի որոշ ժամանակ առաջ տեսականորեն որոշակիացված հանրային շահն ու դրա իրացման կառուցակարգերը:

Քաղաքական համակարգում գործնականում առկա մարտահրավերները, որոնք ներկայացվել են վերևում՝ զուգորդված քաղաքական, սոցիալ-տնտեսական և աշխարհակարգային արագ զարգացումներով, հանգեցնում են նրան, որ հանրային շահի որոշակիացման խնդիրը երկարաժամկետ հարթակներից տեղափոխվում է միջնաժամկետ և կարճաժամկետ հարթակներ, իսկ դրանց սահմանման և կենսագործման գործիքները կենտրոնանում են ոչ թե օրենսդիր, այլ գործադիր իշխանության ձեռքերում: Վերջինս էլ, ժողովրդաիշխանության գործիքակազմն օգտագործելով, դրանք դարձնում է քաղաքական ընտրությունների քննարկման թեմա և վերարտադրության գործիք:

Սա, իհարկե, «*չի նշանակում, որ այն, ինչ բխում է գործադիր իշխանության շահերից, ինքնաբերաբար պետք է դիտարկել որպես հանրային շահ*»¹¹⁸, թեև քիչ չեն այն քաղաքական համակարգերը, որոնք գործնականում գնացել են այս ուղղությամբ: Սակայն անգամ նման քաղաքական համակարգերում հանրային շահի որոշակիացման արդյունքները ներկայացվում են ոչ թե որպես առանձին քաղաքական ուժի կամ գործադիր իշխանության կամքի

¹¹⁷ Տե՛ս William A. Galston, *An old debate renewed: the politics of the public interest*, Journal of the American Academy of Arts and Science, Fall, 2007, pp. 10-19, էջ 19:

¹¹⁸ Տե՛ս Mason J in *Commonwealth of Australia v John Fairfax and Sons Ltd & ors* (1981) ALJR 45, էջ 49:

խողովակով ձևավորված, այլ որպես ամբողջ հանրության խորքային շահերի որոշակիացման և՛ արդյունք, և՛ վերջնանպատակ:

Այսպես. Հայաստանի Հանրապետության վերջին Ազգային անվտանգության ռազմավարությունը սահմանում է Հայաստանի հիմնարար ազգային շահերը.

«3.1 Հայաստանի անկախության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և Արցախի անվտանգության ապահովումը. Հայաստանի անկախությունը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը հայ ժողովրդի անվտանգության, զարգացման և նրա նպատակների իրագործման նախապայմանն են:

3.2 խաղաղության և միջազգային փոխգործակցության ամրապնդումը. Հայաստանի Հանրապետությունը, լինելով Արցախի անվտանգության երաշխավոր և իր ներդրումն ունենալով տարածաշրջանային և միջազգային անվտանգության ապահովման գործընթացում, խաղաղության և իրավահավասար փոխգործակցության ջատագով է:

3.3 Ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ապահովումը. Ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և իրավունքի գերակայությունը արդյունավետ պետական կառավարման համակարգի և երկրի ներքին դիմակայունության զարգացման երաշխիքն են: Հայաստանի Հանրապետությունում ժողովրդի ազատ կամարտահայտությունն իշխանության ձևավորման միակ աղբյուրն է:

3.4 ՀՀ քաղաքացիների անվտանգության և բարեկեցության ապահովումը, ինչպես նաև երկրի կայուն տնտեսական զարգացումը. ՀՀ քաղաքացիների անվտանգության և բարեկեցության ապահովումը, Հայաստանի տնտեսական դիմակայունության շարունակական զարգացումը միտված են հայրենիքում նրանց արժանապատիվ կյանքով ապրելուն և նպատակների իրագործմա-

նը»¹¹⁹.

Թե որքանով են այս կետերը ազգային շահի բյուրեղացում, հարցի մի կողմն է, սակայն այն, որ դրանք սահմանված են վերացական և զնահատման տեսանկյունից ոչ չափելի ձևաչափով, գործնականում խնդիրների են բախվում: Նման խնդրի լուծման համար, սովորաբար, օգտագործվում են սահմանված նպատակները:

Այսպես. Հայաստանի ազգային շահերի սպասարկման համատեքստում հռչակված են ազգային նպատակները.

«Հայ ժողովրդի ազգային նպատակներն են՝

- *Հայկական պետության հավիտենության համար անհրաժեշտ գաղափարական, անվտանգային, հանրային, քաղաքական, իրավական, տնտեսական, ժողովրդագրական, միջազգային, կրթական, ինտելեկտուալ, մշակութային՝ ինստիտուցիոնալ պայմանների ապահովումը:*

- *Արցախի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը՝ առանց որևէ սահմանափակման:*

- *Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, հետևանքների հաղթահարումը և վերացումը:*

- *Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անվտանգության, բարեկեցության, ազատության և երջանկության, ինչպես նաև հանրահռչակ մյուս իրավունքների ապահովումը և պաշտպանությունը:*

- *Օրենքի առաջ բոլորի հավասարությունը, կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, հանրային, պետական, տնտեսական կյանքում ներգրավվելու կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովումը, իրավունքների պաշտպանության և պարտականությունների կատարման վրա հիմնված ազգային միասնության հաստատումը:*

- *Հայ ժողովրդի ազգային-պետական ինքնության, ինքնու-*

¹¹⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն. դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, հուլիս, 2020, https://www.primeminister.am/_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf, էջ 8:

րոյնության և ինքնիշխանության պահպանումը և զարգացումը, ներառյալ ազգային ինքնության վերականգնումը և զարգացումը ազգային ինքնագիտակցությունից հեռացած և հեռացող հայության շրջանում, և ընդհանրապես՝ հայության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցողների թիվը էականորեն մեծացնելու միջոցով:

- Համահայկական ներուժի համախմբումը ազգային նպատակների իրագործման շուրջ՝ հանուն ազգային արժեքների պահպանման և զարգացման»¹²⁰:

Նպատակները և արդյունքների բաղադրիչը, որոնք հնարավոր է գնահատել ու չափել, հանրային շահի այն կողմն է, որն ամենաշատն է հիշատակվում գիտական գրականության մեջ:

Մինչդեռ գործընթացի և ընթացակարգի բաղադրիչը, այսինքն՝ այն, թե ինչ ճանապարհով են դրանք ձեռք բերվում, կարծես թե, քիչ է քննարկվում, բայց նույնքան կարևոր է:

Այս բաղադրիչը ներառում է.

- կիրառելի օրենսդրությանը (նրա տառին և ոգուն) համապատասխանելը.

- գործառույթների արդար և անաչառ իրականացում, ազնվությամբ և արհեստավարժությամբ.

- ընթացակարգային արդարության/բնական արդարադատության սկզբունքների պահպանում.

- ողջամիտ վարքագիծ;

- պատշաճ հաշվետվողականության և թափանցիկության ապահովում.

- կոռուպցիոն վարքագծի կամ լուրջ չարաշահումների բացահայտում.

- խուսափում կամ պատշաճ կերպով կառավարում այն իրավիճակների, երբ նրանց անձնական շահերը հակասում են կամ

¹²⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն. դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, հուլիս, 2020, https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf , էջ iv:

կարող են ողջամտորեն ընկալվել որպես հակասություն իրենց պաշտոնական պարտականությունների անաչառ կատարմանը հակառակ վարքագիծ, և

- իրենց ծառայողական գործառույթների կատարման ժամանակ ապաքաղաքականորեն հանդես գալը (չի տարածվում ընտրված պետական պաշտոնյաների վրա)¹²¹:

Հիմա, հաշվի առնելով այս գործոնները, Հայաստանի համար որոշակիացված ազգային շահերի սպասարկումը դիտարկենք գործնական մակարդակում:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվել է որպես ուղենիշային փաստաթուղթ անվտանգության քաղաքականության հիմնական ուղղությունները, սպառնալիքները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները սահմանելու համար: Այն ընդունվել է ՀՀ գործադիր իշխանության կողմից 2020 թվականի հուլիսին: Կիրառականության չափանիշների գնահատման համար անհրաժեշտ է որոշ ժամանակ: Հայաստանի պարագայում դրա հնարավորությունը չեղավ, քանի որ ընդունումից երկու ամիս անց Ադրբեջանի ագրեսիայով սկսած Արցախյան 44-օրյա պատերազմի աղետալի արդյունքների, Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության արդեն մի քանի տարի շարունակ ակնհայտ խախտման, Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի Կանոնադրությամբ սահմանված և միջազգային իրավունքի *jus cogens* սկզբունք համարվող ուժի կիրառման ու դրա սպառնալիքի շարունակական խախտման, ՀՀ-ի կողմից կոլեկտիվ անվտանգության համակարգերի (ՀԱՊԿ) աշխատացնելու անհաջող փորձերի և սեփական ուժերով առանձին հատվածներում ինքնապաշտպանական մարտերի միջոցով որոշակի հավասարակշռության հաստատման արդյունքում Հայաստանի Հանրապետության նույն գործադիր իշխանությունը, որ ներկայացված է նույն քաղաքական ուժի կողմից, նույն ղեկավարով, ով ստորագրել է նույն Ազ-

¹²¹ St' u Chris Wheeler, *The Public Interest we know it's important, but do we know what it means*, AIAL Forum No. 48, 2006, 12-25, էջ 13-14:

գային անվտանգության ռազմավարությունն, առնվազն հանրային խոսքում հետքայլ կատարեց իր իսկ կողմից հռչակած որոշ ազգային շահերից ու նպատակներից:

Սա հենց այն խնդրի վառ ապացույցն է, որ աշխարհակարգային և տարածաշրջանային անվտանգության՝ միջավայրի կտրուկ փոփոխությունները հանգեցնում են գործնական քաղաքականության բնագավառում կտրուկ փոփոխությունների շատ կարճ ժամանակահատվածում, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ ազգային շահերի որոշակիացումը տեսական մակարդակից հաճախ է իջնում խիստ պրակտիկ՝ գործնական, մակարդակ՝ պայմանավորված արտաքին՝ անվտանգային և ներքին՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական-մրցակցային կարճաժամկետ գործոններով, որոնք ավելացնում են քաղաքականության իրականացման անորոշության մակարդակը:

Այստեղ հարց է առաջանում, թե որքանով է պատրաստ քաղաքական համակարգն՝ իր պետական, կուսակցական ու ոչ կուսակցական կառուցակարգերով, նման մարտահրավերների, երբ վերանայման հարց է առաջանում հանրային շահերի առաջնահերթություններում կամ դրանցից որոշներից հրաժարվելու հարցում:

Որոշակի հանգամանքներում հանրային շահի կիրառման գնահատումն առաջարկվում է իրականացնել եռաստիճան գործընթացով՝

1. *համապատասխան բնակչության նույնականացում՝ «հանրություն», որի շահերը որոշում կայացնելիս պետք է հաշվի առնվեն,*
2. *հիմնախնդրի կամ որոշման նկատմամբ «հանրային շահերի» նույնականացում, որը կիրառելի է խնդրի կամ որոշման համար,*
3. *յուրաքանչյուր կիրառելի «հանրային շահի» գնահատում և արժևորում, ներառյալ հակասական կամ մրցակցող «հանրային շահերի» հավասարակշռում¹²²:*

¹²² Տե՛ս Chris Wheeler, էջ 18:

Անգամ այս, ոչ այդքան խիստ եռաստիճան գործընթացով գնահատման պարագայում որոշակիացված ցանկացած հանրային շահի կենսագործում ողջախոհ քննադատողի կողմից կարծանանա բացասական գնահատականի, քանի որ անգամ գնահատման գործընթացում անորոշության մակարդակը բավականին բարձր է:

Սա հանգեցնում է նրան, որ գրականության մեջ հաճախ լսվում է այն կարծիքը, որ հանրային շահի որոշակիացումը կամ անգամ դրա սահմանումը հնարավոր չէ:

Ուստի առաջարկվում է հանրային շահը դիտարկել որպես որոշումների կայացման նպատակ կամ մոտեցում, որը պետք է որդեգրվի, այլ ոչ թե կոնկրետ և անփոփոխ արդյունք, որին պետք է հասնել: Տերմինի իմաստը կամ տերմինի կիրառմամբ մատնանշված մոտեցումը մասնավոր, անձնական, տեղական կամ կուսակցական շահերից հեռու քննարկումն ու գործողությունն ուղղորդելն է՝ ավելի լայն (այսինքն՝ ավելի «հանրային») վերաբերելի հարցերի նկատմամբ:

Այս հայեցակարգի կիրառումը առանձին խնդիր է, և «ի՞նչն է բխում հանրային շահից» հարցի պատասխանը կտարբերվի կախված կոնկրետ հանգամանքներից, որոնցում ծագում է հարցը:

Առաջարկվում է հանրային շահի երկու առանձին բաղադրիչ՝ գործընթաց/ընթացակարգ և նպատակներ/արդյունքներ բաղադրիչները: Նպատակների/արդյունքի բաղադրիչի շրջանակներում ցանկացած իրավիճակում բացահայտելը, թե ինչն է բխում հանրային շահերից, հայեցողական լիազորություններ իրականացնող պետական պաշտոնյաների առաջնային պարտավորությունն է: Սա պարզ խնդիր չէ և գործնականում ներառում է վերոնշյալ եռաստիճան գործընթացով հանրային շահի կիրառման գնահատումը:

Թեև շատ դեպքերում հարցերից յուրաքանչյուրին հստակ պատասխան չի լինի, կարևորն այն է, որ բարեխղճորեն փորձ է արվում գտնել համապատասխան պատասխաններ, և որ որոշում կայացնողը կարողանա ցույց տալ, որ համապատասխան մոտե-

ցում է պահպանվել և բոլոր վերաբերելի հարցերը քննարկվել են¹²³։

Այսինքն, ամբողջ ծանրության կենտրոնը ժողովրդախիշխանության տրամաբանության շրջանակներում տեղափոխվում է գործընթացի վրա։ Եթե գործընթացում, որի արդյունքում որոշում է կայացվում, պահպանվել են որոշակի պայմաններ՝ հանրային շահի գիտակցման ու սպասարկման իմաստով, ապա արդյունքն առավելագույնս մոտ է լինելու հանրային շահին։ Եթե ոչ, ապա, անկախ արդյունքից, հանրային շահը չի սպասարկվել։

Սա շատ նման է Ընդհանուր (անգլոսաքսոնական) իրավունքի համակարգում գործող իրավական տրամաբանությանը, որը շեշտադրում է գործընթացը՝ որպես առավելագույն ճշմարտության կամ արդարադատության շահի բացահայտման աղբյուր, ինչն ընդգծում է նախադեպային իրավունքի գերակայությունն ամբողջ իրավունքի համակարգում։ Սակայն նույն Ընդհանուր իրավունքի բովում զարգացած պառլամենտարիզմ (օրինակ՝ ԱՄՆ-ի, անգլիական պառլամենտարիզմը) այսօր առաջարկում է նաև այլ մոտեցում, որն իրավունքի և ճշմարտության հայտնաբերման դեդուկտիվ մեթոդի վրա է շեշտադրում դնում՝ սկզբունքից կամ գլխավոր նորմից դեպի կիրառում (պառլամենտը՝ որպես օրենսդիր, անգամ՝ սահմանադիր)։

Ընդունելով ի գիտություն հանրային շահի որոշակիացման գործընթացի վրա շեշտադրումով մոտեցումը՝ միևնույն ժամանակ պետք է նշել, որ անկայուն ու հավասարակշռությունից դուրս գտնվող սոցիալ-քաղաքական միջավայրերում, որտեղ գործընթացները շատ ավելի արագ են ընթանում, քան կարելի է դրանք ամբողջությամբ ճանաչել ու գիտակցել, այս մեթոդը, միգուցե, չկարողանա նպաստել հանրային շահի որոշակիացման գործում անորոշության քանակի նվազմանը։ Ուստի այն պետք է զուգորդվի սկզբունքային մակարդակում որոշակիացված հանրային շահի պատկերացումներով, որոնք, ի դեպ, չեն կարող որոշակիացվել անկայուն միջավայրի ժողովրդախիշխանության դասական կա-

¹²³ St' u Chris Wheeler, էջ 24։

ռուցակարգերով զուտ այն պատճառով, որ անկայունությունը քաղաքական համակարգին (նախորդ պարագրաֆում ներկայացված գործոնների ուժով) թույլ չի տալիս որոշում ընդունող մարմիններում ունենալ մարդկանց, ովքեր բավարար գիտելիք, փորձ, կարողություն և/կամ ցանկություն ունեն՝ նման խնդիր լուծելու առումով:

Արդյունքում ստացվում է պարադոքսալ մի վիճակ: Պետականության կայացած ինստիտուցիոնալ համակարգ, սահմանադրաիրավական մշակույթ և պետական կառավարման ավանդույթներ չունեցող հանրույթներում ժողովրդաիշխանությունը՝ որպես որոշումների կայացման ամենաարդյունավետ միջոց, արագ փոփոխվող սոցիալ-քաղաքական միջավայրում, ձախողում է, երբ տարվում է որոշումների ընդունման ձևական կողմնորոշիչներով, ինչի արդյունքում որոշումների կայացմանը մասնակցում են ոչ միայն տվյալ հանրույթի փորձառու և գիտելիք ունեցող ներուժի հետ կապ չունեցող ուժեր, այլ նաև վերանում է հանրային շահի գիտակցման և որոշակիացման գործնական հնարավորությունները:

Նման իրավիճակների առաջացման հավանականությունը փոքրանում է անգամ նույն անկայուն և արագ փոփոխվող միջավայրերի պարագայում, երբ հանրությունն ունենում է պետականության և ժողովրդաիշխանության կայացած ինստիտուցիոնալ համակարգ, սահմանադրաիրավական մշակույթ և պետական կառավարման ավանդույթներ: Նման դեպքերում ժողովրդաիշխանությունը նպաստում է արդյունավետ որոշումների կայացման ամբողջ ընթացակարգին, անգամ եթե քաղաքական համակարգի արդի գործնական մարտահրավերները շարունակաբար խորանում են:

Այս պարագայում ինստիտուցիոնալ կայացած համակարգն ու գործող կառուցակարգերն ամորտիզացիոն ազդեցություն են ունենում զարգացման տուրբուլենտային, գործընթացների արագացման, երբեմն էլ՝ արժեքային կողմնորոշիչների կերպափոխման ռեժիմ մուտք գործած սոցիալ-քաղաքական համակարգերի՝ հասարակությունների, պետականությունների համար:

§ 3. Ժողովրդախիշխանության կերպափոխումների իրավաքաղաքական արդի մարտահրավերները կամ եզրակացության փոխարեն

Վերոգրյալի լույսի ներքո, հաշվի առնելով նաև ժողովրդախիշխանության կերպափոխումների առկա շարժընթացը, փորձենք որոշակիացնել մի քանի արդիական մարտահրավերներ, որոնք գործնականում ծառայել են ժամանակակից հասարակությունների և պետականությունների առջև, և որոնց լուծման արդյունքներից է կախված նաև ժողովրդախիշխանության ապագան:

1. Հանրային քաղաքականության կենսագործումը հեռանում է ժողովրդախիշխանության սկզբնական և իրական իմաստից, երբ հասարակությունում և պետությունում չեն ձևավորվում դիմադրողականության և զսպող կառուցակարգեր քաղաքական համակարգի վրա ազդող ժամանակակից ազդեցության հետևյալ գործոնների համար`

1.1. քաղաքականության կուսակցականացումը վերջիններիս և ոչ քաղաքական կազմակերպությունների ձգնաժամի պայմաններում,

1.2. քաղաքականության կենցաղայնացումը պոպուլիզմի և հեղոնիզմի աճի պայմաններում,

1.3. ազգային պետությունների ինքնիշխանության թուլացումը գլոբալիզացիայի և միգրացիոն հոսքերի պայմաններում,

1.4. ընտրության ինստիտուտի ձևականացումը պոպուլիզմի, մեդիայում անորակ տեղեկատվության աճի, տեխնոլոգիական գործիքներով ազատ կամքի ձևավորման սահմանափակման պայմաններում:

2. Հանրային կամքի ձևավորման գործող կառուցակարգերը հեռանում են հանրային շահի որոշակիացման հնարավորությունից, երբ հասարակությունում և պետությունում չեն ձևավորվում դիմադրողականության և զսպող կառուցակարգեր սոցիալ-քաղաքական գործընթացների արդի արագացումներով պայմանավորված անորոշության քանակի (անկարգավորվածության, քաոսի)

աճի պայմաններում:

Այս խտացված մարտահրավերների հետ շարունակական աշխատանքի բացակայության և դրանց չհաղթահարման պարագայում ժողովրդաիշխանությունը դադարում է հանրային կամքի ձևավորման ու հանրային շահի սպասարկման արդյունավետ միջոց լինելուց, ինչի արդյունքում նրա հեղինակությունը շարունակաբար անկում է ապրում՝ առաջացած վակուումը լցնելու հնարավորություն տալով ոչ ժողովրդավարական վարչաձևերին (ավտորիտարիզմ, տոտալիտարիզմ և այլն), պատրաստել իրենց համար ինքնադրսևորման պարարտ հող և սեփական իշխանության հաստատման հիմնավորումներ: Իսկ պատմությունը ցույց է տալիս, որ ոչ ժողովրդավարական վարչաձևերն իշխանություն ստանալու առաջին փուլում շատ ավելի մեծ քանակության ծափողջյունների են արժանանում հանրության կողմից, որին իրենք հետագայում պետք է զրկեն ազատությունից, քան նույն ժողովրդաիշխանությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Գլուխ 1. ԺՈՂՈՎՐԴԱԻՇՆԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդաիշխանությանն առնչվող հարցերի ուսումնասիրության արդյունքում հեղինակը հանգել է հետևյալ եզրահանգումների՝

✓ «Ժողովուրդ» հայեցակարգի առանցքային հատկանիշը, ի թիվս իրավաբանական գրականության մեջ նշվածների, անհրաժեշտ է դիտարկել *որոշակի աշխարհագրական տարածքի վրա համատեղ գոյի, համագործակցության, համագոյակցության, ճակատագրի համատեղ կերտման ու բարգավաճման կազմակերպումը*: Կարծում ենք, հենց այս հատկանիշների հաշվառմամբ է միայն հնարավոր, ժողովրդի՝ որպես բարձրագույն իշխանության կրողի մեջ ներառելով, ազգերին, ազգություններին, սոցիալական տարբեր խմբերին և ընդհանրապես հասարակությանը, ապահովել մարդու կյանքը, անվտանգությունը, համագործակցությունը և համագոյակցությունը, զարգացումն ու բարգավաճումը՝ որպես մարդու բնական էության լիակատար դրսևորում:

✓ Իշխանությունը չպետք է անտեսի քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորված չլինելու հանգամանքը և ապավինի դրանց ինքնաձևավորմանը: Ընդհակառակը, նա պետք է ձեռնամուխ լինի հասարակության ինքնագիտակցության բարձրացմանը և քաղաքացիական հասարակության մտածելակերպի ձևավորմանը:

✓ Հանրաքվեի՝ որպես ժողովրդաիշխանության իրականացման անմիջական ձևի արդյունավետությունն ապահովելու նպատակով ներպետական օրենսդրության մեջ այդ ինստիտուտի իրավական ամրագրման համար անհրաժեշտ է համալիր կերպով հաշվի առնել աշխարհաքաղաքական հնարավոր իրողությունները, երկրում առկա ժողովրդավարական ավանդույթները:

**Գլուխ 2. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԻՇՆԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՅԱՑՈՒՄԸ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Իրավաքաղաքական արդի մարտահրավերների համատեքստում ընտրական համակարգի ընտրության առնչությամբ հեղինակը հանգել է հետևյալ եզրահանգումների՝

✓ Պետությունները հայեցողության լայն շրջանակ ունեն ընտրական համակարգերի միջև ընտրություն կատարելու հարցում, եթե պահպանվում են հիշյալ բնագավառին առնչվող միջազգային չափանիշները:

✓ Ընտրական համակարգի ընտրությունն ու իրացման պրակտիկան բացառիկ կարևորություն ունեն ներկայացուցչական ժողովրդաիշխանության երաշխավորման և պետության քաղաքական կառուցվածքի կանխորոշման տեսանկյունից:

✓ Նույն կանոնների ու սկզբունքների վրա կառուցված ընտրական համակարգերը տարբեր երկրներում տարբերվող ազդեցություն են ունենում ընտրությունների արդյունքները կանխորոշելու, ուստի նաև՝ ներկայացուցչականության սկզբունքի երաշխավորման տեսանկյունից: Հետևաբար, առաջնահերթը հիշյալ համատեքստում ոչ թե գոյություն ունեցող այս կամ այն ընտրական համակարգի մեխանիկական արտատպումն է, այլ ընտրական համակարգի նախատեսումը՝ կոնկրետ պետության պատմությունը, իրավական, քաղաքական համակարգերն ու մշակույթը, ավանդույթները հաշվի առնելու արդյունքում:

✓ Առանցքային է այնպիսի ընտրական համակարգի նախատեսումը, որը կարող է երաշխավորել համապատասխան իրավակարգավորումների գրագիտության, ընտրությունների օրինականության և արդյունքների լեգիտիմության միջև պատշաճ հավասարակշռություն այն տեսանկյունից, որ ընտրովի մարմիններում թեկնածուների/քաղաքական ուժերի միջև տեղերի բաշխման պատկերը համարժեք լինի ընտրողների շրջանում նրանց վայե-

լած իրական աջակցությանը: Այլ կերպ՝ ընտրական համակարգը պետք է ընտրվի և իրացվի այն տրամաբանությամբ, որպեսզի ընտրական գործընթացների օրինականության և ընտրվող մարմինների լեգիտիմության միջև չառաջանա անջրպետ, և ընտրովի մարմինների կազմը, դրանցում ներկայացված քաղաքական ուժերն ու անձինք ներկայացված լինեն՝ քաղաքացիների կողմից վայելած աջակցությանը համապատասխան:

✓ Ընտրական համակարգի ընտրությունն ու փոփոխությունը պետք է լինի քաղաքական ուժերի և հանրության միջև փոխհամաձայնության (կոնսենսուսի) արդյունք:

✓ Քաղաքական իշխանությունն ու բոլոր քաղաքական ուժերը պետք է բարեխղճորեն իրացնեն ընտրական օրենսդրությունը:

✓ ՀՀ ԱԺ ընտրությունների տեսանկյունից անհրաժեշտ է արմատավորել այնպիսի համակարգ, որը կարող է երաշխավորել խորհրդարանի (արդյունքում նաև՝ կառավարության) «արդյունավետ կառավարելիության», «կայունության» և «ներկայացուցչականության» գաղափարների միջև պատշաճ հավասարակշռություն՝ ստեղծելով կուսակցական համակարգի կայացման համար անհրաժեշտ նախադրյալներ:

✓ Առանցքային նշանակություն ունի այնպիսի ընտրական համակարգի ներդրումն ու կատարելագործումը, որը կարող է երաշխավորել ընտրությունների օրինականության և արդյունքների լեգիտիմության միջև պատշաճ հավասարակշռություն այն տեսանկյունից, որ խորհրդարանում քաղաքական ուժերի միջև տեղերի բաշխման պատկերը համարժեք լինի ընտրողների շրջանում նրանց վայելած իրական աջակցությանը: Հակառակ պարագայում անխուսափելի է դառնալու ներկայացուցչական ժողովրդաիշխանության էության ձևախեղումն ու ընտրությունների նկատմամբ հանրային վստահության մակարդակի ընդհանուր անկումը:

✓ Հայաստանյան մշակույթն ու ավանդույթները հաշվի առնելով՝ կարևորում ենք այնպիսի համակարգի արմատավորումը, որը կարող է երաշխավորել տարբեր տարածաշրջաններից Ազ-

գային ժողովում պատգամավորների հնարավորինս համաչափ ներկայացվածությունը:

✓ Կարծում ենք, որ Ազգային ժողովի ընտրությունների կազմակերպումը բացառապես «փակ ցուցակների» միջոցով համամասնական ընտրակարգի հիման վրա չի համապատասխանում աշխատանքի շրջանակներում ներկայացված գաղափարների հիմքում ընկած տրամաբանությանը: Մինևույն ժամանակ, կուսակցական համակարգի կայացման տեսանկյունից կարևորում ենք համամասնական ընտրական համակարգի առկայությունն ու էական դերակատարությունը: Ուստի, կարծում ենք, որ Ազգային ժողովի կազմավորման նպատակով կիրառվող ընտրական համակարգի առումով կարող են կիրառելի լինել հետևյալ երկու հիմնական մոդելները՝ 1. ամբողջապես համամասնական ընտրական համակարգի վրա հիմնված ընտրություն՝ «փակ ցուցակների» բացառմամբ և նախընտրած թեկնածուների ընտրության հարցում ընտրողների վճռորոշ ազդեցությունը երաշխավորող տարատեսակ մեթոդների հնարավոր կիրառմամբ, օրինակ՝ գերադասելի, բացասական քվեի կամ այլ համանման մեթոդների կիրառում, 2. համամասնական և մեծամասնական ընտրական համակարգերի համադրում՝ համամասնական ընտրական համակարգով ընտրվող պատգամավորների առավել մեծ թիվ նախատեսելով:

✓ Ի տարբերություն համամասնական այնպիսի ընտրական համակարգի, երբ ընտրողը կարող է էական դերակատարություն ունենալ ցուցակում ներկայացված թեկնածուների դասակարգման, այս կամ այն թեկնածուի ընտրության հարցում, «փակ ցուցակների» միջոցով ընտրությունների կազմակերպման պայմաններում կուսակցության/դաշինքի կողմից ներկայացված ցուցակով ընտրված պատգամավորի կողմից խմբակցությունից դուրս գալը կարող է հանգեցնել խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության և այնպիսի իրավիճակի, երբ անկախ ժողովրդի կամքից՝ փոխվում է վերջինիս ազատ կա-

մասրտահայտմամբ ձևավորված քաղաքական հավասարակշռությունն օրենսդիր մարմնում: Իսկ այդ իրավիճակը չի բխում իրավական պետության և ժողովրդաիշխանության սահմանադրական հիմնարար սկզբունքներից:

✓ Չափազանց կարևոր է ընտրական այնպիսի կանոնների ամրագրումը, որոնք կարող են նպաստել կուսակցությունների խոշորացմանն ու կուսակցական համակարգի կայացմանը՝ միևնույն ժամանակ չհանգեցնելով քաղաքական բազմազանության իսպառ վերացման: Այդ տեսանկյունից առանցքային է, օրինակ՝ ընտրվելու համար անհրաժեշտ այնպիսի ընտրական շեմի նախատեսումը, որը կարող է երաշխավորել արդարացի ներկայացվածության և կառավարության կայունության միջև պատշաճ հավասարակշռություն: Ընդ որում՝ այդ հարցի առնչությամբ որոշում կայացնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ պետությունում առկա քաղաքական և ինստիտուցիոնալ ամբողջ համատեքստը: Կուսակցությունների/դաշինքների ընտրական ցուցակներում ընդգրկվող թեկնածուների նվազագույն թիվը ևս պետք է նախատեսվի այն տրամաբանությամբ, որպեսզի մի կողմից նպաստի կուսակցական համակարգի հզորացմանն ու կայունացմանը, իսկ մյուս կողմից խոչընդոտ չդառնա քաղաքական բազմազանության երաշխավորման տեսանկյունից:

✓ Ցանկացած համակարգային փոփոխություն, այդ թվում ընտրական համակարգի փոփոխություններ կատարելուց առաջ/դրա ընթացքում անհրաժեշտ է պատշաճ մեթոդաբանությամբ նախապատրաստել, իրազեկել հանրությանը, վերապատրաստել համապատասխան գործընթացների տեսանկյունից պատասխանատու սուբյեկտներին:

✓ Առանցքային նշանակություն ունի ՏԻՄ ընտրությունների համատեքստում այնպիսի ընտրական համակարգի ներդրումն ու կատարելագործումը, որը կարող է երաշխավորել ընտրությունների օրինականության և արդյունքների լեգիտիմության միջև պատշաճ հավասարակշռություն այն տեսանկյունից, որ տեղական ինքնակառավարման մարմիններում տարբեր ուժերի միջև

տեղերի բաշխման պատկերը համարժեք լինի ընտրողների շրջանում նրանց վայելած իրական աջակցությանը: Հակառակ պարագայում անխուսափելի է ներկայացուցչական ժողովրդաիշխանության էության ձևախեղումն ու ընտրությունների նկատմամբ հանրային վստահության մակարդակի ընդհանուր անկումը:

✓ Կարծում ենք, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպումը բացառապես «փակ ցուցակների» միջոցով համամասնական ընտրակարգի հիման վրա չի համապատասխանում աշխատանքի շրջանակներում ներկայացված գաղափարների հիմքում ընկած տրամաբանությանը: Մինևույն ժամանակ, կուսակցական համակարգի կայացման տեսանկյունից համամասնական ընտրական համակարգի առկայությունն ու էական դերակատարությունը պատշաճ մեթոդաբանությամբ իրացվելու պայմաններում կարող են դրական հետևանքների հանգեցնել: Ուստի, կարծում ենք, որ եթե պահպանվի ՏԻՄ մարմինների կազմավորման նպատակով կիրառվող համամասնական ընտրական համակարգը, ապա այդ համատեքստում պետք է բացառվեն «փակ ընտրական ցուցակները» և ընտրողները պետք է վճռորոշ ազդեցություն ունենան նախընտրած թեկնածուների ընտրության հարցում:

✓ Չափազանց կարևոր է ընտրական այնպիսի կանոնների ամրագրումը, որոնք կարող են նպաստել կուսակցությունների խոշորացմանն ու կուսակցական համակարգի կայացմանը՝ մինևույն ժամանակ չհանգեցնելով քաղաքական բազմազանության իսպառ վերացման: Այդ տեսանկյունից առանցքային է, օրինակ՝ ընտրվելու համար անհրաժեշտ այնպիսի ընտրական շեմի նախատեսումը, որը կարող է երաշխավորել արդարացի ներկայացվածության և ՏԻՄ մարմինների կայունության միջև պատշաճ հավասարակշռություն: Ընդ որում՝ այդ հարցի առնչությամբ որոշում կայացնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ պետությունում առկա քաղաքական և ինստիտուցիոնալ ամբողջ համատեքստը:

✓ ՏԻՄ ընտրական համակարգի ընտրությունը/փոփոխությունը պետք է լինի քաղաքական ուժերի և հանրության միջև լայն

փոխհամաձայնության (կոնսենսուսի) արդյունք: Ավելին, կոնկրետ ընտրական համակարգի ընտրության գործընթացում անհրաժեշտ է բացառել այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ այդ համակարգը վեր է ածվում սոսկ իշխող քաղաքական ուժի շարունակական վերարտադրության և տեղերում մեծամասնություն ձեռք բերելու մեխանիզմի:

✓ ՏԻՄ ընտրությունների պարագայում կարևոր է ընտրական համակարգի գործարկման համատեքստում կողմնակի օբյեկտիվ դիտորդի մոտ այնպիսի տպավորության ձևավորումը, որ ընտրություններն ու դրանց արդյունքները հնարավորություն են տալիս երաշխավորելու ՏԻՄ մարմինների կողմից տեղական **ինքնակառավարման** սահմանադրական առաքելության պատշաճ իրականացումը՝ **ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ** համայնքային նշանակության հարցերը լուծելու միջոցով:

✓ Նշված բոլոր փոփոխությունները կատարելիս և մոդելների միջև ընտրություն կատարելիս պետք է նկատի ունենալ կուսակցական համակարգի կայունության երաշխավորման և ժողովրդավարացման համար անհրաժեշտ կառուցակարգերի ներդրման ու շարունակական զարգացման բացառիկ դերակատարությունը: Ավելին, հարկ է նկատի ունենալ, որ առանց նշյալ կառուցակարգերի գործադրման ընտրական համակարգի որևէ փոփոխություն չի ծառայելու իր հիմնական նպատակին:

✓ Ցանկացած համակարգային փոփոխություն, այդ թվում ընտրական համակարգի փոփոխություններ կատարելուց առաջ/դրա ընթացքում անհրաժեշտ է պատշաճ մեթոդաբանությամբ նախապատրաստել, իրազեկել հանրությանը, վերապատրաստել համապատասխան գործընթացների տեսանկյունից պատասխանատու սուբյեկտների:

Գլուխ 3. ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԵՆՍԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈՒՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Արդի սոցիալ-քաղաքական միջավայրում առկա նոր մարտահրավերների ուսումնասիրության լույսի ներքո հեղինակը հանգել է հետևյալ եզրահանգումների՝

✓ Հանրային քաղաքականության կենսագործումը հեռանում է ժողովրդախիշխանության սկզբնական և իրական իմաստից, երբ հասարակությունում և պետությունում չեն ձևավորվում դիմադրողականության և զսպող կառուցակարգեր քաղաքական համակարգի վրա ազդող ժամանակակից ազդեցության հետևյալ գործոնների համար՝

- քաղաքականության կուսակցականացումը վերջիններիս և ոչ քաղաքական կազմակերպությունների ձգնաժամի պայմաններում,

- քաղաքականության կենցաղայնացումը պոպուլիզմի և հեղոնիզմի աճի պայմաններում,

- ազգային պետությունների ինքնիշխանության թուլացումը գլոբալիզացիայի և միգրացիոն հոսքերի պայմաններում,

- ընտրության ինստիտուտի ձևականացումը պոպուլիզմի, մեդիայում անորակ տեղեկատվության աճի, տեխնոլոգիական գործիքներով ազատ կամքի ձևավորման սահմանափակման պայմաններում:

✓ Հանրային կամքի ձևավորման գործող կառուցակարգերը հեռանում են հանրային շահի որոշակիացման հնարավորությունից, երբ հասարակությունում և պետությունում չեն ձևավորվում դիմադրողականության և զսպող կառուցակարգեր սոցիալ-քաղաքական գործընթացների արդի արագացումներով պայմանավորված անորոշության քանակի (անկարգավորվածության, քառսի) աճի պայմաններում:

✓ Այս խտացված մարտահրավերների հետ շարունակական աշխատանքի բացակայության և դրանց չհաղթահարման պարա-

գայում ժողովրդաիշխանությունը դադարում է հանրային կամքի ձևավորման ու հանրային շահի սպասարկման արդյունավետ միջոց լինելուց, ինչի արդյունքում նրա հեղինակությունը շարունակաբար անկում է ապրում՝ առաջացած վակուումը լցնելու հնարավորություն տալով ոչ ժողովրդավարական վարչաձևերին (ավտորիտարիզմ, տոտալիտարիզմ և այլն), պատրաստել իրենց համար ինքնադրսևորման պարարտ հող և սեփական իշխանության հաստատման հիմնավորումներ: Իսկ պատմությունը ցույց է տալիս, որ ոչ ժողովրդավարական վարչաձևերն իշխանություն ստանալու առաջին փուլում շատ ավելի մեծ քանակության ծափողջյունների են արժանանում հանրության կողմից, որին իրենք հետագայում պետք է զրկեն ազատությունից, քան նույն ժողովրդաիշխանությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն 1995թ. (փոփոխություններով)
2. «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք (փոփոխություններով) 25. 05. 2016թ.
3. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ // Մշակվել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>
4. Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն. դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, հուլիս, 2020, https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf
5. Մխիթարյան Ս. Քաղաքական ինստիտուտների ծևավորումը Հայաստանի Հանրապետությունում // «21-րդ Դար», թիվ 1 (15), 2007, <https://cyberleninka.ru/article/n/FORMIROV%D0%90NIE-POLITICHESKIKH-INSTITUTOV-V-RESPUBLIKE-%D0%90RMENIYA-68/viewer>
6. ՀՀ սահմանադրական իրավունք 2, դասագիրք բուհերի համար, պրոֆ Ն. Ա. Այվազյանի խմբագրությամբ, Երևան 2016
7. Սիմոնյան Տ., *Իրավունքի սիներգետիկայի հայեցակարգի զարգացման պատմահրավակական նախադրյալները*, 2013 | Հոդված, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Շահեն Նիկոլայի Պետրոսյանի ծննդյան 100-ամյակին, ԵՊՀ հրատակչություն, Երևան, 2013
8. Սիմոնյան Տ.Վ., *Ազատության փոփոխվող բովանդակությունը XXI դարի իրավունքի համալիրությունում*, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամենամյա գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2017, էջ 29-41
9. Յուրգեն Հաբերմաս, *Հանրության կառուցվածքային փոփոխությունը. Հետազոտություններ բուրժուական հասարակույթ*

յան կառնդորդիայի շուրջ, Երևան, 2021

10.Ժան Ժակ Ռոսո, *Հասարակական դաշինք*, Երևան, 2000

11.Дарон Аджемоглу, Джеймс А. Робинсон, *Узкий Коридор: Годударства, Общества и Судьба Свободы*, Москва, 2021

12.Борисов И., Головин А., Игнатов А. *Выборы в мире: Избирательные системы*, С-Пбг, 2015, [http://www.roiip.ru/images/data/gallery/0_8617_lzbiratel_nie_sistemi_postranichno_\(2\).pdf](http://www.roiip.ru/images/data/gallery/0_8617_lzbiratel_nie_sistemi_postranichno_(2).pdf)

13.Моисеева И. Ю., *Концепция самоорганизации в контексте постнеклассической парадигмы*, Оренбургский государственный университет, Вестник, ОГУ, 11, 2005

14.Д. А. Керимов, *Методология права*, Предмет, Функции, Проблемы, Философии Права, Москва 2008

15.*Теория государства и права. Ч. 1. Теория государства*
Под ред. А. Б. Венгерова, Москва, 1996

16.Аршинов В. И., *Синергетика времени // Синергетика времени*. — М.: Репроникс, 2007

17.Юридический словарь., *Практический справочник*: М.: Русский язык. З. Е. Александрова. Толковый словарь Ушакова. Д.Н. Ушаков. 1935 1940

18.Малахов В. С. *Народ // Новая философская энциклопедия / Ин-т философии РАН; Нац. обществ.-науч. фонд; Предс. научно-ред. совета В. С. Стёпин, заместители предс.: А. А. Гусейнов, Г. Ю. Семигин, уч. секр. А. П. Огурцов. 2-е изд., испр. и допол. М.: Мысль, 2010*

19.Бромлей Ю.В. *Очерки теории этноса*. Изд. Наука, М., 1983

20.Макс Вебер, *Хозяйство и общество*, том 1, М., М. : Изд. дом Высшей школы экономики, 2016

21.Эрих Фромм, *Человек для самого себя*, М., 2009

22.Кант. *Сочинения*. В шести томах. Том 4. Часть 1

23.Энтони де Ясаи, *Государство*, Москва: Челябинск: ИРИ-СЭН, Социум, 2016

24.Суверенитет государственный // *Большая советская энциклопедия / Гл. редактор А. М. Прохоров. 3-е издание. М.:*

Издательство Советская энциклопедия, 1976. Т. 25

25. Большой французско-русский словарь АБВУУ Lingvo / Главный редактор М. Н. Сизых. М.: АБИ Пресс, 2010

26. Моисеев А. А. Суверенитет государства в международном праве. М., Восток-Запад, 2009

27. Шевцов В. С. Национальный суверенитет (проблемы теории и методологии). М.,: Юрид. лит., 1978

28. Ушаков Н. А. Суверенитет в современном международном праве. М.: Изд. ИМО, 1963

29. Руссо Ж.-Ж. Об общественном договоре, или Принципы политического права = Du contrat social ou Principes du droit politique // Об общественном договоре. Трактаты / Перевод с франц. А. Д. Хаятина и В. С. Алексеева-Попова. М.,: КАНОН-пресс, «Кучково поле», 1998. Книга 1, глава VI и далее

30. Левин И.Д. Суверенитет. Спб.: Юридический центр Пресс, 2003

31. Черниченко С.В. Государство как личность, субъект международного права и носитель суверенитета // Российский ежегодник международного права. Спб.,: Издательский дом СПбГУ, 1995

32. Крестовская Н.Н., Цвиркун А.Ф. История политических и правовых учений: Курс лекций. Харьков, Одиссей, 2002

33. Декларация независимости США от 4 июля 1776 г., <http://www.hist.msu.ru/ER/Etext/indpndnc.htm>

34. Конституция Франции., URL: <http://www.hist.msu.ru/ER/Etext/cnst1793.htm>

35. Конституция Соединенных Штатов Америки 1787 г., <http://www.hist.msu.ru/ER/Etext/cnstUS.htm>

36. Послание Президента Российской Федерации Федеральному Собранию Российской Федерации от 2007 года
Послание Президента России Владимира Путина Федеральному Собранию РФ // РГ. № 18, 12.04. 2007г.

37. Словарь иностранных слов. М.: Русский язык, 1989

38. Konstitutsii gosudarstv (stran) mira,

<http://worldconstitutions.ru/>

39. Ermanno Vitale. Costituzione e ius resistendi // Quaderno di storia contemporanea. 2010. F. 47

40. Carson McGrath. The Problem with our Bipartisan System, Jan 8, 2016 ([http:// theodysseyonline.com/umass/problem-with-bipartisan-system/188839](http://theodysseyonline.com/umass/problem-with-bipartisan-system/188839))

41. Coblenz M., The Two-party System is Destroying America, January 28, 2016 <http://thehill.com/blogs/congress-blog/politics/267222-the-two-party-system-isdestroying-america>

42. Mainwaring S., Presidentialism, Multiparty Systems, and Democracy: the Difficult Equation, September 1990, <https://www3.nd.edu/~kellogg/publications/workingpapers/WPS/144.pdf>

43. Electoral Systems and Democracy, ed. by Diamond L., Plattner F. M., The John Hopkins University Press. Baltimore, 2006

44. Manasyan A. The Two-Party Political System and Perspectives of Its Development in the Republic of Armenia // Studia Politologiczne (Political Science Studies), N 44, published by the Institute of Political Science of Warsaw University, Warsaw, 2017

45. Report on Setting minimum standards for electoral systems in order to offer basis for free and fair elections // Committee on Political Affairs and Democracy, Parliamentary Assembly of the Council of Europe, Rapporteur: Mr Rik DAEMS, Belgium, ALDE, <https://pace.coe.int/en/files/28318/html>

46. Using International Election Standards // Council of Europe Handbook for Civil Society Organizations, <https://rm.coe.int/16806c791a>,

47. CDL-AD(2004)003, Report on Electoral Systems: Overview of Available Solutions and Selection Criteria // Adopted by the Venice Commission at its 57th Plenary Session (Venice, 12-13 December 2003)

48. CDL-AD(2016)019 Armenia – Joint Opinion on the draft electoral code as of 18 April 2016

49.CDL-AD(2014)003 Joint Opinion on the draft Law amending the electoral legislation of Moldova

50.CDL-AD(2012)012 Joint Opinion on the Act on the Elections of Members of Parliament of Hungary

51.CDL-AD(2011)043 - Joint opinion on the draft election code of Georgia

52.CDL-AD(2011)037 Venice Commission and OSCE/ODIHR Joint opinion on the draft law on election of people's deputies of Ukraine

53.CDL-PI (2019)001 Compilation of Venice Commission Opinions and Reports concerning Electoral Systems // European Commission for Democracy through Law (Venice Commission), Strasbourg, 18 March 2019

54.CDL-AD (2007)046 - Opinion on the Electoral Law of the United Kingdom

55.CDL-PI (2021)006 - Joint urgent opinion on amendments to the Electoral Code and related legislation, Armenia // European Commission for Democracy through Law (Venice Commission), OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR), Strasbourg, Warsaw, 21 April 2021

56.Ruhl. J. B., *Complexity theory as a paradigm for the dynamical law-and-society system: A wake-up call for legal reductionism and the modern administrative state*, Duke Law Journal, volume 45, 1996a, 849-928

57.Jamie Murray, *Complexity Theory & Socio-Legal Studies*, Liverpool Law Rev (2008) 29:227–246

58.Manasyan A., Simonyan T., *Legal Symbolism and Constitutional Policy in Contemporary Reality of Changes*, Studia Politologiczne (Political Science Studies), published by the Institute of Political Science of Warsaw University, Warsaw, 2021, Vol, 61, 152-185

59.Schattschneider E.E., *Party Government*. New York: Holt, Rinehart and Winston, 1942

60.Ingrid van Biezen, *How Political Parties Shape*

Democracy, UC Irvine: Center for the Study of Democracy. 2004, <https://escholarship.org/uc/item/17p1m0dx>

61. Tillie J.N., *Challenges to democratic representation*, Course on Political Science, Amsterdam Institute for Social Science Research (AISSR)

62. David Goldman, *Historical Aspects of Globalization and Law*, in Catherine Dauvergne (ed), *Jurisprudence for an Interconnected Globe*, Aldershot, Ashgate, 2003

63. Jean-Bernard Auby, *Globalization, Law and the State*, Oxford and Portland, Oregon, 2017

64. Easton, D., *A Systems Analysis of Political Life*. New York: Wiley, 1965

65. Cas Mudde, *Populist Radical Right Parties in Europe*, Cambridge: Cambridge University Press, 2007

66. Bonikowski B., *Three Lessons of Contemporary Populism in Europe and the United States*, *The Brown Journal of World Affairs*, Fall/Winter, Volume XXIII, Issues I, 2016

67. Daniel Michael Weijers, *Hedonism and Happiness in Theory and Practice*, Victoria University of Wellington, 2012

68. Ole Martin Moen, *Hedonism Before Bentham*, UCL Bentham Project, *Journal of Bentham Studies*, Vol. 17, 2015

69. Dalton, R. J., *Democratic Challenges, Democratic Choices*. Oxford: University Press, 2004

70. Simonyan T.V., *Controlled Reality and the Fiction of Freedom: Synergy Algorithms*, Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018

71. Alvin Toffler, *The Third Way*, Random House Value Publishing, 1987

72. Landshut, Volkssouveränität und öffentliche Meinung, in *Festschrift für Laun*, Hamburg 1953

73. Bryan A. Garner (ed.), *Black's Law Dictionary*. 7th ed., St. Paul, Minn.: West Publishing Co., 1979

74. Steven H. Gifis, *Law Dictionary*. 4th ed. New York: Barron's

Educational Services, 1996

75. William A. Galston, *An old debate renewed: the politics of the public interest*, Journal of the American Academy of Arts and Science, Fall, 2007, pp. 10-19

76. Mason J in *Commonwealth of Australia v John Fairfax and Sons Ltd & ors* (1981) ALJR 45

77. Chris Wheeler, *The Public Interest we know it's important, but do we know what it means*, AIAL Forum No. 48, 2006, 12-25

78. http://www.topnews.ru/news_id_55041.html

79. <http://mir-politika.ru/2649-egipet-konstitucionnyy-referendum-raskolol-stranu.html>.

80. Marsavelski, A. (2013) "The Crime of Terrorism and the Right of Revolution in International Law" Connecticut Journal of International Law, Vol. 28


Հանձնվել է տպագրության 6.12.2022:

Չափսը՝ 60x84^{1/16}:

Ծավալը՝ 11 տպ. մամուլ:

Քանակը՝ 100 օրինակ:

ISBN 978-9939-887-29-6



9 789939 887296